

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿԱՊԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ**

**ՀՀ ԳԱՎ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿԱՊԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ**

**Երևան**

**ՀՀ ԳԱՎ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
2010**

ՀՏԴ 339  
ԳՄԴ 65.9(2)8  
Հ 247

Երաշխավորված է հրատարակության ՀՀ ԳԱԱ  
Ս. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հեղինակներ՝

**Թորոս Թորոսյան,  
Գրիգոր Հայրապետյան,  
Դիանա Գալոյան,  
Կարապետ Առաքելյան,  
Նարեկ Հովականյան**

Գիտական խմբագիր՝  
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**Վլադիմիր Հարությունյան**

Թեմայի ղեկավար և  
մասնագիտական խմբագիր՝  
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**Թորոս Թորոսյան**

Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական  
կապերի կատարելագործումը / Թ. Թորոսյան, Գ. Հայրապետյան,  
Հ 247 Դ. Գալոյան, Կ. Առաքելյան, Ն. Հովականյան; Գիտ. խմբ.՝  
Վ. Հարությունյան; Թեմ. ղեկ. և մասն. խմբ.՝ Թ. Թորոսյան.-  
Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 178 էջ:

Աշխատանքում դիտարկվում են Եվրամիության ստեղծման և ձևավորման գործընթացները, ուսումնասիրվում են Եվրամիության երկրների հետ Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական և արժույթաֆինանսական կապերը, և ցույց են տրվում դրանց բարելավման ու զարգացման հեռանկարները: Հետազոտության մեջ հաշվի է առնվում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը:

Գիրքը նախատեսվում է գիտաշխատողների, գործարարների, դասախոսների, ասպիրանտների, մագիստրանտների և բակալավրիատի ուսանողների համար:

ՀՏԴ 339  
ԳՄԴ 65.9(2)8

ISBN 978-5-8080-0861-8

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2010թ.

**THE ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
ECONOMICS INSTITUTE**

**IMPROVEMENT OF TRADE-ECONOMIC  
RELATIONS BETWEEN ARMENIA AND  
THE EUROPEAN UNION**

**Yerevan  
NAS RA "Gitutyun"  
2010**

## Բաժինների հեղինակներ`

Ներածություն	տ. գ. դ., պրոֆ.	Թորոս Թորոսյան
Գլուխ 1	տ. գ. դ., պրոֆ.	Թորոս Թորոսյան
Գլուխ 2	տ. գ. թ.	Գրիգոր Հայրապետյան,
	տ. գ. թ. դոցենտ	Դիանա Գալոյան
Գլուխ 3	տ. գ. թ.	Գրիգոր Հայրապետյան
Գլուխ 4	տ. գ. թ., դոցենտ	Դիանա Գալոյան
Գլուխ 5	տ. գ. թ.	Կարապետ Առաքելյան,
Գլուխ 6	տ. գ. թ.	Նարեկ Հովականյան,
Վերջաբան	տ. գ. դ., պրոֆ.	Թորոս Թորոսյան

**Dr. Vladimir Harutyunyan, Scientific editor**

**Dr. Toros Torosyan, Team supervisor and Specialist editor**

### Chapter Authors:

Introduction	Toros Torosyan, professor, Doctor of Economics,
Chapter 1	Toros Torosyan, professor, Doctor of Economics,
Chapter 2	Grigor Hayrapetyan, Candidate of Economic Sciences Diana Galoyan, Candidate of Economic Sciences, associated professor
Chapter 3	Grigor Hayrapetyan, Candidate of Economic Sciences
Chapter 4	Diana Galoyan, Candidate of Economic Sciences, associated professor
Chapter 5	Karapet Araqelyan, Candidate of Economic Sciences
Chapter 6	Narek Hovakanyan, Candidate of Economic Sciences
Conclusion	Toros Torosyan, Doctor of Economics, professor

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>Ներածություն</b> .....	<b>7</b>
<b>Գլուխ 1.</b> Եվրամիության երկրների և Հայաստանի միջև տնտեսական կապերի նպատակաուղղվածությունները .....	<b>15</b>
<b>Գլուխ 2.</b> Հայաստանի և Եվրամիության երկրների առևտրատնտեսական կապերի օրինաչափությունները և միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամը .....	<b>37</b>
<b>Գլուխ 3.</b> Հայաստանի առևտրական կապերը Եվրամիության հին անդամ (15) երկրների հետ .....	<b>61</b>
<b>Գլուխ 4.</b> Հայաստանի առևտուրը Եվրամիության նոր անդամ (12) Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետ .....	<b>79</b>
<b>Գլուխ 5.</b> Եվրամիության արժութային համակարգի ձևավորումն ու զարգացումը և Հայաստանի դրամը .....	<b>90</b>
<b>Գլուխ 6.</b> Օտարերկրյա ուղղակի ներդրումները Եվրամիության երկրներում և Հայաստանում .....	<b>120</b>
<b>Վերջաբան</b> .....	<b>136</b>
<b>Հավելվածներ</b> .....	<b>160</b>

## **Contents**

<b>Introduction</b> .....	<b>12</b>
<b>Chapter 1.</b> The importance of economic relations between Armenia and the European Union .....	<b>15</b>
<b>Chapter 2.</b> The appropriateness of the Armenia and European Union trade-economic relations under current world financial and economic crises .....	<b>37</b>
<b>Chapter 3.</b> Trade relations between Armenia and original members of European Union (15) .....	<b>61</b>
<b>Chapter 4.</b> Trade between Armenia and new members of European Union (12) from Central and Eastern Europe .....	<b>79</b>
<b>Chapter 5.</b> The establishment and development of European Union currency system and the Armenian dram .....	<b>90</b>
<b>Chapter 6.</b> Foreign direct investments in European Union countries and in Armenia .....	<b>120</b>
<b>Conclusion</b> .....	<b>150</b>
<b>Appendix</b> .....	<b>160</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ամբողջական և լիիրավ ինտեգրումը եվրոպական և համաշխարհային տնտեսությանը բարդ և դժվարին գործընթաց է, որի իրականացումը, նույնիսկ քաղաքական կամքի դրսևորման դեպքում, կարող է տասնամյակներ տևել: Համագործակցությունը պետք է կայանա ՀՀ-ի համար բարեփոխումների և շուկայական տնտեսությանն առավել ճիշտ և գրագետ անցնելու ճանապարհով, և այն բոլոր բացթողումներն ու սխալները, որոնք եղան անկախությունից հետո, փորձի բացակայության և իրավիճակի նախատիպը չունենալու պատճառով, պետք է կարգավորվեն, որի համար անհրաժեշտ են՝ ազատականացված տնտեսություն, քաղաքական և տնտեսական կայուն պայմաններ, շուկայական սկզբունքներ ունեցող մաքսային և հարկային օրենսդրություն, ինչպես նաև փոխշահավետ տնտեսական պայմաններ՝ ինչպես առանձին ձեռնարկությունների, այնպես էլ ընդհանուր մակրո մակարդակով:

Խորհրդային կայսրության փլուզումից հետո հակամարտությունները սրվեցին մի շարք տարածաշրջաններում, հատկապես Հարավկովկասյան հանրապետություններում, և գոյություն ունեցող էթնիկ հակասությունները վերածվեցին ազգամիջյան պատերազմների, որն էլ հիմք հանդիսացավ հարավկովկասյան տարածաշրջանի ապակենտրոնացման համար՝ մեծապես խանգարելով այդ հանրապետությունների բնական զարգացմանն ու տարածաշրջանային ինտեգրմանը: Պետք է հաշվի առնել նաև, որ տարածաշրջանային ինտեգրման հիմնախնդիրները չեն կարող լուծվել միայն տվյալ տարածաշրջանի երկրների (հատկապես զարգացող և անցումային տնտեսությունների) ղեկավարությունների քաղաքական կամքով, քանի որ այդ հիմնախնդիրները և դրանց լուծումները պետք է համապատասխանեցվեն տվյալ տարածաշրջանում որոշակի շահեր ունեցող գերտերությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Հարավային Կովկասի երկրների պարագայում, հատկապես Հայաստան-Ադրբեյջան շրջանակներում, ակնհայտորեն տեսանելի

են վերը նշված բացասական երևույթները, քանզի այսօր Հարավային Կովկասը փաստորեն հայտնվել է տարածայնությունների կիզակետում. մի կողմից տարածաշրջանի երկրների միջև տարածքային հակասությունների հիման վրա ստեղծվել է պատերազմական իրավիճակ, մյուս կողմից՝ գերտերությունների շահերի հակասությունը բացասական ազդեցություն է թողնում խաղաղ ճանապարհով հակամարտությունների լուծման վրա և դրանք դարձնում ավելի անլուծելի: Եթե Եվրամիության (ԵՄ) վերջին ընդլայնման արդյունքում Ռուսաստանն արդեն սահմանակից է ԵՄ-ին, ապա Հարավային Կովկասի պետությունները, մասնավորապես Հայաստանը, սահմանակից կդառնա ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունից հետո: Այսպիսով, հարավկովկասյան տարածաշրջանի կայունությունը եվրոպական անվտանգության խնդիրներից է, ինչը ենթադրում է, որ Եվրամիությունը ջանքեր չի խնայի, որպեսզի բոլոր տարածայնություններն այստեղ լուծվեն խաղաղ ճանապարհով, և տարածաշրջանը գործի որպես մեկ ինտեգրված ամբողջություն, ինչը այն կդարձնի բոլոր առումներով առավել հրապուրիչ: Վերջապես մենք ինքներս պետք է հասկանանք, որ առանց լուծելու տարածաշրջանային խնդիրները հնարավոր չէ արդյունավետ մասնակցություն ունենալ համաշխարհային և եվրոպական ինտեգրման ակտիվ գործընթացներին. մեր տարածաշրջանի առումով դա ավելի ակնհայտ է, քանի որ այն որպես ամբողջություն միայն կարող է ակտիվ դեր ունենալ, որպես հարավ-հյուսիս, արևմուտք-արևելք տնտեսական և աշխարհաքաղաքական կարևոր խաչմերուկ:

Ի՞նչ կարող է տալ մեզ Եվրամիություն-Հայաստան տնտեսական հարաբերությունների զարգացումը, և այժմ ի՞նչ փուլում է գտնվում այն, ի՞նչ խոչընդոտող կան խթանող գործոններ կան այս ճանապարհին: Այս խնդիրը վերջին տասնամյակում սկսել է ավելի շատ մասնագետների ուսումնասիրության առարկա դառնալ, որը կապված է ինչպես մեր տարածաշրջանում այսօր տեղի ունեցող տնտեսական-քաղաքական նոր գործընթացների և նոր իրողությունների, այնպես էլ համաշխարհային բեմահարթակում Եվրամիության դերի և ազդեցության մեծացման հետ:

Հայաստան-Եվրամիություն տնտեսական ինտեգրման կապերի զարգացման տեսանկյունից անչափ կարևոր է երկու կողմերի միջև առևտրի և օտարերկրյա կապիտալ ներդրումների իրականացման խթանումը, ինչն արդիական խնդիր է հատկապես

Հայաստանի համար, քանզի այդ ոլորտներում ինտեգրումը ԵՄ-ի նման զարգացած ինտեգրման կառույցին, ներդրումների աճի, գիտելիքների ու տեխնոլոգիաների ձեռքբերման հետ մեկտեղ հնարավորություն կտա յուրացնելու այն արժեքները, բիզնեսի իրականացման ու կազմակերպման ձևերը, մրցակցային բարոյականությունն ու կազմակերպվածությունը, որոնք յուրահատուկ են եվրոպական քաղաքականությանը: Դա իր հերթին հնարավորություն կտա կրճատելու կոռուպցիան, բարելավելու պետական ու կորպորատիվ կառավարումը և բիզնեսի միջավայրը, կօզնի ՀՀ-ին չեզոքացնել ներքին շուկայի սահմանափակության գործոնը, կմեծացնի ներմուծման ու գիտելիքների, տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները՝ միաժամանակ մեծացնելով նաև սեփական մրցունակ գիտելիքների ու տեխնոլոգիաների արտադրության հնարավորությունները: Որքան բարձր է ինտեգրման աստիճանը, այնքան ավելի մեծ են այդ երկրի տնտեսական օգուտները:

Հետխորհրդային տարածաշրջանում աճի հիմնական գործոններից է արտահանման խթանումը, քանզի միայն ներքին պահանջարկի խթանմամբ հնարավոր չէ հասնել տնտեսական զարգացման զգալի արդյունքների: Միևնույն ժամանակ տնտեսական աճի խնդրի լուծումը պահանջում է առաջարկի խթանում, արտաքին առևտրային հարաբերությունների ազատականացում, առևտրային նոր գործընկերների ձեռքբերում և այլն: Ավելին, առանց առևտրային հարաբերությունների խթանման և խորացման հնարավոր չէ պատկերացնել ինտեգրման գործընթացների զարգացումը երկրների միջև: Այս առումով ուշագրավ են Եվրամիության հետ ՀՀ ունեցած առևտրաշրջանառության ծավալների ուսումնասիրությունը և դրա հիման վրա ՀՀ-ի և ԵՄ-ի միջև գոյություն ունեցող առևտրի հիմնական օրինաչափությունների դուրսբերումը, թերությունների վերհանումը և դրա հիման վրա զարգացման հեռանկարների ձևավորումը:

ԵՄ-ի ինտեգրման գործընթացում լիիրավ ներգրավվելու տեսանկյունից անդամակցման թեկնածու երկրների համար կարևոր են տնտեսական զարգացման հետևյալ չափանիշները՝ թեկնածու երկրների ՀՆԱ-ի աճի տեմպերը, բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, բյուջեի դեֆիցիտը, սղաճի մակարդակը, զբաղվածության մակարդակը, ընթացիկ վճարումների հաշվեկշիռը, օտարերկրյա ուղղակի ներդրումները, շուկայական տնտեսական իրավական և

ինստիտուցիոնալ հիմքը, սեփականաշնորհումը, ֆինանսական հատվածը, առևտրային ինտեգրումը և ֆինանսական ինտեգրումը: Պետության հաջող անդամակցությունը հատկապես ենթադրում է Մասսորիխտայան համաձայնագրի այնպիսի չափանիշների կատարում, ինչպիսիք են՝ գների կայունություն, բյուջետային դեֆիցիտի ցածր մակարդակ, փոքր պետական պարտք: Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների հետ համեմատությունները անհրաժեշտ են պարզելու համար, թե որքանով են ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները համապատասխանում ԵՄ չափանիշներին: Մեր երկիրը չպետք է ետ մնա այլ երկրներից իր տնտեսական զարգացմամբ, որպեսզի կարողանա դիմակայել համաշխարհային շուկայի մրցակցությանը: Ներկայումս հիմնական փոփոխությունները, որոնք կօգնեն հասնել տնտեսական զարգացման մակարդակին, հետևյալն են՝ կառավարել ներմուծման և արտահանման հոսքը: Բացի այդ եվրոպական շուկայում մրցակցությունը հայկական արտադրողներից պահանջում է կատարելագործել արտադրությունը և բարելավել թողարկվող արտադրանքի որակը, նվազեցնել ինֆլացիայի մակարդակը, արժուքային փոխարժեքի տատանումները:

ՀՀ տնտեսությունում իրականացված վերափոխությունները հայկական արտադրողներին թույլ կտան ոչ միայն մրցակցել միջազգային ապրանքների և ծառայությունների շուկայում, ավելի սերտ ֆինանսական հարաբերություններ հաստատել եվրոպական գործընկերների հետ, այլև կարագացնեն տնտեսության զարգացումը, որն իր հերթին կհանգեցնի բնակչության կենսամակարդակի աճին: Ներկայումս սեփականաշնորհումը Հայաստանում հիմնականում ավարտված է, գործարար և ներդրումային ոլորտը էականորեն բարելավվել է, ինչպես նաև հաստատվել է մակրոտնտեսական կայունությունը: Գների կայունության, հանրային պարտքի և ֆինանսական դեֆիցիտի մակարդակով ՀՀ-ն համեմատելի է ԵՄ-ին անդամակցող այլ երկրների հետ, չնայած որ ժամանակակից համաշխարհային ճգնաժամը իր ազդեցությունն է թողել և որոշակի լուրջ փոփոխություններ է մտցրել այս գործընթացում:

Եվրոպական կառույցներին ինտեգրվելը Հայաստանի համար եղել և շարունակում է մնալ որպես արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Սա ակնառու կերպով արտացոլվում է Եվրամիության, Եվրախորհրդի (ԵԽ) և այլ եվրոպական

կազմակերպությունների, ինչպես նաև տարածաշրջանի երկրների հետ Հայաստանի երկկողմանի հարաբերություններում:

Տվյալ աշխատանքում փորձ է արվել գնահատել ՀՀ առևտրատնտեսական և արժույթաֆինանսական հարաբերությունների վիճակը ԵՄ երկրների հետ, ինչը կարող է հիմք ծառայել հետագա գիտահետազոտական աշխատանքների և ուսումնասիրությունների համար: Այս աշխատանքում ուսումնասիրվել են ԵՄ երկրների հետ ՀՀ առևտրատնտեսական կապերի հետագա բարելավման ու կատարելագործման ուղղությունները: Նշված խնդիրների ուսումնասիրությունը կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության՝ Եվրամիության անդամակցության տնտեսական նախադրյալների ձևավորման ու անդամակցությունից բխող հետևանքների բացահայտման առումով:

տ. գ. դ., պրոֆ. **Թ. Շ. Թորոսյան**

## **INTRODUCTION**

The integration of the Republic of Armenia (RA) to the European Union (EU) and world economy is a difficult and complicated process. It will take many years even given the present political will. The process will require internal reforms compatible with EU requirements and an increased understanding of market relationships for the RA, and mistakes which took place after independence must be corrected. A liberalized economy, economic and political stability, market economy based tax, and custom legislation, as well as beneficial economic conditions both for private companies and the public sector in general will be required.

After the collapse of the USSR, a number of conflicts occurred in different republics, especially in the South Caucasus, in some cases, turning into national wars. It led to decentralization, which in its turn hindered development and regional integration of republics located in this region. It has to be mentioned that the challenges of regional integration could not be solved just by the political will of the governments (especially in developing countries with transition economies), as those problems and their solutions must be reconciled with the interests of superpowers and international organizations.

A vivid example of the above mentioned situation is Armenia and Azerbaijan. Today the South Caucasus appears in the centre of a split. On one side a military situation has occurred between two countries of this region on the basis of territorial inconsistency and on the other side the clash of interests of world superpowers negatively influences the possible peaceful solution of conflicts and makes them more unsolvable. After the last enlargement of the EU, Russia became a bordering country to the EU. The South Caucasus republics, particularly Armenia, will become bordering countries only after Turkey's membership. Thus the stability of the South Caucasus region is important for European security, which means that EU will do everything for a peaceful solution of all conflicts in this region, which will also make the region more integrated and attractive.

Finally it is obvious that participation into the integration process of the world economy and the EU is not possible without the solution of

regional conflicts. It is very important for our region as well, because as a single entity it can play an active role in the north-south-east-west economic and geopolitical crossroads.

What could be the outcomes of an EU-RA economic relations development? At which stage is it now? What obstacles and stimulating factors are there in that way? During the last decades these issues have become the subject of studies by many specialists connected both with the economic and political processes taking place in our region and the extension of the role and influence of the EU in the world economy.

From the point of EU-RA economic integration development, it is very important to promote trade and investments between the two sides. Lack of economic relations is a problem particularly for Armenia, as integration in this area with the EU, besides providing investment growth opportunities and the acquisition of technological knowledge, will also allow the adoption of European community values. These opportunities will follow: to reduce corruption, to improve the public sector and corporate management, to improve the business environment, to help the RA to change the limitations in the national market, to increase the opportunity of utilization of science and technology, and at the same time to increase the prospects of producing scientific and technological products. The more integration attained, the higher the economic benefits will be.

In the post-Soviet region, the main strategy for economic growth is promotion of exports, as stimulating internal demand alone will not create the conditions for essential economic results. At the same time, economic growth requires stimulation of the supply chain, liberalization of external trade relations, attainment of new trade partners, etc. Moreover, without promoting and increasing trade relationships, it is impossible to imagine the development of integration processes between countries. For this reason, it is important to assess the trade relations between the RA and the EU to find the important advantages and disadvantages of trade, and to form the main development perspectives based on this information.

To be fully involved in the EU integration processes, potential member-countries must satisfy factors related to GDP growth rates, GDP per capita, budget deficits, the level of inflation, the level of employment, foreign direct investments, balance of payments, privatization, market economic-legislative and institutional base, the financial sector, trade, and financial integration. Successful membership

of a country requires meeting the Maastricht agreement criteria such as stability of prices, low level of budget deficit and a small state debt. To find out if the macroeconomic criteria of Armenia meets the requirements of the EU, it is necessary to compare the economies of the RA and EU member countries. To withstand the world competition, Armenia must not stand behind other countries in its economic development level. The main challenge, which will help to reach the desired economic development level, is the management of import and export flows. The competition in the European market demands that Armenian producers improve their production processes and the quality of products, and that the state manages the level of inflation and the currency rate variations.

The reforms of the Armenian economy will allow Armenian producers not only to compete in international goods markets and to form more stable financial relations with European partners, but also will hasten economic development and the growth of living standards. The privatization process in Armenia is over mostly. The business and investment sphere has essentially improved and macroeconomic stability has been achieved. The RA is comparable with EU member countries with its indicators of price stability, national debt and financial deficit level, but the current world financial and economic crisis has seriously affected these indicators leading to essential changes in them.

The integration of the RA to European structures was, and continues to be, one of the main directions of foreign policy for the Armenian Government. This is reflected in bilateral relations of the RA with the EU, with the Council of Europe, with other European organizations, as well as with the regional countries.

In this research, the present situation of trade-economic and monetary relations of the RA and EU members is evaluated. This information can serve as a base for further scientific research. Ways to further improve the RA and EU trade and economic relations have been outlined as well. The analysis of this information is important for the creation of economic prerequisites for membership of Armenia to the EU and for revealing the on-going consequences of not moving towards membership.

**Toros Torosyan, Professor, Doctor of Economics**

## ԳԼՈՒԽ 1

### **ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԶԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԵՊԱՏԱԿԱՌՈՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

---

---

Եվրամիության հետ Հայաստանի համագործակցությունը սկիզբ առավ անկախությունից հետո ԱՊՀ երկրներին տրվող տեխնիկական օգնության (Technical Assistance to the Commonwealth of Independent States, TACIS) ծրագրի և ԵՄ երկրների հետ Հայաստանի երկկողմ հարաբերությունների զարգացման շրջանակներում: Հարկ է նշել, որ ԵՄ երկրների շրջանակներում ԵՄ հիմնադիր երկրներից Հայաստանը բավական սերտ կապեր ունի Ֆրանսիայի հետ, որտեղ բնակվում է ամենամեծ թվով սփյուռքահայությունը Եվրոպայում, ինչպես նաև Գերմանիայի, Բելգիայի հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում Եվրոպան մարդկային մեծ կորուստներ կրեց, առաջացան տնտեսական ճգնաժամ ու քաղաքական անկայունություն: 1950թ. Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոբերտ Շումանն առաջարկեց միավորել Արևմտյան Եվրոպայի ածուխ և պողպատ արտադրող ձեռնարկությունները: Բանակցությունների արդյունքում 1951թ. ստեղծվեց Եվրոպայի ածխի և պողպատի համայնքը (ECSC), որն ուներ վեց անդամ՝ Բելգիա, Արևմտյան Գերմանիա, Լյուքսեմբուրգ, Ֆրանսիա, Իտալիա և Նիդեռլանդներ:

1957թ. վեց պետություններ կնքեցին Հռոմի համաձայնագիրը՝ հիմնադրելով Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքը (EURATOM) և Եվրոպական տնտեսական համայնքը (EEC): Անդամ պետությունները որոշում կայացրին վերացնել միմյանց միջև առկա առևտրի խոչընդոտները և ձևավորել «ընդհանուր շուկա»: 1967թ. Եվրոպական երեք համայնքների ինստիտուտները միաձուլվեցին՝ ստեղծելով միասնական Հանձնաժողով և միաս-

նական Նախարարների խորհուրդ, ինչպես նաև Եվրոպական խորհրդարան:

1992թ. կնքված Մասստրիխտի համաձայնագրով հաստատվեցին անդամ պետությունների կառավարությունների միջև համագործակցության նոր ձևեր այնպիսի ոլորտներում, ինչպիսին են օրինակ պաշտպանությունը և արդարադատության ու ներքին գործերի ոլորտը: Առկա «համայնքային» համակարգին ավելացնելով միջկառավարական համագործակցությունը՝ Մասստրիխտի համաձայնագիրը ստեղծեց Եվրոպական միությունը՝ ԵՄ (EU): ԵՄ անդամ պետությունները մշակել են միասնական և ընդհանուր քաղաքականություն տարբեր ոլորտների և ճյուղերի վերաբերյալ՝ գյուղատնտեսությունից մինչև մշակույթ, սպառողների իրավունքներից մինչև մրցակցություն, բնապահպանության ու էներգետիկայի ոլորտից մինչև տրանսպորտ ու առևտուր:

Անդամ պետությունների համար հեշտ առաջադրանք չէր առևտրի խոչընդոտները վերացնելն ու միասնական շուկայի անցնելը, ինչն ապահովում էր ապրանքների, ծառայությունների, մարդկանց և կապիտալի ազատ տեղաշարժը:

1992թ. ԵՄ-ն որոշում կայացրեց Տնտեսական և արժույթային միության (EMU) ստեղծման մասին, ինչը ենթադրում էր մեկ միասնական եվրոպական արժույթի ներմուծում՝ Եվրոպական կենտրոնական բանկի կառավարման ներքո: Միասնական արժույթը՝ եվրոն, իրականություն դարձավ 2002 թվականի հունվարի 1-ին, երբ եվրո թղթադրամները և մետաղադրամները փոխարինեցին ազգային արժույթին ԵՄ 15 երկրներից 12-ում (Բելգիա, Գերմանիա, Զուլմաստան, Իսպանիա, Ֆրանսիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Ավստրիա, Պորտուգալիա և Ֆինլանդիա):

ԵՄ-ն աստիճանաբար ընդլայնվում էր: Դանիան, Իռլանդիան և Միացյալ Թագավորությունը միացան ԵՄ-ին 1973թ.: Նրանց օրինակին հետևեցին Զուլմաստանը (1981), Իսպանիան ու Պորտուգալիան (1986), Ավստրիան, Ֆինլանդիան ու Շվեդիան (1995): 2004թ. մայիսին ԵՄ-ն ընդունեց տասը նոր անդամ պետություններ (Կիպրոս, Չեխիա, Էստոնիա, Զուլմաստան, Լատվիա, Լիտվա, Մալթա, Լեհաստան, Սլովակիա և Սլովենիա): Բուլղարիան ու Ռումինիան միացել են ԵՄ-ին 2007թ. հունվարի 1-ից, իսկ թեկնածու երկրների շարքում է Թուրքիան:

Նախքան Եվրամիությանն ինտեգրվելը նոր անդամակցած եվրոպական երկրներն անցել են երկար և դժվարին ճանապարհ: Լինելով թեկնածու երկրներ՝ նրանք պետք է ապահովեին որոշակի չափանիշների բավարարումը, այն է՝ կայուն ինստիտուտներ, որոնք երաշխավորում են ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, գործող շուկայական տնտեսություն, որը կարող է դիմակայել Միության ներսում առկա մրցակցային ճնշմանն ու շուկայական ուժերին, անդամության հետ կապված պարտավորություններ ստանձնելու կարողությունը, ներառյալ Միության նպատակներին սատարելը:

Թեև ԵՄ-ին անդամակցել ձգտող բոլոր երկրների համար սահմանված չափանիշները նույնն էին, այնուամենայնիվ յուրաքանչյուր թեկնածու երկիր ուներ իր առանձնահատկությունները՝ կապված տնտեսության և ենթակառուցվածքների, քաղաքական իրավիճակի, մշակույթի հետ: Թեկնածու երկրների եվրոինտեգրման գործընթացում կիրառվող մոտեցումները տարբերվում էին միմյանցից:

Այսպիսով, ԵՄ հիմնական պատմական փաստերը հետևյալն են. 1948-ին ձևավորվեց BENELUX Սաքսային միությունը, 1951՝ Աժխի և պողպատի եվրոպական համայնքը, 1957՝ Եվրոպական տնտեսական համայնքը (Հռոմի համաձայնագիր), 1967՝ Եվրոպական համայնքը, 1973՝ Եվրոպական համայնքի ընդլայնում (Անգլիա, Իռլանդիա, Դանիա), 1991՝ Եվրոպական միության համաձայնագիրը (Մասստրիխտի համաձայնագիր), 1997՝ Ամստերդամի համաձայնագիրը, 2001՝ Նիցցայի համաձայնագիրը, 2002՝ Եվրոյի մուտքը, 2004՝ ԵՄ-ի ընդլայնում (10 անդամներ), 2007՝ ևս 2 երկիր:

Ընդ որում մինչև եվրոյի հանդես գալը Եվրոպական համայնքի հաշվարկային միավորը էքյուն էր: Էքյուն ստեղծվեց որպես ներքին հաշվարկային միավոր 1979թ. մարտի 13-ին: Այն ուներ ISO 4217 ստանդարտի XEU արժույթի կոդը: 1999թ. հունվարի 1-ին 1 եվրո = 1 էքյու փոխարժեքով եվրոն (կոդ EUR) փոխարինեց էքյուն: Ի տարբերություն էքյունի՝ եվրոն կանխիկ արժույթ է, սակայն ոչ բոլոր անդամ-երկրներն են օգտագործում այն:

ԵՄ անդամ շատ պետություններ ջանքեր էին գործադրում իրականացնելու Եվրոպական արժույթային միավորին (ԵԱՄ) միա-

նալու պահանջները՝ ընդունելով արժույթի ընդհանուր միավոր՝ եվրոն:

Այս պահանջները բավականին խիստ էին՝ երկրի սղաճի մակարդակը չպետք է գերազանցեր ամենացածր սղաճի մակարդակով ԵՄ-ի անդամ երեք երկրների միջին սղաճի մակարդակի 1,5 տոկոսը, երկրի բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցեր համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 3 տոկոսը, իսկ երկրի պետական պարտքը չպետք է գերազանցեր ՀՆԱ 60 տոկոսը, երկրում երկարաժամկետ տոկոսադրույքը չի կարող 2 տոկոսից ավելի ցուցանիշով գերազանցել ամենացածր տոկոսադրույքով երեք անդամ-երկրների տոկոսադրույքների միջին ցուցանիշը, երկրի արժույթը չպետք է արժեզրկվեր որևէ այլ անդամ երկրի արժույթի նկատմամբ՝ Արժուրթային միության ստեղծմանը նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում:

Եվրոն ընդունած երկրներն էին Ավստրիան, Բելգիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իռլանդիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Պորտուգալիան և Իսպանիան: Անգլիան, Շվեդիան և Դանիան, թեև համապատասխանում էին ԵԱՄ չափանիշներին, որոշեցին չմասնակցել: Հունաստանը հույս ուներ եվրոն ընդունել առաջին ալիքի հետ, սակայն չկարողացավ համապատասխանել անհրաժեշտ չափանիշներին: 1999թ. հունվարի 1-ին այսպես կոչված եվրոյի գոտու մասնակից 11 երկրները սկսեցին եվրոն օգտագործել հաշվապահական նպատակներով և դրամի էլեկտրոնային փոխանցումների համար՝ իրենց ազգային արժույթները կիրառելով մյուս նպատակներով: Հունաստանը եվրոն ընդունեց 2001թ. հունվարին՝ դառնալով եվրոյի գոտու 12-րդ անդամը: 2002թ. ԵԿԲ-ն սկսեց եվրո անվանական մետաղադրամներ և թղթադրամներ թողարկել, և անդամ-երկրների արժույթները դադարեցին օրինական գործարքային միջոց լինել: 2004թ. կազմակերպությանը միացած ԵՄ նոր անդամները պետք է պաշտոնապես եվրոն ընդունեն: Նոր անդամներից մի քանիսը՝ Կիպրոսը, Էստոնիան, Լիտվան և Սլովակիան, հայտարարեցին, որ անմիջապես քայլեր կձեռնարկեն՝ եվրոն ընդունելու համար: Եվրոն ընդունելու համար նոր անդամները պետք է նախ համապատասխանեն ԵԱՄ չափանիշներին: Այնուհետև նրանք պետք է ապացուցեն, որ արժույթը կայուն կմնա հաջորդ երկու տարիների ընթացքում:

ԵՄ անդամակցությունը ընդհանուր առմամբ բարդ և ընդարձակ գործընթաց է: 1993թ. Եվրոպական միության խորհուրդը Կոպենհագենում դրեց ներկայիս ընդլայնման գործընթացի հիմքը՝ հայտարարելով՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, որոնք ցանկանում են դառնալ Եվրոպական միության անդամներ, կստանան այդ հնարավորությունը, և սահմանեց անդամակցության նախապայմանները՝ այսպես կոչված Կոպենհագենյան չափանիշները: Կոպենհագենյան չափանիշների շրջանակում անդամակցությունը հավակնորդ երկրից պահանջում է ապահովել ժողովրդավարության, օրենքի իշխանության, մարդու իրավունքների և փոքրամասնությունների պաշտպանության երաշխավոր հաստատությունների կայունություն (քաղաքական չափանիշներ):

1999թ. Ամստերդամի համաձայնագրի ուժի մեջ մտնելուց ի վեր այս պահանջները պահպանվել են որպես սահմանադրական չափանիշներ Եվրոպական միության համաձայնագրում և ամրապնդվել են Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայում, որը հռչակվեց 2000թ. դեկտեմբերին Նիցցայում կայացած Եվրոպական խորհրդի նիստում:

Տնտեսական չափանիշներն են՝ շուկայական տնտեսության առկայություն, ինչպես նաև Միության ներսում մրցակցության ճնշմանը և շուկայի ուժերին դիմակայելու կարողություն: Այս չափանիշները համապատասխանում են 1993թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած Մասստրիխտի համաձայնագրում ամրագրված տնտեսական քաղաքականության հիմնադրույթներին: Բացի այդ կարևոր է անդամակցության պարտավորությունների ստանձնման կարողություն, ներառյալ քաղաքական, տնտեսական և արժույթային միության նպատակների իրականացումը<sup>1</sup>:

Իսկ այժմ կենտրոնանալով ԵՄ և Հայաստանի հարաբերություններին պատմական և վերջիվերջո ԵՄ անդամ դառնալու տեսանկյունից:

1989թ. Եվրոպական համայնքի և ԽՍՀՄ միջև կնքվեց Առևտրի, առևտրի և տնտեսական զարգացման պայմանագիրը: Այս պայմանագրով անուղղակի կերպով հիմք դրվեց ԵՄ-Հայաստան հարաբերություններին:

---

<sup>1</sup> Մանրամասն տես՝ “Եվրոպական միություն՝ համապարփակ նկարագիր”, ծեռնարկ, Երևան, 2006թ.:

1992թ. Եվրոպական համայնքը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: ԵՄ-Հայաստան համագործակցությունը ծնունդ առավ 1991թ. ԽՍՀՄ փլուզումից հետո՝ TACIS ծրագրի շրջանակում: TACIS-ը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներին ուղղված ԵՄ օժանդակության հիմնական գործիքն էր, որն օգնում էր այդ երկրներին շուկայական տնտեսություն կառուցելու և ժողովրդավարությունն ամրապնդելու, օրենքի գերակայությունն ապահովելու և կառավարման կարողությունները զարգացնելու գործընթացներում: TACIS ծրագիրը հիմնականում գործում էր երկկողմանի համագործակցության հիման վրա:

Համագործակցության շրջանակներն են՝ օժանդակություն ինստիտուցիոնալ, իրավական և վարչական բարեփոխումների իրականացմանը, օժանդակություն մասնավոր հատվածին և աջակցություն տնտեսական զարգացման գործընթացին, օժանդակություն անցումային շրջանի սոցիալական հետևանքները հաղթահարելու նպատակով, ենթակառուցվածքների ցանցի զարգացում, բնապահպանության ապահովում և բնական ռեսուրսների կառավարում, գյուղատնտեսության զարգացում:

Բացի նշված ոլորտներից, ԵՄ-ն օժանդակում է նաև ատոմային էներգետիկայի անվտանգությանն ուղղված նախագծերին: Ի լրումն, գոյություն ունեն նաև տարածաշրջանային և բազմակողմ ծրագրեր, որոնք վերաբերում են բնապահպանության, արդարադատության, ներքին գործերի հիմնահարցերին: Պետք է նշել այլ երկրների հետ համագործակցության ծրագրերը, որոնց հիմնական նպատակն է ազատ առևտրի խոչընդոտների վերացումը, ինչպես նաև ուշադրության են արժանի միջսահմանային կտրվածքով բնության աղտոտման դեմ պայքարի հետ կապված համատեղ գործողությունները:

Բացի այդ, այսպես կոչված Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը (ԳՀԳ) Հայաստանի և ԵՄ ու իր անդամ պետությունների միջև կնքված համաձայնագիր է, որը բացի պաշտպանության հիմնահարցերից ընդգրկում է ԵՄ-Հայաստան հարաբերությունների գրեթե ամբողջ համալիրը:

Այն ստորագրվել է 1996 թվականի ապրիլի 22-ին և ուժի մեջ մտել 1999թ. հուլիսի 1-ին: Քանի որ ԳՀԳ-ն առնչվում է ԵՄ և իր անդամ պետությունների իրավասության շրջանակում գտնվող

խնդիրներին, ուստի այն պետք է վավերացվեր յուրաքանչյուր անդամ պետության կողմից անհատապես:

ԵՅ-ն Գործընկերության և համագործակցության համաձայնագրեր է ստորագրել նաև Հայաստանի հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ: 1999թ. հունիսի 22-ին Լյուքսեմբուրգում կայացավ համաժողով ԵՄ և հարավկովկասյան երեք հանրապետությունների միջև:

Համաձայնագիրը հիմք է ստեղծել քաղաքական հիմնախնդիրների, առևտրի և ներդրումների բնագավառում արդյունավետ երկխոսության համար, ինչպես նաև իր ուրույն դերն ունի տարածաշրջանային համագործակցությունն ամրապնդելու մեջ, որը վտանգված է տարածաշրջանում առկա հակամարտություններով: Համաձայնագրի նպատակն է օգնել Հայաստանին և իր հարևաններին Հարավային Կովկասում, կապեր հաստատել Եվրոպայի հետ: Այնուամենայնիվ, համաձայնագրում ընդգծված է, որ համագործակցությունը ԵՄ-ի հետ կարող է հաջող ընթանալ միմիայն այն դեպքում, եթե հարավկովկասյան հանրապետությունները խաղաղ ճանապարհով լուծեն առկա հակամարտությունները:

2004թ. մայիսի 1-ին նոր տասը երկրների անդամակցությամբ Եվրոպայի քաղաքատնտեսությունն արմատական փոփոխությունների ենթարկվեց: Այդ փոփոխություններն ընդհանուր առմամբ վերագրվում են ինչպես նոր անդամակցած երկրներին, այնպես էլ արևելյան և հարավային նոր հարևան երկրներին: Այս նոր հարևան երկրների համար քաղաքականություն սահմանելու համար Եվրոպական հանձնաժողովը (European Commission, EC) ներկայացրեց «Եվրոպական հարևանության քաղաքականություն» (European Neighborhood Policy, ENP) ռազմավարական փաստաթուղթ՝ դրանով իսկ սահմանելով նոր հարևան երկրների հետ հարաբերությունների և ֆինանսական օժանդակության նոր կառուցվածքը:

2004թ. ԵՄ ընդլայնումից հետո նոր հարևան երկրներն էին՝ Ուկրաինան, Բելառուսը, Մոլդովան, Ալժիրը, Եգիպտոսը, Իսրայելը, Հորդանանը, Լիբանանը, Լիբիան, Մարոկկոն, Սիրիան, Թունիսը և Պաղեստինը: Այստեղ հարկ է նշել, որ հատուկ առաջարկով նոր հարևանների շարքին դասվեցին նաև Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը, իսկ Ռուսաստանին տրվեց հատուկ արտոնություններ ունեցող գործընկերոջ կարգավիճակ: Եվրոպական հարևանության

քաղաքականությունը ենթադրում է թույլ տալ այս հարևան երկրներին մասնակցել ԵՄ հիմնական քաղաքականություններին և ծրագրերին և վերջապես ԵՄ միասնական շուկային: Եվրոպական հարևանության քաղաքականության մասնակիցներից սպասվում է, որ վերջնական արդյունքում նրանք պետք է ձևավորեն ԵՄ-ի հետ այնպիսի հարաբերություններ, ինչպես Եվրոպական տնտեսական գոտու (European Economic Area) անդամները՝ Նորվեգիա, Իսլանդիա և Լիխտենշտեյն:

2004թ. հունիսին Հայաստանը (Վրաստանի և Ադրբեջանի հետ միասին) ներառվեց Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ: Եվրահանձնաժողովին առաջարկվեց հաշվետվություն ներկայացնել յուրաքանչյուր երկրի քաղաքական և տնտեսական բարեփոխումների վերաբերյալ: Եվրահանձնաժողովը պատրաստել էր հաշվետվություններ և դրանք ներկայացրել Եվրոպական խորհրդին: 2005թ. մարտին խորհուրդը հաստատեց այդ հաշվետվությունները հարավկովկասյան երեք հանրապետությունների համար: Հիշյալ հաշվետվությունները հիմք են ստեղծում այդ երկրների համար Գործողությունների ծրագրի վերաբերյալ առաջարկություններ անելու առումով: Հանձնաժողովը գնահատում է Հայաստանի և ԵՄ-ի միջև երկկողմ հարաբերությունների վիճակը, ԳՀՀ կատարման առաջընթացը, Հարևանության քաղաքականության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում առկա խնդիրները: Դրանց շարքում են՝ ժողովրդավարության վրա հիմնված քաղաքական ինստիտուտների զարգացման գործընթացը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները, տարածաշրջանային կայունությունը և արդարադատության ու ներքին գործերի բնագավառում համագործակցությունը, ինչպես նաև տնտեսական և սոցիալական բարեփոխումները, որոնք նոր հնարավորություններ կստեղծեն զարգացման և արդիականացման համար՝ ուղղված առևտրի հետագա ազատականացմանը և ԵՄ ներքին շուկա աստիճանական ներթափանցմանը:

2005թ. ընթացքում ՀՀ կառավարությունն աշխատանքներ էր ծավալել Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակում Գործողությունների ծրագրի մշակման ուղղությամբ, և ձևավորվել էր առաջարկությունների փաթեթ:

2005թ. նոյեմբերի 28-ին Երևանում տեղի ունեցավ Գործողությունների ծրագրի առաջին քննարկումը, որին մասնակցում էին ԵՄ և Հայաստանի ներկայացուցիչները, և Գործողությունների ծրագրի հիմնական դրույթների վերաբերյալ համաձայնություն կայացվեց:

Հայաստանի հետ ԵՄ համագործակցության հիմնական բնագավառներն են՝ քաղաքական ինստիտուտների զարգացումը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները, տարածաշրջանային կայունությունը և համագործակցությունը արդարադատության ու ներքին գործերի բնագավառում, ինչպես նաև տնտեսական և սոցիալական բարեփոխումները, առևտրի ազատականացումը և Հայաստանի ներգրավվածությունը ԵՄ անդամ պետությունների շուկաներում:

Օժանդակությունը հիմնականում ուղղվում է ինստիտուցիոնալ, իրավական և վարչական բարեփոխումներին, մասնավոր ոլորտին և տնտեսական զարգացմանը, անցումային շրջանի սոցիալական խնդիրներին, ենթակառուցվածքների ցանցի զարգացմանը, ատոմային էներգետիկայի անվտանգությանը, բնապահպանության խրախուսմանը և բնական ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, գյուղատնտեսության զարգացմանը:

Եվրոպական հարևանության քաղաքականության ազդեցությունը հիմնականում կախված կլինի նոր հարևան երկրների տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման վրա վերջինիս ազդեցության մակարդակից: Չնայած այս հանգամանքին, Եվրոպական հարևանության քաղաքականությունը իրավական ներդաշնակեցման և ԵՄ ստանդարտներին համապատասխանեցման միջոցով պետք է խթանի արտաքին առևտուրը նոր հարևան երկրների և ԵՄ-ի միջև: Նշենք, որ բոլոր նոր հարևան երկրներում բարեկեցության մակարդակ՝ արտահայտված մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ով, բավական ցածր է՝ համեմատած ԵՄ 15 երկրների միջին մակարդակի հետ և գրեթե երկու անգամ ցածր է ԵՄ-ին նոր անդամակցած 7 երկրների միջին մակարդակից:

1991թ. ի վեր Հայաստանում իրականացվել են շուկայական բարեփոխումներ, որոնք հիմնականում ուղղված են եղել առևտրի ազատականացման և տնտեսության կայունության ու վերակա-

ռուցման հիմնախնդիրներին: Արդյունքում, 2003թ. փետրվարի 5-ին Հայաստանը դարձավ ԱՀԿ լիիրավ անդամ:

Լինելով շրջափակված և բնական ռեսուրսներով ոչ հարուստ երկիր՝ Հայաստանին բաժին է ընկնում համաշխարհային առևտրի շատ աննշան մասը: Ավելին, Հայաստանի արտաքին առևտուրը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ապրանքային կառուցվածքով շատ խիստ կենտրոնացված է: Մասնավորապես Հայաստանի ամենազվխավոր հինգ առևտրային գործընկերներին բաժին է ընկնում ամբողջ արտաքին առևտրի մոտ 80%<sup>2</sup>-ը:

1995թ. սկսած մինչև օրս ՀՀ առևտրային հաշվեկշիռը բացասական է, ընդ որում ՀՀ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ընդհուպ մինչև 1998թ. ունեցել է աճի միտում: Այսպիսով, կարելի է ընդգծել, որ ՀՀ արտաքին առևտրի քաղաքականությունը, որը բավական ազատական էր և էլ ավելի ազատականացվեց ԱՀԿ անդամակցությամբ, զուգորդվում է առևտրային հաշվեկշռի զգալի մեծ պակասուրդով: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը սկզբնական շրջանում հիմնականում պայմանավորվել է ներմուծման ծավալների աճով, իսկ այնուհետև՝ ներմուծման և արտահանման ոչ համարժեք աճով:

ՀՀ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ավելի մանրամասն դիտարկելու նպատակով անհրաժեշտ է քննարկել դրա տարածքային տեղաբաշխումը: Այսպես, ԵՄ-ի հետ Հայաստանի արտաքին առևտրի ծավալները սկզբնական ժամանակաշրջանում զգալի զիջում էին ԱՊՀ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ծավալներին: Սակայն, ի տարբերություն ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի, ԵՄ-ի հետ արտաքին առևտուրն ունեցել է գրեթե անընդհատ աճի միտում: Այսպես, 1993-1998թթ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրում և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները զգալի գերազանցել են ԵՄ երկրներ արտահանման և ԵՄ երկրներից ներմուծման ծավալներին:

1998թ. ԵՄ և ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները գրեթե հավասարվել են՝ կազմելով համապատասխանաբար 259.4 և 221.4 մլն ԱՄՆ դոլար<sup>3</sup>: Այնուհետև, մինչև 2001թ. զգալի կրճատվել

<sup>2</sup> Բոլոր տվյալները, որոնց վերաբերյալ այստեղ և հետագայում չեն լինի հատուկ հղումներ, բերված են ՀՀ վիճակագրական ծառայությունից:

<sup>3</sup> Հետագայում դոլար նշելու դեպքում նկատի ունենք ԱՄՆ դոլարը:

են ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները, և հակառակ դրան աճել են ԵՄ երկրներից ներմուծման ծավալները: Սկսած 2002թ. մեծ տեմպերով միաժամանակ աճել են ԵՄ երկրներից ներմուծման ծավալները՝ 2007թ. կազմելով համապատասխանաբար 910.5 և 968.1 մլն դոլար: Նմանատիպ օրինաչափություն առկա է նաև ԱՊՀ և ԵՄ երկրներ արտահանման մեջ: 2008թ. և՛ ԵՄ, և՛ ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրային հարաբերությունների զարգացումը հասավ իր գագաթնակետին, սակայն 2009թ. տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ ԵՄ երկրների հետ առևտուրը նվազեց մինչև 1.2 մլրդ դոլար՝ նախորդ տարվա 1.9 մլրդ դոլարի համեմատ:

Ընդհանուր առմամբ, եթե 1993-1997թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտրի ամենազլխավոր գործընկերը ԵՄ-ն է: Այսպես, 2007թ. տվյալներով ՀՀ և ԵՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 1705.5 մլն դոլար, որից արտահանումը կազմել է 566.3 մլն դոլար: ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը ԱՊՀ երկրների հետ կազմել է 1442.2 մլն դոլար, ընդ որում արտահանումը կազմել է 354.7 դոլար: Ինչպես նկատում ենք, ԵՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը գրեթե 18%-ով գերազանցում է ԱՊՀ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառությունը: Ընդ որում 2007թ. ՀՀ-ի ընդհանուր արտաքին առևտրաշրջանառության 32.5%-ը ընկնում է ԱՊՀ երկրների վրա, իսկ ԵՄ երկրների՝ 38.4%-ը: 2008թ. 2007թ. համեմատ ԱՊՀ երկրների հետ առևտրում ՀՀ արտահանումը նվազել է 4.4%-ով, իսկ ԵՄ երկրների հետ ավելացել է 2.4%-ով: Ընդ որում 2008թ. ԵՄ երկրներ ՀՀ-ից արտահանման ամենամեծ բաժինը ընկնում է Գերմանիային՝ 17.2% և Չոլանդիային՝ 12.2%:

Սակայն ճգնաժամի ազդեցությամբ այս միտումը փոքր-ինչ փոխվեց: Այսպես, 2009թ. ԱՊՀ երկրներին բաժին ընկավ ՀՀ համախառն ապրանքաշրջանառության 29.5%-ը, իսկ ԵՄ երկրներին՝ 30.2%-ը: Միևնույն ժամանակ, եթե ԵՄ երկրների բաժինը համախառն առևտրում նախորդ տարվա համեմատ նվազել է 5%-ով, ապա ԱՊՀ երկրներինը ավելացել է 2%-ով: Ուստի կարելի է եզրակացնել, որ տնտեսական ճգնաժամի արդյունքում, բնակչության կենսամակարդակի անկման հետևանքով, Հայաստանը վերականգնում է իր

ավանդական շուկաները: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ վերջին տարիներին Հայաստան-Իրան արտաքին առևտուրը գերազանցել է 1996թ. ապրանքաշրջանառության ռեկորդային մակարդակը:

Ներկայումս ԱՊՀ անդամ պետությունների վերաբերմունքը տվյալ կառույցի նկատմամբ տարբերվում է միմյանցից: Այսպես, դրանց մի մասը հանդես է գալիս փոխհամագործակցության ուժեղացման և իրական ինտեգրման ծավալման օգտին, մյուս մասը ԱՊՀ-ն դիտում է որպես խանգարող հանգամանք երրորդ երկրների և տարածաշրջանային կազմակերպությունների հետ մերձեցման ճանապարհին, անդամ-երկրների երրորդ խումբը իր մասնակցությունը ԱՊՀ գործունեությանը կապում է ներքին սուր հիմնախնդիրների լուծման հետ, իսկ չորրորդ խումբն էլ ԱՊՀ-ի նկատմամբ իր քաղաքականությունը կապում է մեծամասնության կողմից ընդունված որոշումների հետ:

Դեռևս ձևավորման պահին ԱՊՀ-ն ոչ թե անկախ երկրների ինտեգրման ձև էր, այլ նախկին միութենական պետությունների ընդհանուր ենթակառուցվածքների վրա հիմնված արդյունավետ տնտեսական կապերի պահպանման փորձ: ԱՊՀ գործունեության հիմնական առանձնահատկություններից մեկը ընդունված համաձայնագրերի, որոշումների և այլ իրավական ակտերի չկիրառելի կամ մասամբ կիրառելի լինելն է:

Նման պայմաններում հարցականի տակ էր դրվում ԱՊՀ գործունեության արդյունավետությունը: Պատճառն այն էր, որ ընդունված սոցիալ-տնտեսական բնույթ ունեցող միջպետական և միջկառավարական համաձայնագրերի զգալի մասը կրում էր դեկլարատիվ բնույթ, իսկ այդ համաձայնագրերում բացակայում էին դրանց նպատակների և խնդիրների իրականացման մեխանիզմները, ընդունված որոշումների ֆինանսական ապահովման վերաբերյալ դրույթները, չէին որոշակիացվում կառավարման այն ազգային մարմինները, որոնք պետք է իրենց վրա վերցնեին դրանց իրականացման պատասխանատվությունը, չէր նախատեսվում նաև միջպետական վերահսկողություն պետությունների կողմից համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ:

ԱՊՀ-ի հետ ՀՀ առևտրային հաշվեկշիռը մշտապես ունեցել է բացասական մնացորդ: 1993-2009թթ. ընթացքում առևտրային հաշվեկշռի ամենափոքր բացասական մնացորդը գրանցվել է 1994թ. (-47.6 մլն դոլար), իսկ 2008թ. այն կազմել է -1.01 մլրդ դոլար, այսինքն՝ ՀՀ առևտրային հաշվեկշռի ընդհանուր բացասական մնացորդի մոտ 30%-ը: Ներկայումս ԱՊՀ երկրների միջև տնտեսական կապերի թուլացումն ուղեկցվում է միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամով, արտադրության հուլման վերակողմնորոշմամբ, մասնագիտացման և կոոպերացման մակարդակի իջեցմամբ, արտադրանքի և ծառայությունների նյութատարության և էներգատարության մակարդակի բարձրացմամբ:

ԱՊՀ շրջանակներում ինտեգրման չկայացման պատճառներից մեկը նաև այն է, որ համագործակցության անդամ պետությունները նկատելիորեն տարբերվում են տնտեսության կառուցվածքով և դրանց հասունության աստիճանով: Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը և մասամբ Ղազախստանն ունեն բավականաչափ զարգացած ազգային տնտեսություններ՝ վերամշակող արդյունաբերության բարձր տեսակարար կշռով, իսկ մյուս անդամ պետությունները բնութագրվում են տնտեսության ագրարահումքային կառուցվածքով, արդյունահանող ճյուղերի մեծ բաժնեմասով, գյուղատնտեսական և հանքային հումքի նախնական մշակմամբ: Արտաքին շուկաներում իրենց արտահանման մեջ այդ երկրները մեկը մյուսի նկատմամբ հանդես են գալիս որպես մրցակիցներ: Ինտեգրման զարգացման խոչընդոտներից մեկը ԱՊՀ անդամ մի շարք երկրներում անավարտ շուկայական բարեփոխումներն են: Կարևորագույն խնդիրներից մեկն էլ այն է, որ ԱՊՀ շրջանակներում համագործակցության հիմնական ձևը շարունակում է մնալ առևտուրը (հիմնականում էներգակիրների, հումքի և սննդամթերքի), իսկ համատեղ ծրագրերի մշակումը, գիտատար արտադրանքի թողարկումը, ներդրումային ծրագրերի նախագծումն ու իրականացումը դեռևս մնում են հետին պլանում: ԱՊՀ հետագա զարգացմանը խոչընդոտում է նաև գործընկերների միջև տեխնոլոգիական հետաքրքրության բացակայությունը:

ԱՊՀ հետագա զարգացման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է ԱՊՀ անդամ-երկրների օրենսդրությունների, հատկապես տնտեսական ոլորտում, մերձեցում և ունիֆիկացում, առանց որի

իրական ինտեգրացիոն գործընթացը դառնում է անհնար: Շատ կարևոր են պատժամիջոցների կիրառումն անդամ-երկրների կողմից պարտավորությունները չկատարելու դեպքում, ինչպես նաև ԱՊՀ երկրների միջև կրկնակի հարկման բացառման վերաբերյալ համաձայնագրերի ստորագրումն ու իրականացումը, որը հնարավորություն կտա մեծացնել ապրանքների և կապիտալի շարժը այդ երկրների միջև:

Անդրադառնալով ԵՄ-ին՝ նշենք, որ 1993-2008թթ. ընթացքում ԵՄ-ի հետ ՀՀ ապրանքաշրջանառության ծավալներն ունեցել են աճի միտում: Միայն 2009թ. ՀՀ համախառն ապրանքաշրջանառության ծավալների ընդհանուր անկման պայմաններում գրանցվեց նաև անկում ԵՄ երկրների հետ առևտրում: Այնուամենայնիվ, եթե 1993թ. այն կազմել է ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի 12.7%-ը, ապա 2008թ. այդ ցուցանիշը հասել է 35.2%-ի, սակայն առևտրային հաշվեկշիռը 1993-2009թթ. ընկած ժամանակահատվածում մշտապես ունեցել է բացասական մնացորդ: Այսպես, 2008թ. այն կազմել է 598.1 մլն ԱՄՆ դոլար, կամ ՀՀ առևտրային հաշվեկշռի ընդհանուր բացասական մնացորդի 18%-ը, իսկ 2009թ. 590.9 մլն դոլար, կամ ընդհանուր բացասական մնացորդի 22.6%-ը: Այսինքն՝ ճգնաժամի ազդեցությամբ առևտրի ծավալների նվազումն ուղեկցվել է առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի խորացմամբ:

Ինչ վերաբերում է ԵՄ առանձին երկրների հետ առևտրային հաշվեկշռի վերլուծությանը, ապա վերջին մի քանի տարիների ընթացքում այն դրական է եղել միայն Գերմանիայի և Նիդեռլանդների հետ:

Հայաստանից ԵՄ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում մետաղները, որոնք հիմնականում արտահանվում են Գերմանիա և Նիդեռլանդներ: Հայաստանից ԵՄ արտահանվում են նաև թանկարժեք քարեր, որոնք ներմուծվում են, վերամշակվում և վերարտահանվում ԵՄ (մասնավորապես Բելգիա): ԵՄ-ից Հայաստան ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել մեքենաները և սարքավորումները, փոխադրամիջոցները, իսկ Հայաստանը ԵՄ-ից ներմուծում է նաև թանկարժեք քարեր, քիմիական ապրանքներ, սննդամթերք, տեքստիլ իրեր և այլն:

ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ Հայաստանի ար-

տաքին առևտրի ապրանքային կառուցվածքում զգալի կենտրոնացում է նկատվում Բելգիայի և Նիդեռլանդների հետ արտաքին առևտրում: Բելգիայի հետ արտաքին առևտրում, բացառապես թանկարժեք քարերի գծով, իսկ Նիդեռլանդների հետ արտաքին առևտրում՝ բացառապես մետաղների գծով: Գերմանիայի, Իտալիայի, Յունաստանի և Ֆրանսիայի հետ արտաքին առևտրում նկատվում է հարաբերականորեն որոշակի տարբերակվածություն (հիմնականում ներմուծման գծով):

Չնայած նրան, որ ՀՀ-ի և ԵՄ-ի միջև հարաբերությունները գնալով զարգանում են, ՀՀ-ի և ԵՄ-ի միջև իրականացվող արտաքին առևտուրը չի զարգանում իր հնարավոր արդյունավետությամբ: Մասնավորապես, ԵՄ-ի հետ արտաքին առևտրի արտահանման կառուցվածքում գրեթե բացակայում են պատրաստի սպառողական ապրանքները (բացառությամբ Իտալիայի հետ արտաքին առևտրի): Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել այն փաստով, որ հայկական սպառողական ապրանքները ենթարկվում են գնային և որակական բարձր մրցակցության ԵՄ երկրների շուկաներում: Մեր կարծիքով, այս սահմանափակումը կարելի է հետագայում բացառել համատեղ ձեռնարկությունների ստեղծման և ԵՄ երկրներից օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ: ԵՄ երկրների ձեռնարկատերերի հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծումը և օտարերկրյա ներդրումների ավելացումը թույլ կտան Հայաստանին հաղթահարել առկա տեխնոլոգիական բարդությունները և արտադրել մրցունակ արտադրանք:

Այսպիսով, ԵՄ-ի հետ ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեն առևտրատնտեսական հարաբերությունների խորացումը ԵՄ անդամ, ինչպես նաև ԵՄ կառույցների հետ, ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ ընդհանուր օրենսդրությանը, հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի մոտեցումը եվրոպական չափանիշների:

Արտաքին առևտրի զարգացումը ՀՀ և ԵՄ անդամ-երկրների միջև ՀՀ ԵՄ անդամակցման կարևորագույն նախապայմաններից է: Այն կարևոր է ոչ միայն մինչև անդամակցումը ՀՀ տնտեսական զարգացման առումով, այլ նաև անդամակցումից հետո ՀՀ տնտեսական զարգացման համար: Նախ ԵՄ ՀՀ անդամակցման անհրաժեշտ

պայմաններից մեկը կլինի ՀՀ մասնագիտացած առևտրի կարևորությունը ԵՄ համար. այսինքն՝ ՀՀ-ն ԵՄ ներմուծման համար ինչ կարևոր նշանակություն կունենա, մյուս կողմից՝ անդամակցությունից հետո, երբ եվրոպական ապրանքները մեծ ծավալներով կներմուծվեն Հայաստան, ինչպես կդիմանա այդ մրցակցությանը ՀՀ տնտեսությունը:

ԵՄ-ն այսօր իր մոտ 500 մլն բնակչությամբ աշխարհի ամենագնդողունակ և մեծ շուկան է ցանկացած տիպի արտադրանքի համար: Բացի այդ-անդամ երկրների կողմից վարվող միասնական արտաքին տնտեսական քաղաքականությունն ավելի է հեշտացնում մուտքը այս շուկա: Մյուս կողմից մասշտաբի էֆեկտի արդյունքում, որը ի հայտ է գալիս միասնական շուկայի պայմաններում, այս կառույցը ամենամրցունակներից մեկն է արտահանման բնագավառում, ինչը Հայաստանի նման տնտեսություն ունեցող երկրի համար նաև լրացուցիչ խնդիրներ է առաջացնում ազգային տնտեսության մրցունակության տեսանկյունից:

Մեր կարծիքով, Հայաստան-Եվրամիության առևտրային հարաբերությունների խթանման համար պետք է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- պետական ակտիվ քաղաքականության իրականացում, որն ուղղված կլինի Հայաստանի և հայ արտադրողի ճանաչմանը Եվրամիության շուկայում,
- պետական քաղաքականություն՝ ուղղված արտադրանքի որակի բարձրացմանը՝ համապատասխանեցնելով այն միջազգային ստանդարտներին և ԵՄ շուկայի պահանջներին,
- մաքսային և հարկային համակարգերում բարեփոխումների իրականացում,
- ներդրումների ներգրավմանն ուղղված խթանման քաղաքականության իրականացում,
- ԵՄ շուկայի մասին տեղեկատվության մատչելիության բարձրացում,
- առևտրային խոչընդոտների մեղմացում,
- բեռնափոխադրման ոլորտում մրցակցության առկայություն: Կարևոր նշանակություն ունեն ԵՄ երկրների դեսպանատներում առևտրի գծով ներկայացուցիչների առկայությունը և նրանց գործի ակտիվացումը, ինչպես նաև ցուցահանդեսների և գործարար

Ֆորումների կազմակերպումը: Հայ գործարարները տեղեկատվական լուրջ պակաս են զգում ԵՄ շուկայի վերաբերյալ: Այդ գործում կարևոր է էլեկտրոնային տվյալների բազայի ձևավորումը, ինչը հնարավորություն կտա ստանալ ճշգրիտ կոնկրետ տեղեկություններ ԵՄ շուկայի մասին, այնտեղ գործող ստանդարտների, որակի նկատմամբ պահանջների, արտոնությունների և այլնի վերաբերյալ:

Արտահանման խրախուսման գործում շատ կարևոր է ստեղծել հատուկ մասնագիտացված արտահանմանն աջակցող մասնագիտացված մարմին, որի գործունեության ոլորտում առանձնակի տեղ պետք է զբաղեցնեն արտաքին առևտրային հարցերը ԵՄ երկրների հետ:

Ծառայությունների առևտրի, ներդրումների մրցակցության և պետական աջակցության, ապրանքային առևտրի կարգավորման և այլ կազմակերպչական կարևոր խնդիրների բարելավման միջոցով զգալիորեն կարող են կարգավորվել Հայաստանի տնտեսական միջավայրը և խորացվել ԵՄ կառույցների հետ տնտեսական համագործակցության և ինտեգրման խնդիրները:

ԵՄ երկրների հետ Հայաստանի առևտրատնտեսական կապերի զարգացման գործում կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև համատեղ և փոխադարձ մարքեթինգային հետազոտությունների իրականացումը, արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպումը, ՀՀ և ԵՄ երկրների գործարարների պարբերաբար հանդիպումները, համապատասխան անհրաժեշտ տեղեկատվության փոխադարձ տրամադրումը և այլն:

Կարևոր ենք համարում նաև հետազոտել ԵՄ և Հայաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման համալիր միջոցառումների հարցերը՝ առևտրային, ֆինանսատնտեսական, հարկային, մաքսային և այլ բնագավառներում հնարավոր արտոնությունների տեսանկյունից, ինչը իր հերթին կարող է նպաստել ՀՀ տնտեսության մեջ ԵՄ-ից ներդրումների ավելացմանը, դրանց ներգրավման և օգտագործման հիմնահարցերի բարելավմանը: Ավելին, հաշվի առնելով ԵՄ-ում առկա առաջընթացը ռեսուրսախնայող, գիտատար, տեխնոլոգիատար արտադրությունների զարգացման բնագավառներում, տեղայնացնել այդ փորձը ՀՀ տարածքում, ինչը վերջին հաշվով կնպաստի տնտեսական ինտեգրացիայի խորացմանը ԵՄ-ի հետ:

Ինչ վերաբերում է ՀՀ-ի ԵՄ անդամակցության խնդրին, ապա, մեր կարծիքով, եթե Հայաստանի Հանրապետության տարեկան միջին աճի տեմպերը պահպանեն իրենց երկնիշ բնույթը, ապա համախառն ազգային արտադրանքի 1 շնչին ընկնող ցուցանիշով Հայաստանը կարող է հասնել ԵՄ միջին մակարդակին, իսկ դա նշանակում է, որ հեռանկարում Հայաստանը կարող է հավակնել ԵՄ անդամակցությանը: Միաժամանակ գերխնդիր է մնում Հայաստանում թողարկվող ապրանքների մրցունակության բարձրացումը միջազգային շուկայում, արտահանվող ապրանքների դիվերսիֆիկացիան: Բացի այդ հանրապետության համար կարևոր նշանակություն ունեն ֆինանսական համակարգի հետագա բարեփոխումները, որոնք հնարավորություն կտան արտասահմանից եկող կայուն և մեծածավալ տրանսֆերտները վերափոխել ներդրումների: Տնտեսական աճի հիմնական գործոնը պետք է դառնա արտաքին շուկան, քանի որ ներքին շուկան խիստ սահմանափակ է:

Մյուս կողմից, ԵՄ քաղաքականությունը Կովկասում ունի տարածաշրջանային բնույթ, այսինքն՝ ԵՄ-ն ցանկանում է իր կազմում տեսնել արդեն տնտեսապես ինտեգրված Կովկաս, և այն, որ Հայաստանը իր տնտեսական զարգացմամբ էապես տարբերվում է: Ըստ էության ԵՄ անդամակցումը մի կողմից ՀՀ համար կբացի հսկայական եվրոպական շուկան, մյուս կողմից անպաշտպան կարող է մնալ ՀՀ շուկան, որը ստիպված կլինի դիմակայել հզոր եվրոպական ֆիրմաների մրցակցությանը: Այս պարագայում ՀՀ տնտեսական օգուտները և վնասները մեծապես պայմանավորված կլինեն ՀՀ տնտեսության հետագա զարգացման տեմպերով և եվրոպական շուկայում մինչև անդամակցումն արդեն որոշ ապրանքների գծով մրցակցային առավելության առկայությամբ: Այս ամենը հնարավոր է միայն ՀՀ տնտեսական ներուժի ճիշտ գնահատման և մրցակցային առավելություններ ունեցող ճյուղերի զարգացման շնորհիվ:

Հայաստանի Հանրապետության և Եվրամիության միջև տնտեսական ինտեգրման ուղղությամբ տարվող քաղաքականությունը կարելի է բաժանել տնտեսական, իրավական, ինստիտուցիոնալ, կազմակերպական ուղղությունների, որոնք, ընդհանուր տնտեսության մեջ կրելով փոխկապակցված բնույթ, այնուամենայնիվ, առանձնահատուկ նոտեցում են պահանջում՝ տնտեսական մերձեցման

քաղաքականությունն ամուրի հիմքի վրա դնելու և տնտեսական համակարգում լուրջ դրական բարեփոխումներ իրականացնելու համար:

Իրավական, ինստիտուցիոնալ և կազմակերպական ուղղություններն իրենց բնույթով ավելի վերլուծական և կառուցողական բնույթ ունեն, այսինքն՝ սրանց միջոցով կատարվում են բարեփոխումների և մերձեցման հիմնական սկզբնական աշխատանքները:

Իսկ տնտեսական ուղին անմիջականորեն գտնվում է մյուս երեք ուղղությունների ազդեցության տակ և վերլուծության օբյեկտ է հետագա բարեփոխումների համար: Տնտեսական ուղին ներառում է ինչպես ներտնտեսական, այնպես էլ միջազգային տնտեսական հարաբերությունների ձևերի՝ միջազգային առևտրի, կապիտալի շարժի, տեխնոլոգիաների փոխանցման, աշխատուժի տեղաշարժի խթանում և այլն: Տնտեսական ինտեգրման այս կարևոր ձևերը (գործընթացները) հարկավոր է մանրամասն ուսումնասիրել, ցույց տալ դրանց առանձնահատուկ և բնորոշ կողմերը, ընտրել դրանց խթանման և զարգացման համար շահավետ և իրականացվող տարբերակներ, ինչպես նաև դրանք համեմատել այն պետությունների ցուցանիշների հետ, որոնք արդյունավետ կերպով մասնակցում են եվրոպական ինտեգրման գործընթացներին և այսօր արդեն ԵՄ-ի լիիրավ անդամ են կամ անդամակցության ճանապարհին են: ՀՀ ԵՄ անդամակցությունը դեռևս չկայացած հիմնախնդիր է, հետևաբար և անդամակցությամբ պայմանավորված տնտեսական հետևանքների մասին կարելի է միայն կանխատեսումներ անել այնքանով, որքանով որ իրադարձություններն արդեն ծավալվել են:

Եվրամիությունն աշխարհի ամենախոշոր տնտեսական շուկան է: Միության սպառողների թիվը աճեց, երբ 2004 թվականին ութ թեկնածու երկրները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից, ինչպես նաև Կիպրոսն ու Մալթան, և 2007թ. Բուլղարիան և Ռումինիան Եվրամիության լիիրավ անդամ դարձան: Այս նոր անդամները որոշակի փորձություն էին հարուստ երկրների ակունք դիտվող միության համար: Մինչդեռ այդ նոր երկրների բնակչության հաշվին Եվրամիության բնակչությունն աճեց 20 %-ով, նոր անդամ պետությունների համախառն ազգային արտադրանքը (ՀԱԱ) հավասար է Եվրամիության հին 15 անդամ պետությունների ՀԱԱ-ի մոտավորապես ընդամենը 6 %-ին: Համապատասխանաբար առա-

վել նոր անդամներից շատերի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն շատ ավելի ցածր է, քան Եվրամիության միջին ցուցանիշը, և նույնիսկ ավելի ցածր է, քան եղել է նախկինում Եվրամիության ընդլայնման տարբեր փուլերում, երբ, օրինակ, Իռլանդիան, Հունաստանը, Իսպանիան և Պորտուգալիան անդամակցում էին Միությանը: Նոր անդամներից ամենախոշորը Լեհաստանն է: Մյուս կողմից Լատվիան իր չափերով ամենամոտն է Հայաստանին և մեկ շնչին ընկնող ՀՆԱ մեծությամբ ունի ամենափոքր ցուցանիշը ԵՄ մյուս բոլոր նոր անդամ պետությունների համեմատությամբ: Սակայն պարզ է, որ աղքատ լինելը խոչընդոտ չէ Եվրամիությանն անդամակցելու համար: Համեմայն դեպս Հայաստանում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2009թ. նախատեսվում է հասցնել մոտավորապես 4000 ԱՄՆ դոլարի: Այսինքն՝ Հայաստանի ՀՆԱ-ն կհավասարվի Լատվիայի ՀՆԱ-ի գրեթե երկու երրորդին: Եթե, օրինակ, Լատվիան դիտվի որպես հնարավոր նվազագույն ՀՆԱ-ով անդամ-երկիր, որից ցածր ցուցանիշով երկրները չեն կարող հավակնել անդամակցությանը, ապա Հայաստանը կանգնած է իր ներկա ՀՆԱ-ն առաջիկա տասնամյակի ընթացքում կրկնապատկելու հիմնախնդրի առջև:

ՀՀ-ի անդամակցությամբ պայմանավորված կիսբանվեճ հետազոտությունները, ինչը հնարավորություն կտա մեծապես ընդլայնելու ներքին շուկան, իսկ սա իր հերթին պայմաններ կստեղծի արտահանման աճի համար: Հայաստանը կարող է գրավել կամ գրավիչ դառնալ նաև որպես Եվրամիության անդամ պետությունների ընկերությունների համար կապալառու հիմունքներով աշխատող տնտեսություն: Ընդ որում ներդրումները բնապահպանության բարելավման, տրանսպորտային կապերի բարեկարգման և գյուղատնտեսության զարգացման մեջ կուղեկցվեն արդեն անդամ պետությունների փորձագետների և հայաստանյան առանձին նախարարությունների միջև զուգահեռ նախաձեռնություններով՝ նպատակ ունենալով օժանդակել վարչական բարեփոխումների կայացմանը:

Անդամակցությունը կապահովի ազգային ֆիրմաներին ավելի մեծ բիզնես հնարավորություններով, կստեղծի նոր աշխատատեղեր և կբարձրացնի հարկային մուտքերը կառավարության համար: Միաժամանակ կստեղծվեն նոր հնարավորություններ արտադրողների և արտահանողների համար: Հայաստանը կդառնա ԵՄ

երկրների համար ինչպես ներդրումների, այնպես էլ կապիտալի և սպառողական բարիքների արտահանման համար կարևոր շուկա:

Հիշենք սակայն, որ ԵՄ-ին անդամակցելու համար Հայաստանին անհրաժեշտ է բավարարել մի շարք չափանիշներ, ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական: Այսինքն՝ անդամակցությունը ինքնին ենթադրում է տնտեսական բարեփոխումներ: Ուստի կարելի է հետևություն անել, որ անդամակցությունն ապահովող բարեփոխումները կշարունակվեն հնարավոր անդամակցությունից հետո, և հետևաբար ԵՄ-ին անդամակցելու ծգտումը չպետք է պասիվ բնույթ կրի:

Հայաստանի և Եվրամիության միջև տնտեսական հարաբերությունների հաստատումը և ամրապնդումը, ինտեգրման գործընթացների զարգացումն ունեն առաջնային կարևորություն, և մոտ ապագայում կմնան համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ-ի ներգրավման հիմնական ուղղություններից մեկը: Եթե նույնիսկ խոսենք ՀՀ տարածաշրջանային և գլոբալ ինտեգրման զարգացման գործընթացների մասին, ապա ամհնար է պատկերացնել դա առանց Եվրամիության, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ հետագայում ԵՄ-ի դերը և մասնակցությունն ավելի են մեծանալու այդ գործընթացներում (հատկապես Թուրքիայի անդամակցությունից հետո, երբ Եվրամիությունն անմիջապես կսահմանակցի մեր տարածաշրջանին):

Տարածաշրջանային ինտեգրումը և մեր տնտեսության հետագա առաջընթացը մեծապես խոչընդոտում են Հայաստան-Ադրբեջան և Հայաստան-Թուրքիա հարաբերություններում առկա հակամարտությունները: Բացառված չէ, որ այս ամենի համար տարածաշրջանում կպահանջվի նոր մտածելակերպ, ուշ թե շուտ բոլոր կողմերն էլ կհասկանան դրա կարևորությունը: Եվրամիության առաքելությունն այս գործընթացում անհերքելի և անփոխարինելի է, քանզի տարածաշրջանում իրականացվող եվրոպական ծրագրերը գլխավորապես ծառայում են այս նպատակներին: Այսպես, օրինակ, լուծելով տնտեսական և քաղաքական անվտանգության հարցերը երկարաժամկետ հեռանկարով՝ Հարավային Կովկասի երեք հանրապետություններն ընդգրկվեցին Եվրախորհուրդ, չնայած որ նրանք հիմնականում չէին համապատասխանում անդամակցման չափա-

նիշներին, և փաստորեն լուծված չէին տարածաշրջանային հակամարտությունները:

Մեր կարծիքով, Եվրոպական ինտեգրման գործընթացներ ներգրավվելու ամենակարևոր սկզբունքը պետք է լինի այն իրողության գիտակցումը, որ և՛ Եվրամիությունը, և՛ համաշխարհային հանրությունը Հարավային Կովկասը դիտում են որպես մեկ միավոր, և նրա մաս կազմող երկրներն առանձին-առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում: Այս առումով կարող ենք ասել, որ տարածաշրջանային զարգացման գրավականը ինտեգրումն է և տարածաշրջանային ծրագրերի իրականացումը: Մենք Եվրոպայի մաս կարող ենք դառնալ միայն որպես տարածաշրջան, երեք երկրներով միասին և միաժամանակ: Նույն սկզբունքով ԵՄ-ին ինտեգրվեցին նաև ԿԱԵ-ի երկրները:

Հայաստան-Եվրամիություն տնտեսական ինտեգրման գործընթացը սկսելու և զարգացնելու ամենակարևոր նախապայմանը ժողովրդավարական և շուկայական չափանիշներով պետության ստեղծումն է, որի շրջանակներում էլ պետք է ապահովվի ԵՄ պահանջներին համապատասխան տնտեսական զարգացում: Եվրոպական ինտեգրման գործընթացների մեջ ընդգրկվելու պետական ուղղվածությունն ինքնին դրական արդյունք կբերի ՀՀ-ում բարեփոխումների գրագետ իրականացման համար, քանզի ԵՄ-ն տիրապետում է անցումային գործընթացների վրա ազդելու հզոր գործոններին:

## ԳԼՈՒԽ 2

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՏՆԵՏՄԱԿԱՆ ԿԱՂԵՐԻ ՕՐԻՆԱԶՍՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆԵՏՄԱԿԱՆ ՆՎԱԾԱՄԱՐ**

---

ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության նախա-  
ձեռնությունների ընտրության ժամանակ պետք է խելամտորեն  
հաշվի առնել ոչ միայն դրա տնտեսական, այլև աշխարհաքաղա-  
քական կողմը, որը ներառում է քաղաքական շահերի առկայու-  
թյունը, տրանսպորտային կառուցվածքի զարգացումը, ընդհանուր  
քաղաքական գործոնները և այլն: Ի՞նչ կարող է տալ մեզ Եվրա-  
միություն-Հայաստան տնտեսական հարաբերությունների զար-  
գացումը, և այժմ ի՞նչ փուլում է գտնվում այն, ի՞նչ խոչընդոտող  
կամ խթանող գործոններ կան այս ճանապարհին: Այս խնդիրը  
վերջին 10-ամյակում դարձել է մի շարք մասնագետների ուսումնա-  
սիրության առարկան, որը կապված է ինչպես մեր տարածաշրջա-  
նում և մասնավորապես ՀՀ-ում այսօր տեղի ունեցող տնտեսական-  
քաղաքական նոր գործընթացների և նոր իրողությունների, այն-  
պես էլ համաշխարհային բենահարթակում Եվրամիության դերի և  
ազդեցության մեծացման հետ:

Հայաստանի և Եվրամիության միջև տնտեսական հարաբե-  
րությունների հաստատումը և ամրապնդումը, ինտեգրման գործըն-  
թացների զարգացումն ունեն առաջնային կարևորություն, և մոտ  
ապագայում կմնան համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ-ի  
ներգրավման հիմնական ուղղություններից մեկը և ժողովրդավա-  
րական ու շուկայական բարեփոխումների ավարտման պայմանը  
անցումային փուլում: Այս տեսակետից ևս իրողությունն այն է, որ  
եթե նույնիսկ խոսենք ՀՀ տարածաշրջանային և գլոբալ ինտեգրման  
զարգացման գործընթացների մասին, ապա դա անհնար է պատկե-

րացնել առանց Եվրամիության, հատկապես, եթե նկատի ունենանք, որ հետագայում ԵՄ-ի դերը և մասնակցությունն ավելի են մեծանալու այդ գործընթացներում:

Հայաստան-Եվրամիություն տնտեսական ինտեգրման կապերի զարգացման տեսանկյունից անչափ կարևոր է երկու կողմերի միջև առևտրի և օտարերկրյա կապիտալ ներդրումների իրականացման խթանումը, ինչն արդիական խնդիր է հատկապես Հայաստանի համար, քանզի այդ ուղորտներում ինտեգրումը ԵՄ-ի նման զարգացած ինտեգրման կառույցին, ներդրումների աճի, գիտելիքների ու տեխնոլոգիաների ձեռքբերման հետ մեկտեղ հնարավորություն կտա յուրացնելու այն արժեքները, բիզնեսի իրականացման ու կազմակերպման ձևերը, մրցակցային բարոյականությունն ու կազմակերպվածությունը, որոնք յուրահատուկ են Եվրոպական քաղաքականությանը: Դա իր հերթին հնարավորություն կտա կրճատելու կոռուպցիան, բարելավելու պետական ու կորպորատիվ կառավարումը և բիզնեսի միջավայրը, կօգնի ՀՀ-ին չեզոքացնել ներքին շուկայի սահմանափակության գործոնը, կմեծացնի ներմուծման և գիտելիքների, տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները՝ միաժամանակ մեծացնելով նաև սեփական մրցունակ գիտելիքների ու տեխնոլոգիաների արտադրության հնարավորությունները: Որքան բարձր է ինտեգրման աստիճանը, այնքան ավելի մեծ են այդ երկրի տնտեսական օգուտները:

Հետխորհրդային տարածաշրջանում աճի հիմնական գործոններից է արտահանման խթանումը, քանզի միայն ներքին պահանջարկի խթանմամբ հնարավոր չէ հասնել տնտեսական զարգացման զգալի արդյունքների: Միևնույն ժամանակ տնտեսական աճի խնդրի լուծումը պահանջում է առաջարկի խթանում, արտաքին առևտրային հարաբերությունների ազատականացում, առևտրային նոր գործընկերների ձեռքբերում և այլն: Ավելին, առանց առևտրային հարաբերությունների խթանման և խորացման հնարավոր չէ պատկերացնել ինտեգրման գործընթացների զարգացումը երկրների միջև: Այս առումով ուշագրավ են Եվրամիության հետ ՀՀ ունեցած առևտրաշրջանառության ծավալների դիտարկումը և դրա հիման վրա ՀՀ-ԵՄ առևտրի հիմնական օրինաչափությունների դուրսբերումը:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին Եվրամիությունը զգալի տեղ է զբաղեցնում ՀՀ առևտրաշրջանառության մեջ, չնայած դա


մեծ ձեռքբերում համարել չենք կարող: 1995-2003թթ. Եվրամիության երկրների բաժինը ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ տատանվել է 14.5%-32.4%: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ԵՄ-ի հետ ունեցած ՀՀ առևտրաշրջանառությունը 1995թ. մինչև 2003թ. զգալի աճ է ունեցել. եթե ՀՀ ընդհանուր առևտրաշրջանառության տարեկան միջին հավելաճը կազմել է 9.06%, ապա ՀՀ-ԵՄ առևտրաշրջանառության դեպքում այդ ցուցանիշը կազմել է 20.1%: Եթե 2003թ. գրանցված ՀՀ ընդհանուր առևտրաշրջանառությունը 1995թ. համեմատությամբ աճել է մոտ 2 անգամ (206.1%), ապա ԵՄ-ի հետ ունեցած առևտրաշրջանառությունը նույն ժամանակահատվածների կտրվածքով աճել է մոտ 4.5 անգամ (460%)<sup>4</sup>:

2004-2008թթ. ընթացքում ԵՄ-ի հետ ՀՀ ապրանքաշրջանառության ծավալներն աճել են մոտ 2.9 անգամ, այդ թվում՝ արտահանումը՝ 2.1, իսկ ներմուծումը 3.4 անգամ: Եթե 1994թ. այն կազմել է ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի 11.8%-ը, ապա 2008թ. այդ ցուցանիշը հասել է 50.3%-ի: Այդ ժամանակահատվածում դիտվել է ԵՄ-ի հետ ՀՀ ապրանքաշրջանառության ծավալի կայուն աճ, բացառությամբ 2001թ., երբ նախորդ տարվա համեմատ այն նվազել է 16.9%-ով: Տոկոսային արտահայտությամբ ապրանքաշրջանառության ծավալի աճի ամենամեծ տեմպը գրանցվել է 1995թ. (137 մլն ԱՄՆ դոլար)՝ նախորդ տարվա համեմատ (71 մլն ԱՄՆ դոլար) աճելով 90.5%-ով, իսկ աճի ամենացածր տեմպը՝ 1999թ. (359 մլն ԱՄՆ դոլար)՝ նախորդ տարվա համեմատ (335 մլն ԱՄՆ դոլար) աճելով ընդամենը 7.2%-ով: Արժեքային արտահայտությամբ ապրանքաշրջանառության ծավալի ամենամեծ աճը դիտվել է 2008թ. և կազմել 1.932 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 234 մլն դոլարով: Իսկ 2009թ. գրանցվել է աննախադեպ անկում՝ 37.3% (տե՛ս գծանկար 1), ինչը կարելի է բացատրել նրանով, որ ճգնաժամի ժամանակ բնակչության գնողունակության անկման հետևանքով նվազում է պահանջարկը թանկարժեք ապրանքների, մասնավորապես թանկարժեք մետաղների և քարերի նկատմամբ, իսկ վերջիններս կազմում են ՀՀ-ԵՄ առևտրի գերակշիռ մասը:

---

<sup>4</sup> Ուսումնասիրություններն անցկացրել ենք մինչև 2003թ. և 2003թ. հետո բաժանմամբ, որպեսզի հնարավոր լինի գնահատել ԿԱԵ երկրների անդամակցությունից հետո ՀՀ-ԵՄ առևտրի դինամիկայի փոփոխությունները:

ՀՀ ապրանքաշրջանառության ծավալները  
ԵՄ երկրների հետ 1994-2009թթ. (մլն դոլար)<sup>5</sup>



Միևնույն ժամանակ հարկ է նաև նշել, որ չնայած 2008թ. ՀՀ-ԵՄ առևտուրն աճ էր գրանցել, սակայն թե՛ արտահանման և թե՛ ներմուծման աճի տեմպերը էապես նվազել էին նախորդ տարիների համեմատ: Այսպես, եթե արտահանման ծավալները 2007թ., 2006թ. համեմատությամբ, աճել էին 18.8%-ով, իսկ ներմուծման ծավալները՝ 52%-ով, ապա 2008թ. այդ աճը համապատասխանաբար կազմել է 1.8 և 19.7%: Իսկ 2009թ. առևտրի կրճատումը հետևանք է այն բանի, որ մոտ երկու անգամ կրճատվել է առևտուրը բոլոր հիմնական առևտրային գործընկերների, այդ թվում՝ Բելգիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և Նիդեռլանդների հետ: Այս անկումը իհարկե վերագրվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին: Սակայն եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ 2009թ. ՀՀ-ում գրանցվել է ավելի քան 14.4% տնտեսական

<sup>5</sup> Գծանկարը կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2000, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008 և ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերի տվյալների հիման վրա:

աճի անկում, ապա ստեղծված իրավիճակը միայն համաշխարհային ճգնաժամով բացատրելը համոզիչ չի թվա: Իրականում խոսքը ՀՀ տնտեսության ավելի լուրջ՝ կառուցվածքային ճգնաժամի մասին է, որն իր հերթին փոխկապակցված է մակրոտնտեսական, միկրոտնտեսական, ներքաղաքական և սոցիալական բացասական զարգացումների հետ:

Հարկ է նշել, որ ԵՄ հիմնական առևտրային գործընկերների հետ առևտրի անկման ծավալներն աննախադեպ են և բավականին ավերիչ: Քանի որ ընդամենը մեկ տարվա ընթացքում գրանցվել է 40%-ից ավելի անկում, դա կնշանակի, որ ասենք 2010 թվականին 2007թ. ցուցանիշը վերականգնելու համար մեզ հարկավոր կլինի գրանցել 75% առևտրի աճ: Բնական է, որ սա անհնար է իրականացնել կարճ ժամանակահատվածում. նախ, քանի որ, ըստ փորձագետների, ՀՀ-ում սպասվում է ճգնաժամի երկրորդ ակիբ, և երկրորդ, դրա համար անհրաժեշտ կլինեն հսկայական ներդրումներ: Ուստի խնդիր է առաջանում պարզելու, թե ինչպես կարելի է առավելագույնս կարճ ժամանակահատվածում դուրս գալ ստեղծված իրավիճակից և վերականգնել նախկին աճի տեմպերը, հակառակ դեպքում դրա համար կարող են պահանջվել տասնյակ տարիներ, որի արդյունքում մենք կկորցնենք մեզ համար արդեն իսկ «հարազատ» դարձած եվրոպական շուկաները:

Կարծում ենք, որ ստեղծված բարդ իրադրությունից պետք է դուրս գալ փուլ առ փուլ: Այսպես,

**կարճաժամկետում՝** խթանել ամբողջական պահանջարկի բաղադրիչները,

**միջնաժամկետում՝** իրականացնել տնտեսության ապակենտրոնացում և ապամենաշնորհացում,


**երկարաժամկետում՝** լուրջ առաջընթաց արձանագրել գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման ուղղություններով:

Ինչ վերաբերում է 2004թ. ԵՄ անդամ դարձած 10 երկրներին, ապա ՀՀ-ի հետ վերջիններիս ապրանքաշրջանառության ծավալները ևս ցուցաբերում են աճի միտում (գծանկար 2): Եթե ՀՀ-ԵՄ արտաքին առևտրի ընդհանուր ծավալում այս երկրների բաժինը 2005թ. կազմել է 5.2%, ապա 2007թ.՝ 17.4%: Ընդ որում, ապրանքաշրջանառության մեջ գերակշռող դիրք ունի ներմուծումը: Այդ երկրների շարքում արտահանման կառուցվածքում մինչև 2007թ.

առաջին տեղում էր Լեհաստանը, իսկ 2007թ., երբ Բուլղարիան և Ռումինիան դարձան ԵՄ անդամ, Բուլղարիան ԿԱԵ երկրների շարքում ստանձնեց ՀՀ գլխավոր առևտրային գործընկերոջ դիրքը թե՛ արտահանման և թե՛ ներմուծման կառուցվածքում: Դա վկայում է այն մասին, որ ԵՄ վերջին ընդլայնումն իր հերթին հանգեցրել է վերջինիս հետ ՀՀ արտաքին առևտրի ծավալների աճին: Այնուամենայնիվ, տնտեսական ճգնաժամից անմասն չի մնացել նաև առևտուրը այս երկրների հետ: Հատկապես Բուլղարիայի, Ռումինիայի և Չեխիայի հետ առևտուրը 2009թ., նախորդ տարվա համեմատությամբ, կրճատվել է համապատասխանաբար՝ 17.4, 27.4 և 30.7 %-ով<sup>6</sup>:

## Գծանկար 2

### ՀՀ ապրանքաշրջանառության ծավալները ԵՄ 10 երկրների հետ 2002-2008թթ.<sup>7</sup>



Ուսումնասիրելով ՀՀ-ԵՄ առևտրային կապերը՝ կարելի է վեր հանել հետևյալ օրինաչափությունները.

- ՀՀ-ԵՄ արտաքին առևտրային կապերն ունեն անշեղ աճի միտում:

<sup>6</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին:

<sup>7</sup> Գծանկարը կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2000, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008 տվյալների հիման վրա:

- Կենտրոնական և արևելյան երկրների անդամակցությունը ԵՄ-ին հանգեցրեց նրան, որ ՀՀ-ԵՄ առևտրում գրանցվեց զգալի աճ:
- Դիտարկվող ողջ ժամանակաշրջանում ՀՀ ներմուծման ծավալները գերազանցել են արտահանման ծավալներին, այսինքն՝ ՀՀ առևտրային հաշվեկշիռը ԵՄ-ի հետ ունեցել է բացասական սալդո (եթե դիտարկենք առևտրային հաշվեկշիռն ըստ առանձին երկրների, ապա վերջին մի քանի տարիների ընթացքում այն դրական է եղել միայն Նիդեռլանդների հետ): Ներկայումս գոյություն ունեն ԵՄ-ին ՀՀ ինտեգրման մի շարք լուրջ խոչընդոտներ, որոնց վերացումը պահանջում է մեծ ջանքեր ու երկար ժամանակ:

ԵՄ-ն, որը տարածաշրջանային համագործակցության և հակամարտությունների խաղաղ կարգավորման ջատագովն է, խիստ կարևորում է տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման անհրաժեշտությունը: Նման կարգավորումը հնարավորություն է տալիս զարգացնել համագործակցությունը այլ բնագավառներում: Ահա թե ինչու «Եվրոպայի նախկին ոխերիմ թշնամիներն այժմ միասին նստում են սեղանի շուրջ որպես գործընկերներ՝ ի նպաստ բոլոր կողմերի»<sup>8</sup>: Այդ իսկ պատճառով Ղարաբաղյան հակամարտության լուծումը բխում է նախ մեր, ապա ԵՄ շահերից, քանի որ դրանով, մի կողմից, մեզ հնարավորություն է ընձեռվում առավելագույնս զարգացնել մեր հարաբերությունները ԵՄ-ի հետ, մյուս կողմից, ԵՄ-ն դառնում է ավելի ապահով՝ ունենալով միմյանց հետ հակամարտություններ չունեցող հարևաններ:

ԵՄ-ին՝ ՀՀ ինտեգրման հիմնախնդիրներից կարևոր նշանակություն ունի քաղաքական գործոնների ազդեցությունը: Խոսքը վերաբերում է հատկապես Ռուսաստանի դիրքորոշմանը, որը Հարավային Կովկասի՝ ԵՄ-ի հետ մերձեցումը դիտում է որպես հեռացում իր երկրից: Այս խնդրի հետ կապված՝ Հարավային Կովկասի երկրներն ունեն տարբեր մոտեցումներ: Խնդիրը բարդանում է հատկապես Հայաստանի պարագայում, որը նախկին խորհրդային 6 հանրապետություններից կազմված Հավաքական անվտան-

<sup>8</sup> Բենիտա Ֆերերո-Վալդեր. Հարավային Կովկասը և Եվրոպական հարևանության քաղաքականությունը. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ. 15.02.2006թ. 27 (3883), էջ 4:

գության պայմանագրի կազմակերպության անդամ է, որից դուրս գալու մտադրություն Չայաստանը դեռևս չի հայտնել: Ստացվում է, որ Չայաստանն իր ապագան տեսնում է Եվրոպայում, իսկ անվտանգության երաշխիքը փնտրում Ռուսաստանում: Հենց սա էլ համարվում է Եվրախնտեզրման ճանապարհին առկա կարևորագույն խոչընդոտներից մեկը:

Դեմոկրատական ռեժիմի անշրջելիությանը և մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող պահանջները, որոնք բխում են 1993թ. նոյեմբերի 1-ից ուժի մեջ մտած Մասսոթիխտի Համաձայնագրի «F» կետից, Եվրոպական ընտանիքին ինտեգրվելու կարևորագույն հիմնախնդիրներից են: Թեև Չայաստանը ներկայումս ընթանում է այդ ուղիով, այնուամենայնիվ, այդ ճանապարհին դեռևս առկա են բազմաթիվ խոչընդոտներ, որոնք հաղթահարելու համար նախ և առաջ պահանջվում է քաղաքական մեծ կամք:

Ներկայումս ՀՀ-ԵՄ արտաքին առևտրի խթանման հիմնական խոչընդոտներից է նաև տրանսպորտային գործոնը: Վերջին տարիներին այն դարձել է մեր երկրի արտահանման ապրանքային կառուցվածքի ձևավորման համար ամենաորոշիչը: Դրանով է պայմանավորված Արևմտյան Եվրոպայի հետ առևտրում թանկարժեք ապրանքատեսակների տեսակարար կշռի աճը, որոնց արտահանման տնտեսական արդյունավետությունը կապված է գործարքների արժեքում տրանսպորտային փոքր ծախսումների հետ: Ներկա իրավիճակում դա միանգամայն արդարացված է:

Վերլուծելով ՀՀ և ԵՄ արտաքին առևտրի կառուցվածքը, ծավալները և հիմնական խոչընդոտները՝ կարող ենք առաջադրել դրանց բարելավման հիմնական ուղիները: Այսպես, առևտրային հարաբերությունների զարգացման համար էական դեր կարող է խաղալ այսպես կոչված ռազմավարական առևտրային քաղաքականության իրականացումը, որը արտահանման քաղաքականության մի մասն է: Դրա էությունն այն է, որ պետությունն իր վրա է վերցնում այն ճյուղերի խթանումը, որոնք կարող են երկրի համար ապահովել համենատական առավելություններ ապագայում, ոչ միայն արտացոլեն արտաքին առևտրի ընթացիկ իրավիճակը: Մեր երկրի համար ռազմավարական առևտրային քաղաքականության նպատակը պետք է լինի տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների զարգացումը, որը պահանջում է չափավոր լրավճարների

տրամադրման միջոցով գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման աջակցում: Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների արտադրության զարգացումը կձևավորի բավարար նյութական հիմք սեփականաշնորհված ձեռնարկությունների վերագործարկման համար:

Այս հետազոտության շրջանակներում կատարված ՀՀ-ԵՄ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ցույց տվեց, որ ՀՀ տնտեսության զարգացման գերակայությունները, որոնք բնորոշ են փոքր երկրներին, դրսևորվում են թեթև և սննդի արդյունաբերության, գյուղատնտեսական ապրանքների, շինանյութերի, գունավոր մետաղների արտադրության և մշակման ոլորտներում: Վերջինիս զարգացումը հատկապես կարևորվում է առանձին տնտեսական շրջանների վերելքի ապահովման տեսանկյունից: Ուստի, նկատի ունենալով, որ ՀՀ տնտեսական աճի ամենակենսունակ սուբյեկտները փոքր ու միջին ձեռնարկություններն են, և որոնք էլ վճռական դեր կխաղան միջին խավի ձևավորման համար, գտնում ենք, որ դրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ձևավորումը ևս խիստ արդիական է: Ուսումնասիրելով ԿԱԵ մի շարք երկրների փորձը՝ միանշանակ կարելի է պնդել, որ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը պահանջում է պետության համապատասխան աջակցությունը:

Երկրների պատմական զարգացումն անընդհատ ապացուցում է, որ լավ կառավարությունը կենսական անհրաժեշտություն է, այլ ոչ թե շքեղություն: «Առանց արդյունավետ պետության՝ կայուն զարգացում, ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական, հնարավոր չէ»<sup>9</sup>: Որքան որ կարևոր է տնտեսական կյանքի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ օրենքների ընդունումը (ներդրումների պաշտպանություն և ապահովագրություն, հարկային, վարկային քաղաքականություն, սեփականության, գույքային իրավունքի պաշտպանություն և այլն), այնքան ավելի կարևոր են դրանց կենսագործման վերահսկողությունն ու ներդրումային բարենպաստ մթնոլորտի ձևավորումը: Ի վերջո, ներտնտեսական բարենպաստ զարգացումներն արտաքին աշխարհին ներկայանում են արտահանման դիվերսիֆիկացված կառուցվածքով, դրանց տեսականու

---

<sup>9</sup> Wulfenson D. The State in a Changing World; World development Report 1997, p. 8.

ընդլայնմամբ և որակի բարձրացմամբ, գլոբալ մրցակցային առավելություններ ունեցող ապրանքների արտադրությամբ և արտահանումով:

Անկախացման տարիներից ի վեր ՀՀ-ում ընդունվել են վերոհիշյալ ոլորտները կարգավորող բազմաթիվ օրենքներ, որոնք, ճիշտ է, հեռու են կատարյալ լինելուց, սակայն մեր երկրի տնտեսական առաջընթացը հետ է մղվում ոչ թե դրանց «որակական» բնութագրիչների, այլ գործնականում չկիրառվելու պատճառով: Արտահանման քաղաքականության հստակ հայեցակարգի բացակայությունն իր հերթին թույլ չի տալիս արտաքին առևտուրը վերածել տնտեսական աճի գործոնի: Ապրանքը արտահանման գործունեության հիմնական պայմանն է, եթե այն չի կարող բավարարել օտարերկրյա սպառողների պահանջները, ապա ոչ մի ջանք և լրացուցիչ ծախս չի կարող բարելավել դրա դիրքերն արտաքին շուկաներում: Այս պնդումը հատուկ ապացույցների կարիք չունի, այն հաստատվել է ողջ համաշխարհային պրակտիկայով: Քանի որ ապրանքն է որոշում արտահանման ճակատագիրը, ուստի արտահանման քաղաքականության մեջ այն զբաղեցնում է կենտրոնական տեղ: Արտահանման քաղաքականությունը գործողությունների որոշակի կուրս է, ինչպես նաև գործունեության նախապես մշակված սկզբունքներ, որոնց միջոցով ապահովվում է ապրանքների արդյունավետ տեսականու ձևավորումը:

Այսպիսով, ԵՄ-ի հետ ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունի հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- առևտրատնտեսական հարաբերությունների խորացում ԵՄ անդամ բոլոր երկրների հետ,
- ԵՄ կառույցների հետ համագործակցության ընդլայնում,
- ՀՀ օրենսդրության համապատասխանեցում ԵՄ ընդհանուր օրենսդրությանը,
- Վրաստանի հետ ազատ առևտրի գոտու ստեղծում, որի տարածքով առանց մաքսատուրքերի հայրենական ապրանքների արտահանումը ԵՄ երկրներ հնարավորություն կտա բարձրացնել դրանց մրցունակությունը ԵՄ շուկայում,
- Եվրաինտեգրման հարցերով զբաղվող բարձրագույն գերատեսչության ստեղծում (հատկապես ուշագրավ է Վրաստանի

փորձը, որտեղ գործում է Եվրոպական ինտեգրման պետական նախարարությունը),

- Ղարաբաղյան հակամարտության շուտափույթ լուծում խաղաղ ճանապարհով,
- Ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության ապահովում:

Այնուամենայնիվ, 2004թ. մայիսի 1-ին նոր տասը երկրների անդամակցությամբ Եվրոպայի քաղաքատնտեսությունն արմատական փոփոխությունների ենթարկվեց<sup>10</sup>, ինչը ստիպեց տնտեսագետ տեսաբաններին ՀՀ-ԵՄ համագործակցությունը դիտարկել նոր լույսի ներքո: Այդ փոփոխություններն ընդհանուր առմամբ վերագրվում են ինչպես նոր անդամակցած երկրներին, այնպես էլ արևելյան և հարավային նոր հարևան երկրներին: Այս նոր հարևան երկրների համար քաղաքականություն սահմանելիս Եվրոպական հանձնաժողովը ներկայացրեց «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ռազմավարական փաստաթուղթը՝ դրանով իսկ սահմանելով նոր հարևան երկրների հետ հարաբերությունների և ֆինանսական օժանդակության նոր կառուցվածքը<sup>11</sup>:

Գտնում ենք նպատակահարմար ևս մեկ անգամ հիշեցնել 2004թ. ԵՄ ընդլայնումից հետո նոր հարևան երկրներ դարձան՝ Ուկրաինան, Բելառուսը, Մոլդովան, Ալժիրը, Եգիպտոսը, Իսրայելը, Չորդանանը, Լիբանանը, Լիբիան, Մարոկկոն, Սիրիան, Թունիսը և Պաղեստինը: Այստեղ հարկ է նշել, որ հատուկ առաջարկով նոր հարևանների շարքին դասվեցին նաև Ադրբեյջանը, Չայաստանը և Վրաստանը, իսկ Ռուսաստանին տրվեց հատուկ արտոնություններ ունեցող գործընկերոջ կարգավիճակ: Եվրոպական հարևանության քաղաքականությունը ենթադրում է թույլ տալ այս հարևան երկրներին մասնակցել ԵՄ հիմնական քաղաքականություններին ու ծրագրերին, և վերջապես ԵՄ միասնական շուկային: Եվրոպական հարևանության քաղաքականության մասնակիցներից սպասվում է, որ վերջնական արդյունքում նրանք պետք է ձևավորեն ԵՄ-ի հետ այնպիսի հարաբերություններ, ինչպես Եվրոպական տնտե-

<sup>10</sup> 2007թ. հունվարի 1-ին ԵՄ-ին անդամակցեցին նաև Ռումինիան և Բուլղարիան:

<sup>11</sup> European Commission, 2004a, May.

սական գոտու (European Economic Area) անդամները՝ Նորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն:

Ուսումնասիրելով ԵՄ նոր ձևավորվող հարաբերությունների կառուցվածքն իր նոր հարևան երկրների (հատկապես Հայաստանի) հետ և վերլուծելով Եվրոպական հարևանության քաղաքականության տնտեսական ազդեցությունը ինչպես ԵՄ, այնպես էլ նոր հարևան երկրների վրա<sup>12</sup>, մեր կողմից գնահատվել է, թե արդյոք Եվրոպական հարևանության քաղաքականությունը բավականաչափ գրավիչ է, որպեսզի նոր հարևան երկրների կառավարություններին դրդի արագացնել այնպիսի տնտեսական բարեփոխումների ընդունումը, որոնք կատարվել են նոր անդամակցած երկրներում՝ դրանց անդամակցության գործընթացի ժամանակ: Այդ բարեփոխումների թվին կարելի է դասել արտաքին առևտրի ազատականացումը, սեփականաշնորհման գործընթացը, ԵՄ օրենսդրության համապատասխանեցումը:

Այս ենթատեքստում Եվրոպական հարևանության քաղաքականությունը դիտարկվում է որպես ԵՄ անդամակցության այլընտրանք<sup>13</sup>: Նման տեսակետ հետազայում կրկնվեց նաև Եվրոպական հանձնաժողովի արտաքին հարաբերությունների տնօրեն Լանդաբուրուի կողմից: Նա նշեց, որ Եվրոպական հարևանության քաղաքականության հիմնական նպատակը ԵՄ ընդլայնման այլընտրանք է, այլ ոչ թե անդամակցության նախնական քայլ կամ փուլ<sup>14</sup>: Մյուս կողմից, բացառելով անդամակցության հնարավորությունը, Եվրոպական հարևանության քաղաքականությունը հակասում է Ամստերդամի համաձայնագրին, համաձայն որի ԵՄ անդամակցությունը բաց է բոլոր Եվրոպական երկրների համար, որոնք համապատասխանում են Կոպենհագենի չափանիշներին<sup>15</sup>:

Ընդհանուր առմամբ կարող ենք նշել, որ Եվրոպական հարևանության քաղաքականությունը հետապնդում է երեք հիմնական նպատակ<sup>16</sup>.

<sup>12</sup> Վերլուծությունը կատարվելու է ՀՀ և մյուս նոր հարևան երկրների կտրվածքով:

<sup>13</sup> European Commission, 2004a; Verheugen, 2004.

<sup>14</sup> European Commission Observer, 2006.

<sup>15</sup> Տե՛ս <http://europa.eu.int/scadplus/leg/en/s50000.htm>.

<sup>16</sup> Verheugen, Gunter. 2004. "The European Neighborhood Policy." Speech delivered at Prime Ministerial Conference "Towards a Wider Europe: The New Agenda," Bratislava.

- այն փորձում է ընդլայնված Եվրոպան շրջապատել այնպիսի հարևաններով, որոնք կիսում են ԵՄ արժեքային համակարգը և իրականացնում են անվտանգության ու այլ արտաքին քաղաքականություններ, որոնք հիմնականում համատեղելի են ԵՄ-ի համանման քաղաքականությունների հետ:
- Առաջին նպատակին հասնելու համար Եվրոպական հարևանության քաղաքականությունը նոր հարևան երկրների համար պետք է ապահովի միասնական շուկա մուտք գործելու համապատասխան պայմաններ և տրամադրի ընդլայնված տեխնիկական օժանդակություն:
- Եվրոպական հարևանության քաղաքականությունը ենթադրում է, որ ԵՄ հետագա ընդլայնում, որը վերաբերում է ԱՊՀ և Միջերկրական ծովի տարածաշրջանի երկրների պոտենցիալ անդամակցությանը, չի նախատեսվում:

Անդրադառնալով վերջին նպատակին՝ հարկ է նշել, որ մեր կարծիքով այն այդքան էլ նախընտրելի չէ Արևմտյան ԱՊՀ երկրների (հատկապես Ուկրաինայի) և Կովկասյան տարածաշրջանի երկրների համար, որոնք վերջնական արդյունքում ձգտում են լրիվ անդամակցության:

Եվրոպական հարևանության քաղաքականության ազդեցությունը հիմնականում կախված կլինի նոր հարևան երկրների տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման վրա վերջինիս ազդեցության մակարդակից: Չնայած այն հանգամանքին, որ Եվրոպական հարևանության քաղաքականությունն իրավական ներդաշնակեցման և ԵՄ ստանդարտներին համապատասխանեցման միջոցով պետք է խթանի արտաքին առևտուրը նոր հարևան երկրների և ԵՄ միջև, ԵՄ-ի միասնական շուկա մուտք գործելու հնարավորությունը և ՕՈՒՆ-ի ներհոսքի զգալի ավելացումը համարվում են շատ հեռահար իրողություններ:

**Արևելյան գործընկերություն.** Արևելյան գործընկերություն (Eastern Partnership) ծրագիրը նախաձեռնվել է 2008թ. մայիսի 26-ին Լեհաստանի և Շվեդիայի կողմից՝ որպես Եվրոպական հարևանության քաղաքականության լրացում: Այս ծրագրի մեջ ընդգրկվելու են Ադրբեյջանը, Վրաստանը, Հայաստանը, Մոլդովան, Ուկրաինան

և Բելառուսը<sup>17</sup>: Այս նոր ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ ԵՄ նոր հարևան երկրները բավական տարբերվում են իրենց տնտեսական, քաղաքական և մշակութային առանձնահատկություններով: Այդ պատճառով Արևելյան գործընկերության շրջանակներում ԵՄ կողմից ցուցաբերվելու է տարբերակված մոտեցում յուրաքանչյուր գործընկերոջ համար: Մյուս կողմից, բոլոր վերը նշված երկրները կատարել են զգալի տնտեսական, քաղաքական և սոցիալական բարեփոխումներ և իրենց ցանկությունն են հայտնել էլ ավելի ինտեգրվել ԵՄ-ին<sup>18</sup>: Այսպիսով, Արևելյան գործընկերություն ծրագիրն ուղղված է Եվրոպական միության արևելյան հարևանների հետ համագործակցությունը խորացնելուն: Եվրոպական միության կողմից Արևելյան գործընկերության շրջանակներում նախաձեռնվող տարբեր ծրագրերի համար նախատեսվում է մինչև 2013թ. գործընկեր երկրներին տրամադրել շուրջ 600 մլն եվրո ֆինանսավորում:

Արևելյան գործընկերության ծրագիրն ունենալու է ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմանի ուղղվածություն<sup>19</sup>: Երկկողմանի ուղղվածության հիմնական բաղադրիչներն են.

- ավելի սերտ քաղաքական կապեր,
- ազատ առևտրի գոտիների ստեղծում,
- ԵՄ և Արևելյան գործընկերների միջև շարժունության խթանում,
- էներգետիկ ապահովվածություն,
- տնտեսական և սոցիալական զարգացման օժանդակում:  
Բազմակողմանի ուղղվածության հիմնական բաղադրիչներն են.
- սահմանների կառավարման ծրագիր,
- օժանդակում փոքր և միջին ձեռնարկություններին,
- տարածաշրջանային էներգետիկ շուկաներ,
- հարավային էներգետիկ միջանցք,
- տարերային և տեխնաժին աղետների կանխում:

---

<sup>17</sup> Բելառուսի մասնակցության աստիճանը Արևելյան գործընկերությանը կախված է լինելու Բելառուս-ԵՄ հարաբերությունների զարգացումից:

<sup>18</sup> Այստեղ հարկ է նշել, որ ինչպես Եվրոպական հարևանության քաղաքականության դեպքում, Արևելյան գործընկերությունը չի համարվում որպես ԵՄ անդամակցության նախապայման:

<sup>19</sup> Brussels, 3 December 2008, MEMO/08/762.

«Արևելյան գործընկերություն» ծրագիրը հնարավորություններ կընձեռնի առավել խորացնելու հարաբերությունները ԵՄ-ի հետ՝ կենտրոնանալով այնպիսի ոլորտների վրա, ինչպիսին է օրինակ իրավական կարգավորումների մոտարկումը: Բացի այդ, Արևելյան գործընկերության տնտեսական ինտեգրման և կարգավորիչ քաղաքականությամբ նախատեսվում է ազատ առևտրի գոտիների ստեղծում:

Արևելյան գործընկերության ծրագրի վերաբերյալ բացասական դիրքորոշում ունի Ռուսաստանի Դաշնությունը, ինչի մասին վկայում են վերջին շրջանում պաշտոնական տարբեր մակարդակներով կատարվող հայտարարությունները: Այսպես, ԱՊՀ գործադիր տնօրեն Սերգեյ Լեբեդևը ասել է, որ Արևելյան գործընկերության ծրագրին մասնակցող պետությունների մոտ դժվարություններ կառաջանան ԱՊՀ-ում, քանի որ այդ պետությունների կողմից իրենց օրենսդրությունը ԵՄ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելը կառաջացնի ԱՊՀ շրջանակներում ձեռքբերված պայմանավորվածությունների փոփոխության անհրաժեշտություն և երկրները կկանգնեն երկընտրանքի առջև<sup>20</sup>:


Իրականացնելով ԵՄ նոր հարևան երկրների տնտեսական իրավիճակի վերլուծություն և համեմատություն կկարողանանք բացահայտել նաև ինտեգրման իրական հնարավորությունները: Այսպես, բոլոր նոր հարևան երկրներում բարեկեցության մակարդակն արտահայտված մեկ շնչին բաժին ընկնող ՅՆԱ-ով (ըստ գնողունակության պարիտետի) բավական ցածր է համեմատած ԵՄ 15 երկրների միջին մակարդակի հետ և գրեթե երկու անգամ ցածր է ԵՄ նոր անդամակցած 8 երկրների միջին մակարդակից (զժանկար 3): Այս տարբերությունը զգալի նվազեցնում է հարևան երկրների և ԵՄ միջև առևտրի խթանման գործընթացները և այդ իսկ պատճառով էլ կարող է հանդիսանալ ազդեցիկ գործոն, որպեսզի Եվրոպական հարևանության քաղաքականությունը ԵՄ կողմից դիտարկվի որպես ԵՄ անդամակցության այլընտրանք:

---

<sup>20</sup> <http://www.belta.by/en/pointOfView?id=369787&pointOfView=1> (ինտերնետային կայքն այցելվել է 29.05.2009թ.-ին):


### Գծանկար 3

ԵՄ 15, ԵՄ 10 և հարևան երկրների մեկ շնչին բաժին ընկնող  
ՀՆԱ-ի համեմատությունը 2007թ. (ըստ գնողունակության  
պարիտետի, հազ. դոլար)<sup>21</sup>



### Գծանկար 4

ԵՄ 15 և նոր հարևան երկրների տնտեսական  
աճի տեմպերը 2007թ. (%)<sup>22</sup>



<sup>21</sup> Աղբյուր՝ World Bank, World Development Indicator 2008:

<sup>22</sup> Աղբյուր՝ World Bank, World Development Indicator 2008:

Սակայն, վերջին տասնամյակում (ասիական ֆինանսական ճգնաժամից հետո, որը տարածվել էր նաև Ռուսաստանի վրա) այս երկրները, հատկապես Հայաստանը և Ադրբեջանը, գրանցել են զգալի տնտեսական աճի տեմպեր, որոնք մի քանի անգամ գերազանցում են ԵՄ-15 միջին մակարդակը (զծանկար 4): Մյուս կողմից, այստեղ պետք է նկատի ունենալ, որ նոր հարևան երկրների մեծ մասը նորանկախ անցումային երկրներ են (օրինակ՝ ԱՊՀ երկրները), որոնք անկախացումից անմիջապես հետո կանգ առան լուրջ տնտեսական դժվարությունների առաջ, և նրանց տնտեսության մեջ աննշան դրական փոփոխություններն ապահովում են այդպիսի բարձր տնտեսական աճի տեմպեր:

Այս երկրները նաև զգալի հաջողություններ են գրանցել կայուն մակրոտնտեսական և ֆիսկալ քաղաքականություններ հաստատելու գործընթացներում:

ԵՄ տնտեսական և արժույթային միության անդամակցության համար Մասստրիխտի չափանիշների համաձայն՝ բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը: Հարկ է նշել, որ 2004-2007թթ. ընկած ժամանակաշրջանում բոլոր նոր հարևան երկրներում, բացի Ուկրաինայից և Եգիպտոսից, այս ցուցանիշը ցածր է եղել պահանջվող մակարդակից<sup>23</sup>: Մյուս կողմից, 2004թ. մայիսի 1-ին անդամակցած երկրներից Հունգարիայի, Չեխիայի և Լեհաստանի դեպքում այս ցուցանիշը բավական բարձր է պահանջվող մակարդակից (զծանկար 5):

Արևմտյան ԱՊՀ երկրներում պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին (Մասստրիխտի մյուս չափանիշը) չի գերազանցում ՀՆԱ-ի 60%-ը: Ավելին, այս երկրներում այս ցուցանիշը նույնիսկ ցածր է ԵՄ 10 երկրների միջին մակարդակից (զծանկար 6):


Մյուս կողմից նոր հարևան երկրների հարաբերականորեն «ուժեղ» ֆիսկալ դիրքերը կարող են նաև դիտարկվել որպես թերզարգացած ֆինանսական համակարգի և ոչ բարենպաստ ներդրումային միջավայրի արդյունքներ՝ դրանով իսկ բացառելով պահանջվող ֆինանսական միջոցների ոչ ինֆլյացիոն ձևերի էքստենսիվ օգտագործումը:

---

<sup>23</sup> 2004թ. այս ցուցանիշը Ուկրաինայի համար կազմել է -3.19%, իսկ 2007թ. Եգիպտոսի համար՝ -3.29%:


Գծանկար 5

Բյուջեի պակասուրդի/ավելցուկի հարաբերությունը  
ՀՆԱ-ին 2007թ. (%)<sup>24</sup>



Գծանկար 6

Պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին 2007թ. (%)<sup>25</sup>



<sup>24</sup> Աղբյուր՝ World Bank, World Development Indicator 2008:

<sup>25</sup> Աղբյուր՝ World Bank, World Development Indicator 2008:

Այսպես, Եվրոպական նոր հարևանության քաղաքականության շրջանակներում արդիական են հետևյալ հարցերը.

- արդյո՞ք կարող է Եվրոպական հարևանության քաղաքականությունը ՀՀ տնտեսության համար կրկնել ԵՄ նոր անդամ երկրների անցումային շրջանի տնտեսական հաջողությունները:
- Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում իրականացվող շուկայական բարեփոխումները կարո՞ղ են զգալի բարելավել միասնական շուկա մուտք գործելու պայմանները, ապահովել ՕՈՒՆ-ի ներհոսք, վերակառուցել և մոդեռնիզացնել ՀՀ տնտեսությունը:

Հարցն այն է, որ նոր հարևան երկրներն ավելի «աղքատ» են և ունեն շատ ավելի ոչ միասեռ տնտեսություններ, քան ԵՄ նոր անդամակցած երկրները: Սա տեսանելի է տնտեսական (մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ, կառուցվածքային բնութագրիչներ և այլն) և քաղաքական առումներով: Այս ենթատեքստում Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում իրականացվող շուկայական բարեփոխումները Հայաստանի և օրինակ Ուկրաինայի կամ ցանկացած այլ հարևան երկրի համար զգալիորեն կտարբերվեն իրենց բնույթով:

Եվրոպական հարևանության քաղաքականության տնտեսական օգուտները պետք է լինեն դրական և զգալի, որպեսզի իրականացվող շուկայական բարեփոխումներն ապագայում տան իրենց սպասվող արդյունքները: Այս առումով, միասնական շուկայի ընդլայնմանն ուղղված ոչ ԵՄ անդամ-երկրների (Նորվեգիա, Իսլանդիա, Լիխտենշտեյն և Շվեյցարիա) նախկին փորձը բավական հուսադրող է: Սակայն, նոր հարևան երկրները դեռևս չունեն բավական որակյալ ենթակառուցվածքներ, նրանց մոտ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն զգալի ցածր է, և այդ երկրներում բավական մեծ է քաղաքական ռիսկը: Այս հանգամանքն ուղղակիորեն ուժեղացնում է Եվրոպական հարևանության քաղաքականության մյուս տարրերի կարևորությունը<sup>26</sup>: Այստեղ Եվրոպական հարևանության քաղաքականության այլ տարրեր կամ բաղադրիչներ ասելով հիմնականում նկատի ունենք ֆինանսական օժանդակությունը և ենթակառուցվածքների զարգացումը (հատկապես տրանսպորտային և էներգետիկ ոլորտներում):

---

<sup>26</sup> Dodini, Michaela, and Marco Fantini. 2004. The European Neighborhood Policy: Implications for Economic Growth and Stability. Mimeo. Brussels: CEPS.

Այսպիսով, ՀՀ տնտեսության համար գերակա խնդիր պետք է դառնան տնտեսության կառուցվածքի բարելավումը և արտադրվող արտադրանքի տարբերակումը, քանի որ եվրոպական ինտեգրումը կարող է նաև որոշակի բացասական կողմեր ունենալ: Օրինակ՝ բացասական կողմերից կարող է լինել հետագա մասնագիտացումը ռեսուրսների և էներգակիրների արտահանման մեջ (օրինակ՝ Ադրբեյջանի դեպքում):

**Արտաքին առևտուր և ներդրումներ.** Եվրոպական հարևանության քաղաքականությունը, որը վերջնական արդյունքում պետք է ապահովի ԵՄ միասնական շուկա ազատ մուտք գործելու հնարավորությունը, կարող է զգալի օգուտներ և արդյունավետություն ապահովել հարևան երկրների համար: Մաքսային և ֆինանսական ոլորտներում իրավական բարեփոխումները կխթանեն արտաքին առևտրի և գործարարության հետագա զարգացումը: ԵՄ կարգավորման ստանդարտների համապատասխանեցումը կարող է էական ազդեցություն չունենալ, եթե Եվրոպական հարևանության քաղաքականությունն զգալի չբարելավի նոր հարևան երկրների մուտքը միասնական շուկա:

Այս ենթատեսքտում առկա առևտրային ռեժիմների փոփոխությունները խոստումնալից չեն, քանի որ նոր հարևան երկրների արտաքին առևտուրը ԵՄ-ի հետ հիմնականում կարգավորվում է Ընկերակցության և համագործակցության համաձայնագրով, որն ինչ-որ չափով ոչ ԱՀԿ անդամ-երկրների համար<sup>27</sup> համապատասխանում է ԱՀԿ սկզբունքների հետ<sup>28</sup>:

Արևմտյան ԱՊՀ երկրներից դեպի ԵՄ արտահանման բաժինը շատ ավելի քիչ է, քան Հարավարևելյան Եվրոպայի նոր անդամակցած և թեկնածու երկրներինը<sup>29</sup> (գծանկար 7): Այս հանգամանքը

---

<sup>27</sup> Նոր հարևան երկրներից միայն Վրաստանը (2000թ. հունիսի 14) , Մոլդովան (2001թ. հուլիսի 26), Հայաստանը (2003թ. փետրվարի 5) և Ուկրաինան (2008թ. մայիսի 16) են անդամակցել ԱՀԿ-ին:


<sup>28</sup> Aslund, Anders, and Andrew Warner. 2004. "The EU Enlargement: Consequences for the CIS Countries." In Marek Dąbrowski, Ben Slay, and Jaroslav Neneman, eds., *Beyond Transition: Development Perspectives and Dilemmas*. Aldershot; Burlington.

<sup>29</sup> ԵՄ թեկնածու երկրներն են՝ Խորվաթիան, Մակեդոնիան և Թուրքիան, իսկ ԵՄ պոտենցիալ թեկնածու երկրներն են՝ Ալբանիան, Բոսնիան և Հերցեգովինան, Մոնտենեգրոն, Սերբիան, ինչպես նաև Կոսովոն՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1244/99 որոշման:

չի կարող միանշանակ բացատրվել երկրի աշխարհագրական դիրքով, քանի որ Բելառուսը ԵՄ 27-ի հետ ունի ընդհանուր սահման և աշխարհագրորեն ավելի մոտ է Կենտրոնական Եվրոպային, քան Ռումինիան, Բուլղարիան Թուրքիան, սակայն Բելառուսից դեպի ԵՄ արտահանման բաժինը շատ ավելի քիչ է, քան նշված երկրներից որևէ մեկինը<sup>30</sup>:

**Գծանկար 7**

**Արտահանման բաժինը ԵՄ 27 երկրների հետ արտաքին առևտրում 2007թ. (%)<sup>31</sup>**



Ըստ Ասլունդի և Վորների՝ Արևմտյան ԱՊՀ երկրների՝ ԵՄ երկրների հետ արտաքին առևտրում հարաբերականորեն քիչ արտահանման բաժինը կարող է բացատրվել այդ երկրների՝ ԵՄ միասնական շուկա արտոնյալ պայմաններով մուտք գործելու բացակայությամբ<sup>32</sup>: ԵՄ հովանավորչական քաղաքականությունը հատկա-

<sup>30</sup> Համաձայն Բայերսի (Byers, John. (2000) “Great Circle: Distances between Capital Cities.”)՝ Մինսկը գտնվում է Բրյուսելից 1605 կմ հեռավորության վրա, իսկ Սոֆիան, Բուխարեստը և Անկարան համապատասխանաբար 1698, 1770 և 2513 կմ:

<sup>31</sup> “Eurostat”, Statistical regime 4. <http://ec.europa.eu/trade>.

<sup>32</sup> Aslund, Anders, and Andrew Warner. (2004) “The EU Enlargement: Consequences for the CIS Countries.” In Marek Dabrowski, Ben Slay, and Jaroslav

պես բարձր է գյուղատնտեսական, տեքստիլ, քիմիական ապրանքների և մետաղագործական ոլորտում, իսկ այս ապրանքախմբերը բավական մեծ տեսակարար կշիռ են կազմում ԱՊՀ երկրների արտահանման կառուցվածքում: Այսպիսով, կարող ենք նշել, որ ԵՄ արտաքին առևտրային քաղաքականությունը «խոչընդոտներ» է ստեղծում ԱՊՀ երկրներից դեպի ԵՄ արտահանման համար:

Ինչպես նկատում ենք զծանկար 7-ից, դեպի ԵՄ երկրներ արտահանման իր բաժնով Հայաստանը գերազանցում է միայն Ուկրաինային և Բելառուսին: Սակայն, ինչպես մենք արդեն նախկինում նշել ենք, դեպի ԵՄ Հայաստանի արտահանման ավելի քան 85%-ը բաժին է ընկել մետաղներին և թանկարժեք քարերին, իսկ Բելառուսի և Ուկրաինայի արտահանման կառուցվածքը բավական տարբերակված է: ԱՊՀ երկրներից դեպի ԵՄ արտահանման հարաբերականորեն մեծ բաժնով առանձնանում են Ռուսաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, որոնց արտահանման կառուցվածքում հիմնական ապրանքախումբը նավթն ու գազն են: Մասնավորապես, Ադրբեջանի արտահանման ծավալը դեպի ԵՄ զրեթե երեք անգամ աճել է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցումից հետո՝ 2007թ. կազմելով 11.7 մլրդ դոլար<sup>33</sup>: Այսպիսով, նավթի արտահանման շնորհիվ ներկայումս Կովկասյան տարածաշրջանում Ադրբեջանը համարվում է ԵՄ ամենամեծ առևտրային գործընկեր երկիրը: Նմանապես 2007թ. տվյալներով Ռուսաստանն արտաքին ապրանքաշրջանառության ծավալով ԵՄ-ի համար հանդիսացել է երրորդ գլխավոր առևտրային գործընկեր երկիրը ԱՄՆ-ից ու Չինաստանից հետո:

Այսպիսով, հիմնվելով ԵՄ նոր անդամ-երկրների փորձի վրա, կարող ենք նշել, որ ԵՄ ինտեգրացիոն գործընթացներին Հայաստանի մասնակցության հիմնական օգուտները կարող են ստացվել ՕՈՒՆ-ի ներհոսքից: Մեր կարծիքով ՕՈՒՆ-ի ներհոսքին կարող է խթանել ինչպես աշխարհագրական, այնպես էլ մշակութային մերձեցումը ԵՄ-ի հետ: Ինչպես ցույց է տալիս նոր անդամ-երկրների փորձը, ՕՈՒՆ-ը կարող են զգալիորեն բարելավել և արդիակա-նացնել վերամշակող արդյունաբերության, էներգետիկայի և ֆինանսական ոլորտների կառուցվածքը:


---

Neneman, eds., *Beyond Transition: Development Perspectives and Dilemmas*. Aldershot; Burlington, Vt.: Ashgate.

<sup>33</sup> Այստեղ համեմատության համար հարկ է նշել, որ 2005թ. դեպի ԵՄ Ադրբեջանի արտահանման ծավալը կազմել է 4 մլրդ դոլար:

## Գծանկար 8

Մեկ շնչին բաժին ընկնող հանրագումարային ՕՈՒՆ-ի բաժինը  
1989-2007թթ. (հազ. դոլար)<sup>34</sup>



Ինչպես նկատում ենք գծանկար 8-ից, Արևմտյան ԱՊՀ երկրներում ՕՈՒՆ-ի մակարդակը զգալի ցածր է: Մի շարք գործոններ՝ շուկայի տարողունակությունը, աշխարհագրական դիրքը, տրանսպորտային ու հեռահաղորդակցման ենթակառուցվածքները և այլն, կարող են ԵՄ նոր հարևան երկրներում ՕՈՒՆ-ի ցածր մակարդակի պատճառ հանդիսանալ: Հայաստանի դեպքում այս ամենին ավելանում է նաև մեկ այլ շատ կարևոր գործոն՝ Ղարաբաղի հիմնախնդիրը: 1999-2006թթ. ընկած ժամանակաշրջանում Հայաստանը դասվել է աշխարհի 10 ամենառիսկային երկրների շարքում՝ միջին առումով գրավելով 8-րդ տեղը<sup>35</sup>: Մեր կարծիքով այս գործոնը, անկախ ԵՄ ինտեգրացիոն գործընթացներից և մյուս այլ գործոններից (բարձր տրանսպորտային ծախսեր, ոչ բավարար չափով զարգացած ենթակառուցվածք և այլն), իր բացասական ազդեցությունն է թողնում ՀՀ տնտեսության վրա (օրինակ՝ ՕՈՒՆ-ի

<sup>34</sup> Աղբյուր՝ “Eurostat”, Statistical regime 4. <http://ec.europa.eu/trade/>

<sup>35</sup> Աղբյուր՝ International Country Risk Guide Indicators. <http://www.countryrisk.com/>

ոչ բավարար մակարդակ): Մյուս կողմից հարկ է նշել, որ նոր հարևան երկրների մեծ մասը դեռևս համարվում է անցումային երկիր, և նրանց տնտեսություններում առկա են մի շարք հիմնախնդիրներ՝ կապված հատկապես հարկային համակարգի և կոռուպցիայի բարձր մակարդակի հետ, որոնք նպաստում են ստվերային տնտեսության առաջացմանը:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ Եվրոպական հարևանության քաղաքականությունը դեռևս «չի արդարացրել» իրեն: Այդ պատճառով ԵՄ-ն նախաձեռնել է «Արևելյան գործընկերություն» ծրագիրը, որը ոչ թե փոխարինելու, այլ լրացնելու է Եվրոպական հարևանության քաղաքականությունը: Ներկայումս ակտիվ քննարկումների գործընթացում գտնվող ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրի հիմնական նպատակը Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ԵՄ-ի հետ համագործակցող մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանի միջև հարաբերությունների նոր մակարդակի հաստատումն է: «Արևելյան գործընկերություն» նոր ծրագրի շրջանակներում նախատեսվում է Արևելյան գործընկեր երկրների հետ ազատ առևտրի ռեժիմի հաստատում գրեթե նույն սկզբունքներով, որոնք գործում են Եվրոպական ընդհանուր շուկայում:

### ԳԼՈՒԽ 3

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՆ ԱՆԴԱՍ (15) ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ**

Տնտեսական, առևտրային և արժուրային առումներով ԵՄ-ը վերածվել է գլխավոր համաշխարհային դերակատարի: Այսպես, 2005թ. տվյալներով ԵՄ 25 երկրների բնակչությունը կազմել է 460 մլն մարդ, այն դեպքում, երբ ԱՄՆ-ի բնակչությունը կազմել է 290, իսկ ճապոնիայինը՝ 130 մլն մարդ: Ընդհանուր առմամբ ԵՄ 25 երկրների բնակչությունը կազմում է համաշխարհային բնակչության 7%-ը: Սակայն, ԵՄ 25 երկրների բաժինը համաշխարհային տնտեսության մեջ զգալի մեծ է, երբ խոսքը այնպիսի տնտեսական ինդիկատորների մասին է, ինչպիսիք են՝ ՀՆԱ-ն, առևտուրը և օտարերկրյա ներդրումները:


Այսպես, 2005թ. տվյալներով ԵՄ 25 երկրների ՀՆԱ-ն կազմել է համաշխարհային ՀՆԱ-ի 1/3-ը (գծանկար 9), իսկ ՕՈՒՆ-ը՝ ամբողջ ՕՈՒՆ-ի հոսքի 40%-ը: Այստեղ հարկ է նշել, որ նույն թվականին ԱՄՆ-ին բաժին է ընկել ամբողջ համաշխարհային ՕՈՒՆ-ի հոսքի 23, իսկ ճապոնիային 4%-ը:

ԵՄ արտաքին առևտուրը հիմնվում է ԵՄ ընդհանուր քաղաքականության վրա: Այլ խոսքով, արտաքին առևտրին վերաբերող հարցերում (ներառյալ ԱՀԿ կարգավորումները) ԵՄ-ն զործում է որպես մեկ միասնական դերակատար: Այսինքն՝ առևտրային համաձայնագրերում միակ իրավասու մարմինը Եվրոպական հանձնաժողովն է, որը բանակցում և ներկայացնում է Եվրոպական շահերը ԵՄ 27 անդամ-երկրների անունից:



2005թ. տվյալներով ԵՄ-ին բաժին էր ընկնում համաշխարհային ապրանքային առևտրի մոտ 1/5-ը: ԵՄ-ն համաշխարհային առաջատարն է ապրանքների արտահանման գծով, իսկ ապրանքների ներմուծման գծով ԱՄՆ-ից հետո գրավում է երկրորդ տեղը: Ինչպես

նկատում ենք գծանկար 10-ից, ԵՄ-ին, ԱՄՆ-ին, Չինաստանին, Ճապոնիային և Կանադային միասին վերցրած բաժին է ընկնում համաշխարհային ապրանքային առևտրի կեսից ավելին:

**Գծանկար 9**  
**Բաժինը համաշխարհային ՀՆԱ-ում 2005թ.<sup>36</sup>**



**Գծանկար 10.**  
**Համաշխարհային ապրանքային շուկայում երկրների բաժինները 2005թ.<sup>37</sup>**



<sup>36</sup> Աղբյուր՝ “Europe in Figures”-Eurostat Yearbook 2008, “World Development Indicators 2008”- World Bank:

<sup>37</sup> Աղբյուր՝ “External and intra-European Trade”-Statistical Yearbook 2008, International Trade Statistics 2008-WTO:

Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ից, 1995-2005թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ 25 երկրների արտաքին արտահանման հիմնական գործընկեր երկրների շարքում առաջին տեղում է ԱՄՆ-ը, որը նշված ժամանակահատվածում պահպանել և ամրապնդել է իր դիրքը: ԵՄ արտաքին արտահանման հիմնական գործընկեր երկրների շարքում իրենց դիրքերը զգալի բարելավել են Ռուսաստանը, Չինաստանը և Թուրքիան: Այսպես, եթե 1995թ. որպես ԵՄ արտաքին արտահանման հիմնական գործընկեր երկիր Ռուսաստանը գրավում էր հիմնգերորդ տեղը, ապա արդեն 2005թ. այն գրավում էր երրորդ տեղը: Նմանապես Չինաստանը յոթերորդ տեղից տեղափոխվել է չորրորդ, իսկ Թուրքիան ութերորդից՝ վեցերորդ տեղը:

## Աղյուսակ 1

### ԵՄ հիմնական առևտրային գործընկեր երկրները (արտահանում, մլրդ եվրո/եկրո)<sup>38</sup>

	1995	2001	2002	2003	2004	2005
<b>ԵՄ 25</b>	521.9	895.8	903.6	882.9	969.3	1,071
<b>Բաժինը</b>	100	100	100	100	100	100
<b>1. ԱՄՆ</b>	103.3	244.9	247.0	226.4	234.6	251.5
<b>Բաժինը</b>	19.8	27.3	27.3	25.6	24.2	23.5
<b>2. Շվեյցարիա</b>	51.0	76.4	72.6	71.2	75.1	81.9
<b>Բաժինը</b>	9.8	8.5	8.0	8.1	7.7	7.7
<b>3. Ռուսաստան</b>	16.1	31.4	34.3	37.1	45.8	56.5
<b>Բաժինը</b>	3.1	3.5	3.8	4.2	4.7	5.3
<b>4. Չինաստան</b>	14.7	30.6	34.9	41.2	48.2	51.8
<b>Բաժինը</b>	2.8	3.4	3.9	4.7	5.0	4.8
<b>5. Ճապոնիա</b>	32.9	45.5	43.4	40.9	43.3	43.6
<b>Բաժինը</b>	6.3	5.1	4.8	4.6	4.5	4.1
<b>6. Թուրքիա</b>	13.4	20.9	25.4	29.4	38.0	41.9
<b>Բաժինը</b>	2.6	2.3	2.8	3.3	3.9	3.9
<b>7. Նորվեգիա</b>	17.5	27.1	28.0	27.6	30.7	33.8
<b>Բաժինը</b>	3.3	3.0	3.1	3.1	3.2	3.2
<b>8. ԱՄԷ</b>	6.5	14.1	14.7	16.5	18.7	25.3
<b>Բաժինը</b>	1.2	1.6	1.6	1.9	1.9	2.4

1995-2005թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ 25 երկրների արտաքին ներմուծման հիմնական գործընկեր երկրների շարքում

<sup>38</sup> Աղբյուր՝ “External and intra-European Trade”-Statistical Yearbook 2008:

նույնպես առաջին տեղում է ԱՄՆ-ը (աղյուսակ 2), որը նշված ժամանակահատվածում պահպանել է իր դիրքը: Սակայն, ի տարբերություն ԵՄ արտաքին արտահանման հիմնական գործընկեր երկրների, այստեղ ԱՄՆ-ը իր դիրքերը չի ամրապնդել: ԵՄ արտաքին ներմուծման գործընկեր երկրների շարքում իրենց դիրքերը զգալի ամրապնդել են Չինաստանը և Ռուսաստանը: Այսպես, նշված ժամանակահատվածում Չինաստանը չորրորդ տեղից տեղափոխվել է երկրորդ, իսկ Ռուսաստանը վեցերորդից՝ երրորդ տեղը:

## Աղյուսակ 2

### ԵՄ հիմնական առևտրային գործընկեր երկրները (ներմուծում, մլրդ էլյու/եվրո)<sup>39</sup>

	1995	2001	2002	2003	2004	2005
<b>ԵՄ 25</b>	504.3	983.8	942.5	940.8	1,032.4	1,179.8
<b>Բաժինը</b>	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
<b>1. ԱՄՆ</b>	103.7	202.5	181.9	157.4	158.4	162.8
<b>Բաժինը</b>	20.6	20.6	19.3	16.7	15.3	13.8
<b>2. Չինաստան</b>	26.3	81.6	89.6	105.4	127.5	158.0
<b>Բաժինը</b>	5.2	8.3	9.5	11.2	12.3	13.4
<b>3. Ռուսաստան</b>	21.5	63.0	62.0	67.8	80.7	109.0
<b>Բաժինը</b>	4.3	6.4	6.6	7.2	7.8	9.2
<b>4. Ճապոնիա</b>	54.3	80.9	73.3	72.0	74.2	73.3
<b>Բաժինը</b>	10.8	8.2	7.8	7.7	7.2	6.2
<b>5. Նորվեգիա</b>	25.5	46.3	48.0	51.0	55.2	67.0
<b>Բաժինը</b>	5.1	4.7	5.1	5.4	5.3	5.7
<b>6. Շվեյցարիա</b>	43.2	63.4	61.4	58.8	61.6	66.4
<b>Բաժինը</b>	8.6	6.4	6.5	6.2	6.0	5.6
<b>7. Թուրքիա</b>	9.2	21.4	23.6	25.9	30.9	33.5
<b>Բաժինը</b>	1.8	2.2	2.5	2.7	3.0	2.8
<b>8. Հարավային Կորեա</b>	10.9	23.0	24.3	25.7	30.3	33.4
<b>Բաժինը</b>	2.2	2.3	2.6	2.7	2.9	2.8


Աղյուսակ 1 և 2-ի տվյալները փաստում են, որ ԵՄ երկրների արտաքին առևտրի զգալի մասը բաժին է ընկնում ԵՄ երկրների ներքին առևտրին (ԵՄ երկրների փոխադարձ առևտուր): ԵՄ ներքին շուկան եվրոպական երկրների տնտեսություններն էլ ավելի է կապում իրար, և անդամ-երկրների միջև առևտուրը զգալի տեմպե-

<sup>39</sup> Աղբյուր՝ “External and intra-European Trade”-Statistical Yearbook 2008:

րով աճում է: Ավելին, անընդհատ ընդլայնվող ԵՄ ներքին շուկան խոշոր գործարարությանը հնարավորություն է տալիս ստանալու զգալի օգուտներ վիթխարի մասշտաբի էֆեկտի շնորհիվ:

Միևնույն ժամանակ փոքր ու միջին գործարարության համար նոր արտահանման շուկաներ են ի հայտ գալիս, որոնք նախկինում «անհասանելի» էին ծախսերի առումով: Այսպես, 1993-2000թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ 15 երկրների փոխադարձ առևտրի ծավալներն ավելի արագ տեմպերով են աճել, քան ԵՄ 15 երկրների ՀՆԱ-ը (գծանկար 11):


**Գծանկար 11**  
**ԵՄ 15 երկրների փոխադարձ առևտրի բաժինը ԵՄ**  
**15 երկրների ՀՆԱ-ում<sup>40</sup>**



ԵՄ 25 երկրների փոխադարձ առևտուրը 2005թ. տվյալներով կազմել է ամբողջ արտաքին առևտրի մոտ 2/3-ը՝ դրանով իսկ բացահայտելով 25 անդամ-երկրների միջև փոխադարձ առևտրի կարևորությունը այլ երկրների համեմատությամբ (գծանկար 12): Ինչպես նկատում ենք գծանկար 4-ից, ԵՄ փոխադարձ առևտրի բաժինը կազմում է ամբողջ առևտրի 56-ից (Մեծ Բրիտանիա) մինչև 83%-ը (Չեխիա), իսկ փոխադարձ առևտրի միջին մակարդակը ԵՄ 25 երկրների համար կազմել է ընդհանուր առևտրի 66%-ը:

<sup>40</sup> Աղբյուր՝ “External and intra-European Trade”-Statistical Yearbook 2008:

ԵՄ 25 երկրների փոխադարձ առևտրի բաժինը յուրաքանչյուր անդամ-երկրի համար 2005թ.<sup>41</sup>



<sup>41</sup> Աղբյուր՝ “External and intra-European Trade”-Statistical Yearbook 2008:

Ինչպես արդեն պարզեցինք, փոխադարձ առևտուրը շատ մեծ դեր է կատարում ԵՄ անդամ-երկրների համար: Ավելին, ԵՄ անդամ դառնալու տնտեսական պահանջներից մեկն էլ հենց այն է, որ անդամակցող երկիրը պետք է բավական սերտ առևտրատնտեսական կապեր ունենա ԵՄ անդամ երկրների հետ:

### Աղյուսակ 3

#### ԵՄ 15 երկրների փոխադարձ առևտուրը ԵՄ անդամ բոլոր երկրների հետ (արտահանում, մլն էլյու/եվրո)<sup>42</sup>

	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Բելգիա	156,167	165,085	171,876	173,801	189,369	205,410	223,005
Դանիա	39,084	40,004	42,254	41,154	43,601	48,117	52,162
Գերմանիա	383,244	401,890	408,268	426,326	466,312	494,495	555,437
Հունաստան	6,982	7,020	5,764	6,641	6,739	7,311	8,898
Իսպանիա	90,876	96,598	98,996	103,385	108,530	108,072	120,138
Ֆրանսիա	228,778	230,313	226,780	229,161	237,693	231,500	255,755
Իռլանդիա	54,167	59,300	61,527	51,084	52,874	56,252	54,777
Իտալիա	156,939	162,522	159,436	160,232	170,602	173,370	190,326
Լյուքսեմբուրգ	7,861	9,608	9,527	10,488	11,773	13,219	16,292
Նիդեռլանդներ	204,658	209,382	206,732	209,530	228,551	259,499	290,762
Ավստրիա	54,040	58,180	61,160	63,236	68,185	69,922	75,792
Պորտուգալիա	21,496	21,835	22,241	22,702	22,978	24,451	26,625
Ֆինլանդիա	31,402	29,146	29,115	28,239	28,640	29,742	34,960
Շվեդիա	56,656	49,594	50,256	52,725	58,151	61,158	69,992
Մեծ Բրիտանիա	182,786	181,629	181,034	159,053	163,135	176,142	223,671

Ինչպես նկատում ենք աղյուսակ 3-ից, նշված ժամանակահատվածում ԵՄ առաջատար երկրներից (Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Իտալիա) միայն Գերմանիան է զգալի աճ գրանցել փոխադարձ առևտրում<sup>43</sup>: Այսպես, 2000-2006թթ. ընկած ժամանակահատվածում Գերմանիայի արտահանումը դեպի ԵՄ անդամ մյուս երկրներ աճել է 44.9%-ով: Ի տարբերություն Գերմանիայի՝ 2000-2005թթ. ընկած ժամանակահատվածում Ֆրանսիայի արտահանումը դեպի ԵՄ անդամ մյուս երկրներ զրեթե մնացել է անփո-

<sup>42</sup> Աղբյուր՝ “External and intra-European Trade”-Statistical Yearbook 2008:

<sup>43</sup> ԵՄ անդամ 15 երկրների փոխադարձ առևտուրը (արտահանման զծով) ներկայացված է հավելված 1-ում: Այստեղ հարկ է նշել, որ արտահանումը հաշվարկված է FOB զնով:

փոխ, սակայն 2006թ. գրանցվել է արտահանման աճ (10.6%): Մեծ Բրիտանիայի դեպքում 2000-2005թթ. ընկած ժամանակաշրջանում նույնիսկ գրանցվել է արտահանման ծավալների նվազում (-3.6%), սակայն, ինչպես և Ֆրանսիայի դեպքում, 2006թ. գրանցվել է արտահանման ծավալների զգալի աճ (26.9%): Եթե 2000-2005թթ. ընկած ամբողջ ժամանակահատվածում Իտալիայի արտահանումն աճել է 10.4%-ով, ապա արտահանման աճի տեմպը միայն 2006թ. կազմել է 9.8%:

Ընդհանուր առմամբ փոխադարձ առևտրում ԵՄ անդամ ոչ առաջատար երկրներից արտահանման ծավալների զգալի աճ են գրանցել Լյուքսեմբուրգը (107.6%), Բելգիան (42.8%), Նիդեռլանդները (42%), Ավստրիան (40.1%), Դանիան (33.5%) և Իսպանիան (33.3%):

#### Աղյուսակ 4

#### ԵՄ 15 երկրների փոխադարձ առևտուրը ԵՄ անդամ բոլոր երկրների հետ (ներմուծում, մլն էվրո/եվրո)<sup>44</sup>

	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Բելգիա	135,394	142,937	152,207	152,002	166,165	183,607	200,107
Դանիա	35,536	36,713	39,724	37,189	38,754	43,088	49,112
Գերմանիա	337,540	347,600	337,530	349,989	373,844	398,461	457,716
Հունաստան	22,765	21,724	17,925	22,301	24,549	24,165	27,657
Իսպանիա	114,236	118,167	120,226	127,387	140,485	140,938	160,731
Ֆրանսիա	245,845	246,381	237,362	245,995	261,785	267,121	296,481
Իռլանդիա	34,984	37,708	37,119	29,868	32,687	36,762	39,664
Իտալիա	154,397	158,957	159,370	161,577	172,451	174,994	192,564
Լյուքսեմբուրգ	10,243	11,212	11,140	11,064	12,239	12,661	14,911
Նիդեռլանդներ	125,527	125,004	127,482	127,853	136,043	144,000	164,604
Ավստրիա	62,354	66,513	66,125	70,984	78,480	80,774	85,503
Պորտուգալիա	33,022	33,788	33,851	33,105	34,019	37,574	40,071
Ֆինլանդիա	24,944	25,269	25,276	25,646	27,824	31,224	34,940
Շվեդիա	53,796	49,273	50,219	52,968	58,117	62,931	70,292
Մեծ Բրիտանիա	189,968	204,811	219,191	198,996	210,614	231,232	274,905

<sup>44</sup> Աղբյուր՝ “External and intra-European Trade”-Statistical Yearbook 2008:

ԵՄ փոխադարձ առևտրում ներմուծման ծավալներով պատկերը լրիվ այլ է<sup>45</sup>։ Այսպես, ԵՄ փոխադարձ առևտրում բոլոր առաջատար երկրների ներմուծման ծավալները 2000-2006թթ. ընկած ժամանակահատվածում աճել են։ Այսպես, եթե 2000-2005թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ փոխադարձ առևտրում Մեծ Բրիտանիայի դեպքում գրանցվել է արտահանման ծավալների նվազում, ապա նույն ժամանակահատվածում ներմուծման ծավալների գծով գրանցվել է զգալի աճ (21.7%), իսկ 2000-2006թթ. ընկած ժամանակահատվածում ներմուծման ծավալների աճը կազմել է (44.7%), և այս ցուցանիշով այն առաջ է անցել ԵՄ առաջատար մյուս երկրներից։ Նմանապես, եթե 2000-2005թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ փոխադարձ առևտրում Ֆրանսիայի արտահանման ծավալները գրեթե չեն փոփոխվել, ապա ներմուծումը ԵՄ անդամ-երկրներից աճել է 8.9%։ Այստեղ հարկ է նշել, որ ԵՄ առաջատար երկրների շարքում ԵՄ փոխադարձ առևտրի ցուցանիշներով աչքի է ընկնում Գերմանիան, քանի որ 2000-2006թթ. ընկած ժամանակահատվածում զգալի աճել են և՛ արտահանման (44.9%), և՛ ներմուծման (35.6%) ծավալները։

ԵՄ փոխադարձ առևտրում կառույցի անդամ ոչ առաջատար երկրներից ներմուծման ծավալների զգալի աճ են գրանցել Բելգիան (47.8%), Լյուքսեմբուրգը (46.0%), Ֆինլանդիան (40.1%), Դանիան (38.3%), Ավստրիան (37.2%) և Նիդեռլանդները (31.1%)։

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ ԵՄ անդամ-երկրների համար փոխադարձ առևտուրը շատ մեծ դեր է կատարում։ Ավելին, ինչպես մենք նկատեցինք, փոխադարձ առևտուրը (և՛ արտահանման, և՛ ներմուծման գծով) դրսևորում է անընդհատ աճի միտում (բացառությամբ որոշ երկրների), ինչը վկայում է այն մասին, որ ԵՄ անդամ-երկրների տնտեսություններն ավելի ու ավելի են փոխկապակցվում։

Նախորդ բաժնում մենք վերլուծեցինք ԵՄ 15 երկրների փոխադարձ առևտուրը ԵՄ բոլոր երկրների հետ՝ ցույց տալով, թե յուրաքանչյուր երկրի համար որքան է կազմում փոխադարձ առևտրի ծավալը։ Այս բաժնում մենք կփորձենք վերլուծել ԵՄ 15 երկրների փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքը։ Այդ պատճառով

---

<sup>45</sup> ԵՄ անդամ 15 երկրների փոխադարձ առևտուրը միմյանց հետ (ներմուծման գծով) ներկայացված է հավելված 1-ում։ Այստեղ հարկ է նշել, որ ներմուծումը հաշվարկված է CIF գնով։

մենք ԵՄ անդամ 15 երկրներին պայմանականորեն կխմբավորենք, որը կհեշտացնի վերլուծությունը և հնարավորություն կտա կատարելու ընդհանրացումներ՝ ըստ այդ խմբավորման չափանիշների:

I խումբ - ԵՄ խոշոր երկրներ (ըստ մակրոտնտեսական ցուցանիշների): Այս խմբի մեջ մտնում են ԵՄ առաջատար երկրները՝ Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Իտալիա:

II խումբ - ԵՄ փոքր երկրներ (ըստ մակրոտնտեսական ցուցանիշների), որն իր հերթին արդեն, ըստ աշխարհագրական սկզբունքի, կարելի է բաժանել ենթախմբերի

II-ա) **Հյուսիսային Եվրոպա** - Շվեդիա, Ռանիա, Ֆինլանդիա

II-բ) **Կենտրոնական Եվրոպա** - Նիդեռլանդներ, Բելգիա, Ավստրիա, Իռլանդիա

II-գ) **Հարավային Եվրոպա** - Իսպանիա, Հունաստան, Պորտուգալիա

II-դ) **«գաճաճ» երկիր** - Լյուքսեմբուրգ

**ԵՄ առաջատար երկրներ:** Ինչպես նկատում ենք հավելված 2-ից, ԵՄ առաջատար երկրների ԵՄ բոլոր երկրների հետ փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքում գերակշռում է մեքենաներ և սարքավորումներ ապրանքախումբը, որտեղ և՛ ներմուծման, և՛ արտահանման ծավալներով առաջատար դերը պատկանում է Գերմանիային<sup>46</sup>: Այսպես, 2006թ. տվյալներով Գերմանիայից դեպի ԵՄ երկրներ ամբողջ արտահանման 46.3%-ը և ԵՄ երկրներից դեպի Գերմանիա ներմուծման 37.8%-ը կազմել է մեքենաներ և սարքավորումներ ապրանքախումբը: ԵՄ փոխադարձ առևտրում այս ապրանքախմբի արտահանման և ներմուծման ծավալներով երկրորդ տեղում է Ֆրանսիան, այնուհետև Մեծ Բրիտանիան և Իտալիան:

ԵՄ փոխադարձ առևտրում մյուս գերակշռող ապրանքախումբը (արժեքային առումով) քիմիական արտադրանքն է: Քիմիական արտադրանքի արտահանման և ներմուծման ծավալներով նույնպես առաջատար է համարվում Գերմանիան: Երկրորդ տեղում կրկին Ֆրանսիան է, այնուհետև Մեծ Բրիտանիան և Իտալիան:

Գյուղատնտեսական ապրանքների արտահանման և ներմուծման ծավալներով պատկերը գրեթե նույնն է: Այսպես, ԵՄ փոխադարձ առևտրում գյուղատնտեսական ապրանքների արտա-

---

<sup>46</sup> Այստեղ հարկ է նշել, որ ԵՄ երկրների հետ փոխադարձ առևտրի ծավալներով Գերմանիան ԵՄ 15 երկրների շարքում զբաղեցնում է առաջին տեղը:

հանման և ներմուծման ծավալներով առաջին տեղում է Գերմանիան, իսկ երկրորդում՝ Ֆրանսիան: Սակայն, ի տարբերություն նախորդ երկու ապրանքախմբերի, այս ապրանքախմբի արտահանման և ներմուծման ծավալներով երրորդ տեղում է Իտալիան, իսկ չորրորդում՝ Մեծ Բրիտանիան:

**Յուսիսային Եվրոպա.** ԵՄ երկրների հետ փոխադարձ առևտրի ծավալներով Յուսիսային Եվրոպայի երկրներից առանձնանում է Շվեդիան (տե՛ս հավելված 2): Ինչպես և ԵՄ առաջատար երկրներում, այստեղ նույնպես ԵՄ փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքում գերակշռում է մեքենաներ և սարքավորումներ ապրանքախումբը, որտեղ և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալներով առաջատար տեղը պատկանում է Շվեդիային: Միևնույն ժամանակ, եթե Շվեդիայի դեպքում ԵՄ փոխադարձ առևտրում մյուս գերակշռող ապրանքախումբը քիմիական արտադրանքն է, ապա Դանիայի դեպքում գյուղատնտեսական ապրանքներն են:

**Կենտրոնական Եվրոպա.** Կենտրոնական Եվրոպայի երկրներից ԵՄ երկրների հետ փոխադարձ առևտրի ծավալներով առանձնանում է Նիդեռլանդները: ԵՄ երկրների հետ Կենտրոնական Եվրոպայի երկրների (բացի Բելգիայից<sup>47</sup>) փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքում գերակշռում է մեքենաներ և սարքավորումներ ապրանքախումբը: Ընդ որում այստեղ և՛ ներմուծման, և՛ արտահանման ծավալներով առաջատար դերը պատկանում է Նիդեռլանդներին: ԵՄ երկրների հետ փոխադարձ առևտրում Կենտրոնական Եվրոպայի երկրների ապրանքային կառուցվածքում մյուս գերակշռող ապրանքախումբը քիմիական արտադրանքն է:

**Հարավային Եվրոպա:** Ինչպես նկատում ենք, Հարավային Եվրոպայի երկրները ԵՄ երկրների հետ փոխադարձ առևտրի ծավալներով զգալի զիջում են վերը նշված երկրներին: ԵՄ երկրների հետ փոխադարձ առևտրի համեմատաբար մեծ ծավալով Հարավային Եվրոպայի երկրներից առանձնանում է Իսպանիան (տե՛ս հավելված 2): Ինչպես և մյուս դեպքերում, Հարավային Եվրոպայի բոլոր երկրների ապրանքային կառուցվածքում գերակշռում է մեքենաներ և սարքավորումներ ապրանքախումբը: Այսպես, 2006թ. տվյալներով Իսպանիայից դեպի ԵՄ երկրներ ամբողջ արտահանման

---

<sup>47</sup> Բելգիայի դեպքում, եթե նշված ժամանակաշրջանում՝ մինչև 2004թ., ԵՄ փոխադարձ առևտրում գերակշռող ապրանքախումբը մեքենաներ և սարքավորումներն էին, ապա 2005թ. ի վեր քիմիական արտադրանքն է (տե՛ս հավելված 2):

40.8%-ը և ԵՄ երկրներից դեպի Իսպանիա ներմուծման 46,2%-ը բաժին է ընկել այս ապրանքախմբին: Հարավային Եվրոպայի երկրների և ԵՄ անդամների հետ փոխադարձ առևտրում մյուս գերակշռող ապրանքախումբը, ինչպես և մյուս դեպքերում, քիմիական արտադրանքն է:

ԵՄ-ի հետ Հայաստանի Հանրապետության իրավական համագործակցության հիմքը դրվել է 1996թ. ապրիլի 22-ին՝ ԵՄ և ՀՀ միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (Partnership and Cooperation Agreement, PCA) ստորագրումով, որը ուժի մեջ է մտել 1999թ. հուլիսի 1-ին<sup>48</sup>: Թե ինչու 1996թ. ստորագրված համաձայնագիրը ուժի մեջ մտավ միայն 1999թ., բացատրվում է այն հանգամանքով, որ 1997թ. Հայաստանի և ԵՄ միջև կնքվեց մեկ միջանկյալ պայմանագիր, որը պետք է կարգավորեր Գործընկերության և համագործակցության համաձայնագրում արտացոլված առևտրին և հարկերին վերաբերող հիմնախնդիրները: Իրականում համաձայնագիրը ներառում է ՀՀ և ԵՄ միջև համագործակցության բոլոր ոլորտները, բացի ռազմականից: Ընդհանուր առմամբ համաձայնագրի հիմնական նպատակն է Հայաստանում հաստատել և զարգացնել շուկայական համակարգ:


2004թ. մայիսին ԵՄ ընդլայնման արդյունքում փոփոխվեցին ԵՄ արտաքին սահմանները: Որպես հետևանք՝ փոփոխվեց նաև ԵՄ քաղաքականության աշխարհագրությունը՝ ընձեռելով նոր հնարավորություններ խորացնելու առկա հարաբերությունները ԵՄ և իր նոր՝ արևելյան և հարավային հարևան երկրների միջև: Արդյունքում Հայաստան-ԵՄ ինտեգրման գործընթացները էլ ավելի զարգացան, երբ 2004թ. հունիսին Եվրոպական հանձնաժողովի առաջարկով Հայաստանն ընդգրկվեց Եվրոպական հարևանության քաղաքականության (European Neighborhood Policy, ENP) մեջ: ԵՄ Եվրոպական հարևանության քաղաքականությունն ընդգրկում է նոր մոտեցումներ, որոնք առաջանցիկ են ԵՄ և հարևան երկրների միջև առկա հարաբերություններից և համագործակցությունից: Քաղաքականության հիմնական նպատակն է ԵՄ ընդլայնման օգուտները կիսել բոլոր ցանկացող հարևան երկրների հետ՝ երկուստեք բարձրացնելով կայունությունը, անվտանգությունը, բարեկեցությունը,

<sup>48</sup> Ներկայումս ԵՄ հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագիր ունեն հետևյալ երկրները՝ Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ուզբեկստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան:

ինչպես նաև խուսափել ընդարձակված ԵՄ և հարևան երկրների միջև նոր՝ տարանջատող սահմանային վերածնունդների առաջացումից:

**Գծանկար 13**

**ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ երկրների հետ (մլն դոլար)<sup>49</sup>**



Ինչպես նկատում ենք գծանկար 13-ից, 1993-2008թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ հետ արտաքին առևտուրն ունեցել է զրեթե անընդհատ աճի միտում: Այսպես, 1993-2000թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ երկրների հետ անընդհատ աճել է, ընդ որում միաժամանակ աճել են և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները<sup>50</sup>: Սակայն, պատկերը փոխվում է 2001թ., երբ 17.1%-ով կրճատվում է դեպի ԵՄ արտահանման ծավալը՝ կազմելով 88.6 մլն դոլար<sup>51</sup>: Այնուհետև 2002թ. ավելի քան երկու անգամ աճում են Հայաստանից ԵՄ արտահանման ծավալները: Ընդհանուր առմամբ ԵՄ երկրների հետ ՀՀ արտաքին

<sup>49</sup> Աղբյուր՝ ՀՀ արտաքին առևտուրը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:  
<sup>50</sup> Եթե 1993-1997թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտրի ամենագլխավոր գործընկերը ԵՄ-ն է:  
<sup>51</sup> Նմանապես 2001թ. 16.5%-ով կրճատվել է նաև ԵՄ-ից ներմուծման ծավալը՝ կազմելով 252.2 մլն դոլար:

առևտուրը (թե՛ արտահանման և թե՛ ներմուծման կտրվածքով) զգալի տեմպերով սկսել է աճել 2002թ.-ից: Այսպես, 2003-2008թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանից ԵՄ արտահանման ծավալը աճել է 121.5%-ով, իսկ ԵՄ-ից Հայաստան ներմուծման ծավալը՝ 214.9%-ով: ԵՄ հետ արտաքին առևտրաշրջանառության մասն աշխուժացումը կարելի է բացատրել այն փաստով, որ 2003թ. սկզբին Հայաստանի՝ ԱՀԿ անդամակցությունը ԵՄ երկրների շուկաները էլ ավելի հասանելի և շահավետ դարձրեց հայկական ապրանքների համար: Միևնույն ժամանակ ԱՀԿ անդամակցությունը մաս էլ ավելի հասանելի և շահավետ դարձրեց հայկական շուկան եվրոպական ապրանքների համար: Մյուս կողմից, հարկ է նշել, որ ԵՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ավելացումը մաս կրել է ավտոնոմ բնույթ: Այսինքն՝ ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալների ավելացում գրանցվել է մաս մինչև Հայաստանի՝ ԱՀԿ անդամակցությունը, որը լրացուցիչ խթան հանդիսացավ այդ գործընթացի համար:

## Աղյուսակ 5

### ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ 2007թ. (մլն դոլար)<sup>52</sup>

	Գերմանիա	Քելզիա	Նիդեռլանդիա	Ավստրիա	Իտալիա	Մեծ Բրիտանիա	Ֆրանսիա
Արտահանում	169.6	100.2	156.0	5.5	30.0	2.7	9.4
Ներմուծում <sup>53</sup>	116.0	157.3	22.2	124.7	95.0	117.9	65.6
Բաժինը ԵՄ ընդհ. ապրանք. մեջ (%)	18.7%	16.8%	11.6%	8.5%	8.1%	7.8	4.9

ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտրի և՛ աշխարհագրական, և՛ ապրանքային կառուցվածքը, ինչպես և ՀՀ ընդհանուր արտաքին առևտրի դեպքում, շատ կենտրոնացված է (աղյուսակ 5

<sup>52</sup> Աղբյուր՝ ՀՀ արտաքին առևտուրը 2008թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

<sup>53</sup> Ներմուծման ծավալները ներկայացված են ըստ առևտուր անող երկրի հատկանիշի:

և աղյուսակ 6): ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտրի կենտրոնացվածությունը մեկնաբանվում է այն փաստով, որ ԵՄ 15 երկրներից Հայաստանի գլխավոր առևտրային գործընկեր երկրներն են՝ Գերմանիան, որին բաժին է ընկնում ընդհանուր ապրանքաշրջանառության 18.7%-ը, Բելգիան (16.8%), Նիդեռլանդները (11.6%), Ավստրիան<sup>54</sup> (8.5%), Իտալիան (8.1%), Մեծ Բրիտանիան (7.8%), Ֆրանսիան (4.9%) և Հունաստանը (3.9%): Ընդհանուր առմամբ նշված երկրներին բաժին է ընկնում ԵՄ 27 երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ավելի քան 80.0%-ը, իսկ ԵՄ 15 երկրների հետ արտաքին առևտրի՝ 90.5%-ը:

### Աղյուսակ 6.

#### ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ առևտրում գլխավոր ապրանքախմբերը 2006թ.<sup>55</sup> (մլն դոլար)

	Գերմանիա		Բելգիա		Նիդեռլանդներ		Ավստրիա		Իտալիա	
	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.
Սև մետաղներ և իրեր	98.6	-	-	-	138.5	-	3.0	-	-	9.0
Պղինձ	62.2	-	-	-	3,3	-	1.8	-	-	5.7
Սարքավորումներ	-	23.0	-	-	-	1.9	-	1.7	-	33.6
Տրանսպորտային միջոցներ	-	132.3	-	-	-	-	-	1.9	-	5.1
Թանկարժեք քարեր և մետաղներ	-	-	96.5	104.4	-	-	-	112.4	-	2.0
Տրիկոտաժե հագուստ	-	-	-	-	-	-	-	-	23.8	14.4
Էլեկտրական սարքավորումներ	-	10	-	-	-	-	-	-	-	4.5
Ղեղազործական մթերք	-	6.4	-	-	-	2.0	-	1.6	-	3.2
Բժշկական ապարատներ	-	9.2	-	-	-	1.5	-	-	-	2.4

<sup>54</sup> Այստեղ հարկ է նշել, որ 2006թ. տվյալներով արտաքին ապրանքաշրջանառության ծավալը Ավստրիայի հետ կազմել է 50.4 մլն դոլար (ԵՄ 27 երկրների հետ արտաքին առևտրի 4.3%-ը): 2007թ. Ավստրիայի հետ արտաքին ապրանքաշրջանառության ավելացումը հիմնականում պայմանավորվել է ներմուծման աճով (2007թ. 2006թ. հետ համեմատած ներմուծումը Ավստրիայից ավելացել է 167.5%-ով):

<sup>55</sup> Ներմուծման ծավալները ներկայացված են ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի:

Ուսումնասիրելով վերը նշված ԵՄ 15 երկրներից հիմնական գործընկեր երկրների հետ կատարվող արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը՝ որոշ ապրանքախմբերի գծով նկատվում է զգալի կենտրոնացում (տե՛ս աղյուսակ 6): Այսպես, ՀՀ և ԵՄ հիմնական գործընկեր երկրների միջև արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում հիմնականում գերակշռում են մետաղները (մասնավորապես սև մետաղները, պղինձը և այլ ոչ թանկարժեք մետաղներ), թանկարժեք քարերը, տրանսպորտային միջոցները, մեքենաներ և սարքավորումները, տրիկոտաժե հագուստը, էլեկտրական սարքավորումները, դեղագործական մթերքը և բժշկական ապարատները:

Ինչպես նկատում ենք աղյուսակ 6-ից, ԵՄ 15 հիմնական գործընկեր երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում զգալի կենտրոնացում է նկատվում Բելգիայի, Նիդեռլանդների և Ավստրիայի հետ արտաքին առևտրում: Առաջինի դեպքում՝ բացառապես թանկարժեք քարերի գծով, իսկ Նիդեռլանդների և Ավստրիայի հետ՝ համապատասխանաբար մետաղների և թանկարժեք քարերի գծով: Գերմանիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ արտաքին առևտրում նկատվում է հարաբերականորեն որոշակի տարբերակվածություն (հիմնականում ներմուծման գծով): Ավելին, ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ ԵՄ 15 երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի (արտահանման կտրվածքով) թե՛ աշխարհագրական և թե՛ ապրանքային կառուցվածքը խիստ կենտրոնացված է, իսկ ներմուծման կտրվածքով առկա է հարաբերական տարբերակում:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ Հայաստանից ԵՄ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում մետաղները և դրանցից պատրաստված իրերը: Մետաղները արտահանվում են հիմնականում Գերմանիա և Նիդեռլանդներ: Ավելին, 2005-2007թթ. ընկած ժամանակաշրջանում դեպի ԵՄ արտահանման մեջ մետաղների ընդհանուր բաժինը կազմել է համապատասխանաբար 55.0%, 61.9% և 65.1%<sup>56</sup>: Հայաստանից ԵՄ արտահանվող մյուս գլխավոր ապրանքախումբը թանկարժեք քարեր և մետաղներն են (18.3%), որը արտահանվում է բացառապես Բելգիա: 2007թ. տվյալներով ԵՄ-ից դեպի Հայաստան արտահանման մեջ

<sup>56</sup> Տե՛ս «Eurostat», Statistical regime 4, Armenia:

մեծ տեսակարար կշիռ են կազմել թանկարժեք քարեր և մետաղները<sup>57</sup> (26.5%), մեքենաները և սարքավորումները, ինչպես նաև էլեկտրական սարքավորումները (24.4%), տրանսպորտային միջոցները (7.1%) և քիմիական ապրանքները (6.9%):

Անդրադառնալով գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամին՝ կարող ենք փաստել, որ այն միանշանակ, ինչպես և սպասվում էր, բացասական ազդեցություն է ունեցել ԵՄ երկրների հետ ՀՀ արտաքին առևտրի վրա:

Նախ դիտարկենք, թե ինչ ազդեցություն է ունեցել գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը ՀՀ արտաքին առևտրի վրա: Այսպես, 2008թ. նախորդ տարվա հետ համեմատած 8.2%-ով կրճատվել է արտահանման ծավալը, իսկ ներմուծման ծավալը աճել է 35.4%-ով (2007թ. նախորդ տարվա հետ համեմատած ներմուծման աճը կազմել էր 49.2%): Ավելին, 2009թ. հունվար-օգոստոս ամիսների կտրվածքով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած արտահանումը կրճատվել է 41.0%-ով, իսկ ներմուծումը՝ 27%-ով:

Վերլուծելով ԵՄ երկրների հետ ՀՀ արտաքին առևտուրը՝ կարող ենք փաստել, որ չնայած 2008թ. ՀՀ ընդհանուր արտահանման ծավալի կրճատմանը, 2008թ. դեպի ԵՄ արտահանումն աճել է 1.8%-ով, իսկ ներմուծումը՝ 21.6%-ով (տե՛ս գծանկար 13): Սակայն 2009թ. հունվար-օգոստոս ամիսների կտրվածքով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած դեպի ԵՄ արտահանումը կրճատվեց 52.9%-ով, իսկ ներմուծումը՝ 39.5%-ով: Այստեղ հարկ է նշել, որ դեպի ԵՄ երկրներ արտահանման ծավալների նման կրճատումը թերևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԵՄ գլխավոր առևտրային գործընկեր երկրների շարքից դեպի Գերմանիա և Նիդեռլանդներ հիմնականում արտահանվում էին հունքային ապրանքներ (աղյուսակ 6), իսկ գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջին ակիբը հենց մեծ վնասներ հասցրեց հանքահունքային արդյունաբերությանը, որի արդյունքում համաշխարհային տնտեսության մեջ զգալի նվազեցին հանքահունքային ապրանքների միջազգային գները: Մեր կարծիքով, ԵՄ երկրների հետ արտաքին առևտրում (արտահանման կտրվածքով)

---

<sup>57</sup> Թանկարժեք քարերը և մետաղները ներմուծվում են հիմնականում Բելգիայից, իսկ սկսած 2006թ.՝ նաև Ավստրիայից:

գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը հնարավորինս փոքր կլիներ, եթե դեպի ԵՄ երկրներ արտահանվող ապրանքային կառուցվածքը լիներ տարբերակված, և դրանում գերակշռեին ոչ թե հանքահումքային, այլ պատրաստի վերջնական ապրանքները: Ավելին, եթե փորձենք ընդհանրացնել, ապա դա ճիշտ է նաև ՀՀ ընդհանուր արտաքին առևտրի (արտահանման կտրվածքով) համար: Այսինքն, տվյալ իրավիճակից արագ դուրս գալու և հետագայում նման իրավիճակներում (գլոբալ ճգնաժամեր) արտահանման ծավալների կրճատումը մեղմելու համար միանշանակ պետք է նախապայմաններ ստեղծել տեղական տարբերակված արդյունաբերության զարգացման համար: Մյուս կողմից, ներմուծման ծավալների կրճատումը նույնպես հիմնականում պայմանավորված է գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով արտասահմանից հանրապետություն փոխանցվող տրանսֆերտների կրճատմամբ: Տվյալ իրավիճակում կրկին տեղական տարբերակված արդյունաբերության զարգացումը նասամբ կկրճատի ներմուծվող ապրանքների պահանջարկը, քանի որ դրանց մի մասը կփոխարինվի տեղական արտադրությամբ համանման կամ փոխարինող ապրանքներով:

## ԳԼՈՒԽ 4

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՆԴԱՍ (12) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ**

---

Ձարգացող երկրների շրջանակներում համագործակցության զաղափարը ծագել է արևմտաեվրոպական տնտեսական ինտեգրացիայի հաջողությունների վրա: Սակայն, եթե Արևմտյան Եվրոպայի երկրների համագործակցությունը տնտեսական աճի բարձր տեմպեր ունեցող երկրների փոխլրացման համաձայնությունն է, ապա զարգացող երկրների համար ինտեգրացիան արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը հաղթահարելու, ներքին շուկայում զարգացած երկրների մրցակցությանը դիմակայելու, համաշխարհային շուկայում իրենց դիրքերն ամրապնդելու ձգտումն է:

Ձարգացող երկրների տնտեսական ինտեգրացիան չի կարելի համարել երկրների միջև անընդհատ խորացող տնտեսական կապերի օրենսդրական, հարկային, սոցիալական ոլորտների միջպետական կոորդինացման գործընթաց: Այսօր զարգացող երկրների տնտեսական համագործակցությունը կարելի է գնահատել որպես ինտեգրացիոն գործընթացների նախապատրաստական աստիճան: Համագործակցության շարժիչ ուժը ազգային տնտեսական ներուժի կոնկրետ առավելությունների միավորման օգտագործումն է, տնտեսական կյանքի միջազգայնացումն ու հատկապես առևտրային կապերի ինտենսիվացումը, իսկ վերջնական նպատակը լայնածավալ տնտեսական տարածքի ձևավորման պայմաններում ազգային տնտեսությունների արդիականացումն է: Միևնույն ժամանակ, զարգացող երկրների համագործակցության նպատակը տնտեսական աճի համար բարենպաստ պայմանների ձևավորումն է (ավելի տարողունակ ներքին շուկան տնտեսության արդիականացման ու կառուցվածքային վերափոխումների հաջո-

ղության կարևոր պայման է), որին կարելի է հասնել համատեղ գործելու դեպքում:

Ձարգացող երկրների ինտեգրացիան ավելի շուտ մասնակից պետությունների տնտեսական քաղաքականության համաձայնեցում է, քան տնտեսական փոխկապվածության և փոխլրացման օբյեկտիվ գործընթաց: Այսպես, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) երկրների ինտեգրումը Եվրամիությանը, որն ուղեկցվեց ներտարածաշրջանային առևտրի ազատականացմամբ և լայնածավալ տնտեսական տարածքի ստեղծմամբ, թույլ տվեց խթանել մասնակից պետությունների ներմուծմանը փոխարինող արտադրությունների զարգացումն ու արդյունաբերական ձեռնարկությունների թվի ավելացումը: Այդ ճանապարհով բացառապես բավարարվում էին ներքին շուկայի պահանջումները, որի շնորհիվ էլ ներտարածաշրջանային ապրանքաշրջանառությունը բավականին աճեց: Ինչ վերաբերում է տնտեսական միությանը, ապա դա ստեղծվեց այն ժամանակ, երբ երկրների փոխադարձ առևտրի տեսակարար կշիռը գերազանցեց սեփական ապրանքաշրջանառության ծավալը:

Սույն վերլուծության հիմնական նպատակն է տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների ռազմավարության և այդ ուղղությամբ դիտարկվող, տարածաշրջանում առկա տարածաշրջանային տնտեսական ինտեգրման նախադրյալների վերլուծության հիման վրա մշակել ՀՀ և ԵՄ տնտեսական համագործակցության համեմատաբար արդյունավետ մոդել, որը կարող է առավելագույնս նպաստել ՀՀ տնտեսական առաջընթացին, դառնալ ապագա զարգացումների հիմնական ուղենիշը:

Նշված նպատակի իրացումը գործնական հիմքերի վրա փոխադրելու, տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներին Հայաստանի մասնակցությունն ակտիվացնելու նկատառումներով հետազոտության մեջ խնդիր է դրվել վերլուծել ՀՀ և ԿԱԵ երկրների առևտրային հարաբերությունները, բացահայտել դրանց թերություններն ու առավելությունները, համագործակցության առավել նախընտրելի ոլորտները և այն ուղիները, որոնք զգալիորեն կնպաստեն ՀՀ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների խթանմանը:

Ինչպես գիտենք, տարածաշրջանային ինտեգրման տեսանկյունից առավել կարևորվում է երկրների միջև բավարար առևտրային հարաբերությունների առկայությունը: Այդ առումով անհրաժեշտ է

նախ ուսումնասիրել ՅՅ և ԿԱԵ երկրների արտաքին առևտրի ծավալները, դրանց դինամիկան և կառուցվածքը (ավելված 3): Բնականաբար, Չայաստանը և ԿԱԵ երկրներն, աչքի չեն ընկնում կազմակերպված ու փոխլրացման բավարար մակարդակ ունեցող արտաքին առևտրային հարաբերություններով: Դա կարելի է բացատրել նախ նրանով, որ ԿԱԵ երկրների մեծ մասը ՅՅ-ի նախկին սոցիալիստական համակարգի երկրներ են, որոնք մինչ այժմ չունեն արտաքին առևտրի կազմակերպված հոսքեր և երկրորդ, ԿԱԵ երկրներն ունեն արտաքին առևտրի այնպիսի գործընկերներ, ինչպիսին Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրներն են, որոնց հետ առևտուրն ազատ է: Ուստի, ներմուծման ենթակա բոլոր հնարավոր ապրանքներն այս երկրները կնախընտրեն ներմուծել հենց Արևմտյան Եվրոպայից, իսկ ՅՅ-ն արտահանման իր թույլ ներուժով կարող է ծառայել միայն որպես իրացման նեղ շուկա: Արտաքին առևտրի ծավալների և կառուցվածքի մանրակրկիտ ուսումնասիրությունից անմիջապես պարզ է դառնում, որ ՅՅ և ԿԱԵ երկրները կարծես «փնտրտուքի» մեջ են: Մի շարք ապրանքներ, որոնք ներմուծվել են 2006թ. (օրինակ՝ «Ձկներ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Կաշի և կաշվե հումք» ապրանքախմբերը), 2007թ. ընդհանրապես դադարել են արտահանվել: Կամ հակառակը, 2006թ. առանձին երկրների հետ այդ ապրանքների կապակցությամբ առևտուրը բացակայել է, իսկ 2007թ. հասել մեծ չափերի («Չանքաքար, խարամ և մոխիր» ապրանքախումբ): Սա խոսում է այն մասին, որ դեռ չեն բացահայտվել համեմատական առավելություններով օժտված այն ճյուղերը, որոնց շուրջ առևտուրը կարող է լինել կայուն և բերել բավարար արդյունքներ:

Չայաստանի և ԿԱԵ երկրների առևտրին մասնակցում են մոտ 97 ապրանքախմբեր, որոնցից առավել մեծ չափերի են հասնում հավելվածում ներկայացված 32 ապրանքախմբերը: Ընդ որում, արտահանվող ապրանքների ծավալները մի քանի անգամ հետ են մնում ներմուծման ծավալներից: Այնուամենայնիվ, դիտարկելով հավելվածում բերված 32 ապրանքախմբերի առևտուրը՝ կարելի է փաստել, որ ՅՅ և ԿԱԵ երկրների արտաքին առևտրում 2006-2007թթ. նկատվում է դրական միտում: Այսպես, արտահանման ծավալները մեկ տարվա ընթացքում աճել են մոտ հինգ անգամ՝ 11.6 մլն-ից հասնելով 57.3 մլն-ի: Այս աճը տեղի է ունեցել հիմնականում «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» (10.3%),

«Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ» (249%), «Ալյումին և դրանից իրեր» (1600%), «Հանքաքար, խարամ և մոխիր» (8600%) ապրանքախմբերի հաշվին: Հատկանշական է նաև այն փաստը, որ Բուլղարիա արտահանվող «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքախումբը 2007թ. հասել է 30.1 մլն դոլարի 2006թ. 100 դոլարի փոխարեն: Ուստի 2007թ. ԿԱԵ երկրներ արտահանվող ապրանքների աճի 47.4%-ը տեղի է ունեցել հենց այս ապրանքախմբի հաշվին, սակայն այն արտահանվում է 12 երկրներից միայն Բուլղարիա, Չեխիա և Ռումինիա: Արտահանվող ապրանքների շարքում մեծ է նաև «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբի արտահանման բաժինը, ընդ որում այս ապրանքախումբն այն մի քանիսից է, որի կապակցությամբ արտահանումն ու ներմուծումը հավասարակշռում են: Սակայն, եթե արտահանումը դիտարկվող ժամանակահատվածում աճել է 10.3%-ով, ապա ներմուծումը՝ 200%-ով: Հարկ է նշել նաև, որ «Չկներ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ» ապրանքախումբը (որը համեմատական առավելություններով օժտված ճյուղ է ՀՀ-ում), 2006թ. ունենալով արտահանման որոշակի ծավալներ, 2007թ. ընդհանրապես չի արտահանվել: Նվազել են նաև «Պլաստմասսա և դրանից իրեր» (86%), «Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր» (7.6%), «Կաշի և կաշվե հումք» (100%), «Փայտ և փայտից իրեր, փայտածուխ» (93.6%), «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից» (51.6%) ու «Սև մետաղներ» (100%) ապրանքախմբերի արտահանման ծավալները:

Ինչ վերաբերում է ԿԱԵ երկրների շրջանակներում հիմնական գործընկերներին, ապա արտահանման առումով առաջին տեղում են Բուլղարիան, Լեհաստանը և Լատվիան: Այսպես, 2007թ. դիտարկվող ապրանքների արտահանման 81.7%-ը բաժին է ընկնում Բուլղարիային, 11.5%-ը՝ Լեհաստանին և 2.1%-ը՝ Լատվիային: Փաստորեն արտահանման 95.3%-ը բաժին է ընկնում երեք երկրի, իսկ 4.7%-ը՝ մնացած 9 երկրներին: Արտահանման ծավալներով ամենավերջին տեղում են Սլովակիան, Սլովենիան, Մալթան և Էստոնիան, որոնց բաժինը ընդհանուր արտահանման մեջ 2007թ. համապատասխանաբար կազմել է՝ 0.001%, 0.007%, 0.02% և 0.08%: Աննշան են նաև դեպի Կիպրոս արտահանման ծավալները՝ 0.17%: Մերձբալթյան երկրներից առևտրի առավել մեծ հոսքերը փաստորեն բաժին են ընկնում Լատվիային, իսկ ար-

տահանման ապրանքային կառուցվածքում գերակշռում է ոգելից և ոչ ոգելից խմիչքների բաժինը: Երկրորդ տեղում, բնականաբար, Լիտվան է արտահանման 0.16% ցուցանիշով և, Լատվիային համանման, այս երկիր արտահանվող ապրանքների 98.3%-ը ոգելից և ոչ ոգելից խմիչքներն են: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Յունգարիայից Հայաստանը ներմուծում է դիտարկվող 32 ապրանքախմբերից 14-ը, իսկ արտահանում է միայն «Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախումբը, սակայն նույնիսկ միայն այդ ապրանքախմբով ՀՀ արտահանման կառուցվածքում Յունգարիայի բաժինը կազմում է 0.9%: Եվ չնայած նրան, որ Ռումինիայից ներմուծումը մի քանի անգամ գերազանցում է արտահանումը, այնուամենայնիվ արտահանումը դեպի Ռումինիա կազմում է ընդհանուր արտահանման 1.2%-ը: Հարկ է նշել նաև, որ ԿԱԵ երկրների շրջանակներում առևտրի ամենամեծ ծավալները գրանցել են Չեխիան, Հունգարիան, Լեհաստանը և Սլովակիան: Այս երկրների հետ բավականին ակտիվ է նաև ՀՀ առևտուրը: Իսկ Կիպրոսը և Մալթան, որոնք աչքի չեն ընկնում ակտիվ առևտրային հարաբերություններով նույնիսկ ԵՄ շրջանակներում, ունեն ընդգծված թույլ առևտրային կապեր նաև ՀՀ-ի հետ:


Հարկ է նաև նշել, որ 2008թ. ՀՀ-ԿԱԵ արտաքին առևտուրը աճեց 46%-ով, ընդ որում արտահանումը` 16.5%-ով: Եվ չնայած 2009թ. գրանցած անկմանը` արտահանման աշխարհագրական կառուցվածքը էական փոփոխությունների չի ենթարկվել. այժմ ևս Բուլղարիային, Լեհաստանին և Չեխիային բաժին է ընկնում համախառն արտահանման գերակշիռ մասը: Սակայն, եթե դեպի Բուլղարիա և Չեխիա ՀՀ արտահանման ծավալները ճգնաժամի ազդեցությամբ ոչ միայն չեն կրճատվել, այլ ընդհակառակը, նույնիսկ աննշան աճ են գրանցել, ապա արտահանումը դեպի Լեհաստան կրճատվել է 88%-ով: Եապես կրճատվել են նաև դեպի Ռումինիա, Կիպրոս և Սլովակիա արտահանման ծավալները, համապատասխանաբար` 69%, 65%, 50%: Հարկ է նաև նշել, որ Հունգարիան ՀՀ համախառն արտահանման աշխարհագրական կառուցվածքում այն մի քանի երկրներից է, որի հետ առևտուրը ճգնաժամային 2009թ. աճել է 2 անգամ:

Այսպիսով, ներկայացնենք ԿԱԵ երկրներից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը ՀՀ-ԿԱԵ համախառն արտահանման մեջ մինչ ճգնաժամը և ճգնաժամի ընթացքում (տես գծանկար 14):


Գծանկար 14

ՀՀ-ԿԱԵ արտահանման մեջ յուրաքանչյուր երկրի տեսակարար կշիռը (տոկոսներով)<sup>58</sup>

2007թ.



2009թ.



\* «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագիրը տվյալներ է տրամադրում միայն գծանկարում բերված ԿԱԵ 7 երկրների վերաբերյալ:

<sup>58</sup> Գծանկարը կազմվել է «ՀՀ արտաքին առևտուրը 2007» և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագրերի տվյալների հիման վրա:

ԿԱԵ երկրներից ներմուծումը դեպի ՀՀ ավելի հարուստ է թե՛ ապրանքային կառուցվածքով և թե՛ ծավալային առումով: Նախ պետք է նշել, որ ներմուծման ծավալները 2007թ. 2006թ. համեմատությամբ աճել են 63.1%-ով, իսկ 2008թ.՝ 54.2%-ով: Սույն աճը տեղի է ունեցել հիմնականում «Ալրադացային, ձավարեղենային արտադրանք» (288%), «Շաքար և հրուշակեղեն շաքարից» (132%), «Բանջարեղենի, պտուղների և բույսերի մասերի վերամշակումից մթերք» (26%), «Ոգելից և ոչ ոգելից խմիչքներ» (203%), «Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր» (86.8%), «Ղեղազործական մթերք» (26%) «Պլաստմասսա և դրանից իրեր» (45.6%), «Փայտ և փայտից իրեր, փայտածուխ» (93.8%) ապրանքախմբերի հաշվին:

Ներմուծման առումով հիմնական գործընկերներն են Բուլղարիան, որին բաժին է ընկնում ներմուծման 43.6%-ը, Ռումինիան՝ 35.9% և Հունգարիան 9.5% ցուցանիշներով: Բուլղարիայից ներմուծման 76.1%-ը բաժին է ընկնում «Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր» ապրանքախմբին, որի բաժինը 2007թ. 2006թ. համեմատությամբ, աճել է 193.8%-ով: Մեծ են նաև «Ապակի և դրանից իրեր» ու «Պլաստմասսա և դրանից իրեր» ապրանքախմբերի բաժինները՝ 5.5% և 5.2%: Ռումինիայից և Հունգարիայից ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր» ապրանքախումբը՝ 5.2% և 61.3% ցուցանիշներով: Սակայն, եթե այս ապրանքախմբի ներմուծման ծավալները Բուլղարիայից ու Ռումինիայից 2007թ., 2006թ. համեմատությամբ նվազել են համապատասխանաբար 52.6% և 45.6%-ով, ապա Հունգարիային դրանց ներմուծումը դիտարկվող ժամանակահատվածում ավելացել է 45 անգամ: Ներմուծման ծավալները չնչին են Մալթայից՝ 0.01%, Լատվիայից՝ 0.12% և Լիտվայից 0.16%: Հարկ է նշել, որ 2007թ. Մերձբալթյան երկրներից ներմուծման ծավալները կրճատվել են. այսպես՝ Լատվիայից՝ 115%-ով, Լիտվայից՝ 25%-ով, իսկ Էստոնիայից՝ 78.2%-ով: Ընդ որում, եթե այս երեք երկրներից արտահանման առումով առաջին տեղում Լատվիան էր, ապա ներմուծման տեսանկյունից առաջինը Էստոնիան է 0.3% ցուցանիշով: Միևնույն

ժամանակ, եթե Սլովակիան ու Սլովենիան արտահանման գործընկերների շարքում վերջին տեղում էին, ապա ներմուծման առումով դրանք առաջ են անցնում Մերձբալթյան երկրներից՝ ԿԱԵ-ից համախառն ներմուծման մեջ ունենալով համապատասխանաբար 0.6% և 1.89% ցուցանիշներ: Սլովենիայից ներմուծման մեջ ամենամեծ բաժինը «Դեղագործական մթերք» ապրանքախմբին է՝ 80.2%, իսկ Սլովակիայից ներմուծման մեջ՝ «Փայտ և փայտից իրեր, փայտածուխ» ապրանքախմբինը՝ 47.6% ցուցանիշով:


Հատկանշական է, որ ներմուծումը Կիպրոսից ծավալային առումով մի փոքր գերազանցում է Չեխիայից ներմուծումը, սակայն համախառն առևտրում իրենց ունեցած տեսակարար կշռով դրանք գրեթե հավասարակշռում են՝ համապատասխանաբար կազմելով 1.95% և 1.94%: Հարկ է նաև նշել, որ թե՛ Կիպրոսից և թե՛ Չեխիայից ներմուծումը 2007թ. 2006թ. համեմատությամբ աճել է, սակայն եթե Չեխիայից ներմուծումն աճել է 38%-ով, ապա Կիպրոսից՝ 21 անգամ, մասնավորապես «Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր» ապրանքախմբի հաշվին:

Սակայն, 2009թ. ՀՀ համախառն առևտրի ընդհանուր կրճատմանը զուգահեռ, կրճատվել է նաև ԿԱԵ-ից ներմուծումը: Հատկապես Հունգարիայից, որը ԿԱԵ երկրների շարքում 2007թ. ՀՀ երրորդ ներմուծման գործընկերն էր, ներմուծումը 2009թ., նախորդ տարվա համեմատ, կրճատվել է 57%-ով, որի արդյունքում երրորդ հորիզոնականը գրավել է Լեհաստանը: Բուլղարիան և Ռումինիան շարունակում են գրավել համապատասխանաբար առաջին և երկրորդ տեղերը, սակայն այս երկրներից ներմուծումը ևս կրճատվել է մոտ 27%-ով: Արտահանմանը համանման 2009թ., նախորդ տարվա համեմատ, 50% անկում է գրանցվել նաև Սլովակիայից ներմուծման մեջ: Ուրվագծելով ԿԱԵ երկրներից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը ներմուծման մեջ՝ հնարավոր կլինի փաստել, որ դրանք արտահանման և ներմուծման ՀՀ գործընկերների կառուցվածքում զբաղեցնում են միանգամայն տարբեր տեղեր: Բացառություն է կազմում միայն Բուլղարիան, որը երկու դեպքում էլ զբաղեցնում է պատվավոր առաջին տեղը (տես գծանկար 15):


Գծանկար 15.

ՀՀ-ԿԱԵ ներմուծման մեջ յուրաքանչյուր երկրի տեսակարար կշիռը (տոկոսներով)<sup>59</sup>

2007թ.



2009թ.



<sup>59</sup> Գծանկարը կազմվել է «ՀՀ արտաքին առևտուրը 2007» և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագրերի տվյալների հիման վրա:

Այսպիսով, ՀՀ և ԿԱԵ արտաքին առևտրային շրջանառության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ եվրոպական առևտրին մեր երկրի մասնակցության մասշտաբները կախված են ներքին շուկայի ապրանքային հագեցվածության մակարդակից: Ներմուծման հաշվին ներքին շուկայի պահանջների բավարարումը տանում է արտաքին աշխարհից կախվածության մեծացմանը, որն ի վերջո սպառնում է երկրի տնտեսական անվտանգությանը: Ներմուծման փոխարինման քաղաքականության արմատավորումն ու արտահանման խթանումը՝ համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխանող ապրանքների առաջարկի ձևավորման ճանապարհով, ՀՀ տնտեսական աճի և ԵՄ-ին առավելագույնս արդյունավետ ինտեգրվելու նախընտրելի ուղին է: Սակայն, առանց էական պետական աջակցության, այսօրվա պայմաններում ՀՀ արտահանումը դեպի ԿԱԵ և՛ իր ծավալներով, և՛ կառուցվածքով ոչ միայն չի կարող բավարարել այդ երկրների հետ փոխշահավետ համագործակցության զարգացման պահանջները, այլև տեղի կունենա ներմուծման վճարման համար անհրաժեշտ արժույթային միջոցների շարունակական արտահոսք: Ուստի, միայն արտադրական հզորությունների ամբողջական օգտագործումը կտանի ցանկացած երկրի արտահանման ներուժի էական մեծացմանը, որի արդյունքում կավելանան ներմուծումը վճարելու համար անհրաժեշտ արժույթային մուտքերը: Այդ տեսանկյունից ՀՀ տնտեսական աճի ապահովման համար ավելի նախընտրելի է ավելացված մեծ արժեք պարունակող արտադրությունների զարգացումը:

Դեպի ԵՄ հայրենական արտադրանքի արտահանման խթանմանը կարող է նպաստել նաև Վրաստանի հետ ազատ առևտրի գոտու ստեղծումը, որի տարածքով առանց մաքսատուրքերի տեղական ապրանքների արտահանումը ԵՄ երկրներ հնարավորություն կտա բարձրացնել դրանց մրցունակությունը այդ շուկաներում: Միևնույն ժամանակ դա կտանի ներմուծված եվրոպական արտադրանքի էժանացմանը, ինչը բխում է մեր սպառողների շահերից:

Վերլուծությունները փաստում են, որ ԿԱԵ երկրների անդամակցությունը ԵՄ-ին հանգեցրել է նրան, որ ՀՀ և ԿԱԵ առևտուրը աճ է ապրել (տե՛ս աղյուսակ 7): Սակայն ԵՄ 15-ի հետ առևտուրը շարունակում է մի քանի անգամ գերազանցել ԿԱԵ երկրների հետ առևտրին: Այսինքն, ՀՀ-ԵՄ առևտրի աշխարհագրական կառուցվածքն ունի կենտրոնացման բարձր աստիճան, ուստի անհրա-

ժեշտ է առևտրատնտեսական հարաբերությունները խորացնել ԵՄ անդամ բոլոր երկրների հետ: Հատկապես, որ ԿԱԵ երկրներն իրենց զարգացման մակարդակով հետ են մնում Արևմտյան Եվրոպայի երկրներից, ուստի այս շուկաներում ՀՀ արտադրանքը կարող է լինել առավել մրցունակ:

Ինչ վերաբերում է ՀՀ-ԿԱԵ առևտրի ապրանքային կառուցվածքին, ապա առևտուրն այս երկրների հետ ունի անկազմակերպ և իրավիճակային բնույթ: Այս առումով կարևորում ենք եվրաինտեգրման հարցերով զբաղվող բարձրագույն գերատեսչության ստեղծումը, որը կդառնա ինտեգրացիոն գործընթացները համակարգող մարմին և իրավասու կլինի արտաքին առևտրային հարաբերությունները կառուցել փոխլրացման, մասնագիտացման խորացման հիմքի վրա (հատկապես ուշագրավ է Վրաստանի փորձը, որտեղ գործում է Եվրոպական ինտեգրման պետական նախարարությունը):

## Աղյուսակ 7

### ՀՀ արտահանումն ու ներմուծումը ԿԱԵ երկրների հետ 2004-2009թթ. (մլն ԱՄՆ դոլար)<sup>60</sup>

Երկրները	2004		2005		2006		2007		2008		2009	
	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.
Հունգարիա	0.7	5.7	1.5	6.6	0.2	7.0	0.7	23.7	0.2	38.9	0.4	30.8
Չեխիա	0.05	1.89	0.21	7.58	0.3	8.6	2.3	15.9	1.6	22.5	1.53	15.1
Սլովենիա	0	1.8	0	4.44	0.01	4.7	0.02	6.3	0.2	20.4	0.12	10.3
Սլովակիա	0.03	3.54	0.003	4.07	0.005	5.01	0.02	9.43	0.24	20.4	--	--
Լեհաստան	0.07	9.2	0.71	11.6	7.86	9.94	7.07	17.6	5.59	31.4	0.65	33.9
Բուլղարիա	4.71	53.05	0.841	27.3	1.28	41.6	46.9	87.5	59.5	118.6	60.02	87.08
Ռումինիա	0.25	34.0	0.3	75.2	0.04	83.8	0.71	68.3	0.21	100.1	0.06	72.8
Մալթա	0.005	0.05	0	0.04	0.01	0.002	0	0.002	0	0.003	--	--
Կիպրոս	0.059	1.65	1.152	0.827	0.9	0.81	0.4	4.6	0.3	1.5	0.09	1.70
Լատվիա	0.83	0.312	1.83	0.53	1.38	0.75	1.27	1.22	1.17	10.1	--	--
Լիտվա	0.13	0.34	0.14	0.44	0.09	0.47	0.2	1.35	0.4	0.9	--	--
Էստոնիա	0.075	0.35	0.005	0.34	1.02	1.06	0.57	0.73	0.7	0.4	--	--
Ընդամենը	6.89	111.9	6.686	138.9	163.8	163.8	60.1	236.8	70.11	365.2	61.34	251.68

<sup>60</sup> Աղյուսակը կազմվել է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008» և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագրերի տվյալների հիման վրա:

## ԳԼՈՒԽ 5

### **ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԸ**

---

---

Դեռևս վաղ ժամանակներից եվրոպական բազում երկրներ ցանկություն են արտահայտել և փորձել են հիմնել արժութային միություններ: Նման փորձերի թիվը հատկապես շատացել է 19-րդ դարի վերջերին՝ 20-րդի սկզբներին, երբ դրամական համակարգերը և միջազգային ֆինանսական հարաբերությունները հենվում էին արծաթի և ոսկու վրա: Ինֆլացիայի հետ կապված հիմնահարցերն ի հայտ եկան միայն այն ժամանակ, երբ բացահայտվեցին թանկարժեք մետաղների խոշոր հանքեր: Իսկ երկրների կենտրոնական բանկերը և դրամական համակարգերը գտնվում էին ձևավորման փուլում և դժվար թե նրանց կարելի է համեմատել այսօրվա համակարգերի հետ: Ինչևէ, տեղի ունեցած փորձը այսօր էլ ներկայացնում է որոշ հետաքրքրություն:

Եվրոպայում առաջին արժութային միությունը Ավստրոգերմանականն է եղել, որը ձևավորվել է 1857թ.: Ավստրիան պայմանագիր է կնքում գերմանական մաքսային միության երեք անդամների հետ, ըստ որի երեք տարբեր արժույթներ փոխկապվում էին պայմանագրային ֆիքսված արժութային փոխարժեքով և հաշվարկային ընդհանուր միավորով: Այդ տարիներին ազգային արժույթի փոխանակում ընդհանուր փոխանակային արժույթով չէր ենթադրվում: Չէր գործում նաև որևէ կառույց, որը կլուծեր ցանկացած խնդիր՝ կապված կողմերի՝ պայմանագրային պարտականությունները չկատարելու հետ: Բանկային և դրամական համակարգի ինտեգրման բացակայության պայմաններում տվյալ միությունը կրում էր ձևական բնույթ և կոչված էր պահպանել երկրների պայմանական արժութային փոխարժեքները: 1866թ. Ավստրիայի և

Պրուսիայի միջև ռազմաքաղաքական բախումն առաջացավ, որը հետագայում վերաճեց պատերազմի: Ուստի այդ պայմաններում եվրոպական առաջին արժութային միությունը փլուզվեց:

1865թ. Ֆրանսիայի նախաձեռնությամբ աշխատանքներ են տարվում՝ կապված նոր արժութային համակարգի հիմնման հետ, որը ստացավ «Լատինական արժութային համակարգ» անվանումը և գործեց մինչև 1878թ.: Տվյալ միության անդամների ցանկն ավելի լայն էր և նրա կազմի մեջ մտնում էին Ֆրանսիան, Բելգիան, Իտալիան և Շվեյցարիան: Անդամները միության ստեղծման պահին ընդունում են ֆրանսիական երկմետաղական (բիմետալիզմ) ստանդարտը, որը ֆիքսում էր ոսկու և արծաթի հարաբերակցության մակարդակը, որը և ցույց է տալիս, որ արժութային կոոպերացիայի համար բոլոր հիմքերն արդեն գործում էին: Պայմանագրի հիմնական նպատակը համարվում էր մետաղադրամների հատման միասնականացումը, որպեսզի հետագայում դրանք որպես օրինական վճարամիջոց ընդունվեին անդամ-երկրների գանձապետարանների կողմից: Տվյալ միությունն առանձնահատուկ էր նրանով, որ կողմերը պայմանավորվել էին դրամի թողարկումը սահմանափակել այն մակարդակով, որը կապվում էր երկրներից յուրաքանչյուրի բնակչության հարաբերական մեծության հետ:

Սիացյալ արժութային համակարգ ստեղծելու մեկ այլ տրամաբանական քայլ արվել է 1875թ. երեք սկանդինավյան երկրների նախաձեռնությամբ՝ Դանիայի, Նորվեգիայի և Շվեդիայի: Ուստի նորաստեղծ միությունը կոչվեց «Սկանդինավյան արժութային միություն»: Միության մեջ մտնող երկրները պայմանավորվել էին թողարկել նույնատիպ մետաղադրամներ: Տվյալ կոնվենցիան չէր պարունակում թղթադրամների շրջանառությանն առնչվող համապատասխան կետեր, չնայած այն հանգամանքին, որ դրանք արդեն լայն շրջանառվում էին անդամ-երկրներում: Ինչևիցե, երկրների կենտրոնական բանկերը շատ շուտով սկսեցին փոխընդունել գործընկեր երկրի թղթադրամները և ուղղել դրանք յուրաքանչյուր բանկի ընթացիկ հաշվեկշռի կրեդիտավորմանը: Այս արժութային միությունը համարվում է հաջողված, քանի որ ստեղծվել էր արդյունավետ միջազգային քլիրինգային մեխանիզմ, և բացի դրանից խնայվում էին հսկայական գումարներ՝ ոսկու հետ կապված գործառնությունների իրականացման համար:

Առաջին համաշխարհային պատերազմը խախտում է սկանդինավյան երկրների տնտեսական և ֆինանսական համակարգերը: Ոսկու հսկայական հոսքը, ինչպես նաև երկրների միջև եղած գնային տարբերությունները հանգեցրին արժույթի չափողական մեխանիզմի փլուզմանը, որով հենց արժևորվում էին անդամ-երկրների արժույթների հարաբերական փոխանակային արժեքները: 1917թ. երկրները փոխադարձ հաշվարկների իրականացման ժամանակ սկսեցին բացառապես կիրառել ոսկին, որն ազդարարում էր միության ավարտը:

20-րդ դարի հատկապես երկրորդ կեսին ստեղծվեցին արժույթային միությունները Եվրոպայի տարբեր մասերում, և դրանց առաջացումը պայմանավորված էր օբյեկտիվ անհրաժեշտությամբ: 1921թ. Արևմտյան Եվրոպայի երկու հարևան երկրներ ևս դիմում են տնտեսական ինտեգրացիայի նախնական փորձին և հիմնում նոր միություն, որը կոչվեց «Բելգիա-Լյուքսեմբուրգյան տնտեսական միություն»: Ընդ որում այստեղ առաջին անգամ տեղի է ունենում երկու երկրների արժույթների ֆիքսացիա. 1:1 հարաբերակցությամբ լյուքսեմբուրգյան ֆրանկը կապվում էր բելգիական ֆրանկին: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին օկուպացված Լյուքսեմբուրգը դառնում է գերմանական արժույթային գոտու մասնակից, սակայն 1944թ. պայմանագիրը վերանայվում է, և կրկին հաստատվում է արժեհավասարություն հարևան երկրների արժույթների միջև: 1981թ. ավելի մանրամասնված համաձայնագիրը սահմանում է արժույթային համագործակցության հետագա կառուցվածքը տվյալ արժույթային ասոցիացիայի շրջանակներում: Բելգիական թղթադրամները և մետաղադրամները ազատ շրջանառվում էին Լյուքսեմբուրգում և համարվում էին օրինական վճարամիջոց, մինչդեռ լյուքսեմբուրգյան ֆրանկները Բելգիայի տարածքում չէին շրջանառվում, բայց առանց կորստի փոխանակվում էին բելգիական ֆրանկների հետ: Երրորդ երկրների նկատմամբ վարվում էր փոխադարձ համաձայնությունների վրա հիմնված արժույթային քաղաքականությունը:

Վերը նշված արժույթային միությունը գոյատևել է մոտ 70 տարի, չնայած այն հանգամանքին, որ տվյալ երկու երկրների տնտեսական ցուցանիշները տարբերվում էին (երբեմն շատ):

1979թ. Մարտի 13-ից սկսում է գործել Եվրոպական արժու-  
թային համակարգը (ԵԱՀ), որի կազմի մեջ մտնում էին 8 երկրներ՝  
Գերմանիա, Ֆրանսիա, Բենիլյուքս, Իտալիա, Իռլանդիա, Դանիա:

ԵԱՀ-ի շարժման մեխանիզմը բաղկացած էր երեք հիմնական  
բաղադրամասերից՝ Եվրոպական արժութային միավորը՝ էքյու, ար-  
ժութային փոխարժեքների համատեղ տատանման ռեժիմը՝ «սուպեր  
օձ» և արժութային համագործակցության Եվրոպական հիմնադրամը:

Էքյուն կոլեկտիվ հաշվարկային միավոր էր. այն իրենից ներ-  
կայացնում էր համագործակցող երկրների արժույթներից բաղ-  
կացած համամասնական զամբյուղ, ընդ որում յուրաքանչյուր երկրի  
մասնակցության բաժինը էքյու-ում կախված էր ՀՆԱ-ում տվյալ  
երկրի տեսակարար կշռից և փոխադարձ առևտրին մասնակցության  
չափերից: Ըստ այդմ, քվոտաները բաշխվել էին հետևյալ կերպ.

- 32.7%** Գերմանական մարկ
- 20.8%** Ֆրանսիական ֆրանկ
- 11.2%** Անգլիական ֆունտ
- 10.2%** Հոլանդական Գուլդեն
- 7.2%** Իտալական լիրա
- 8.7%** Բելգ. և Լյուքս. ֆրանկ
- 4.2%** Իսպանական պեսետա
- 2.7%** Դանիական կրոնա
- 1.1%** Իռլանդական ֆունտ
- 0.7%** Պորտուգալ. էսկուդո
- 0.5%** Հունական դրահիմա

Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ)  
երկրների փոխանակային փոխարժեքի ձևավորված մեխանիզմը  
սահմանափակում էր արժույթների փոխարժեքների տատանում-  
ները 2.25% մեկը մյուսի նկատմամբ, իսկ 1993թ.-ից այդ թիվը դար-  
ձավ 15%:

Եվրոպական արժութային համակարգի ձևավորման փաս-  
տաթղթերում ենթադրվում էր, որ էքյուն իրենից կներկայացնի՝

- արժութային փոխարժեքների սահմանման մեխանիզմի հաշվարկային հիմքը,
- ԵՏՀ երկրներից ցանկացածի արժութային փոխարժեքի միջինից շեղվելու գնահատման գործիք,
- արժութային ինտերվենցիաների, գործարքների իրականացման և վարկերի տրամադրման միջոց,
- անդամ-երկրների կենտրոնական բանկերի միջև, ինչպես նաև ԵՏՀ արժութային մարմինների միջև հաշվարկներ իրականացնելու միջոց,
- իրական ռեզերվային ակտիվ:

1999թ. հունվարի մեկից Եվրոպական 11 երկրներում որպես շրջանառության միավոր մտցվում է եվրոն: Հաշվարկները դեռևս իրականացվում են ինչպես ընդհանուր արժույթով, այնպես էլ ազգային, բայց բոլոր ֆինանսական գործարքները և նոր թողարկվող արժեթղթերը գնահատվում են եվրոյով: Մեծ Բրիտանիան դեռևս պահպանում է ֆունտ սթեռլինգի համաշխարհային համբավը:

Եվրոպական արժութային միության (ԵԱՄ) ստեղծման, ինչպես նաև եվրոն շրջանառության մեջ ներարկելու հիմնական նպատակներն էին.

- Աշխարհի ամենահզոր տնտեսական և ֆինանսական կենտրոնի ստեղծումը, որի առանցքային գործիք է դառնում ներարկվող նոր արժույթը՝ եվրոն: ԵԱՄ-ի հիմնադիրների խոսքերով նորաստեղծ միությունը կնպաստի արևմտաեվրոպական բոլոր ֆինանսական շուկաների միջև եղած պատնեշների վերացմանը և դրանց հետագա ինտեգրմանը: Դրա արդյունքում ենթադրվում է, որ Եվրոպայում կառաջանա ամենահզոր ֆինանսական շուկան, իսկ եվրոն կհավակնի լիդեր արժույթ կոչվելուն:
- Փոխանակային հարաբերությունների թեթևացում. համակարգի ներսում փոխանակային փոխարժեքների անկայունության պայմանները ծանր հետևանքներ են առաջացնում անդամ-երկրների տնտեսություններում, որոնք ստիպված են լինում ապահովագրել փոխանակային ռիսկը: Փորձագետների կարծիքով, տվյալ ռիսկի վերացումը Արևմտյան Եվրո-

պայում քաղաքացիների և ընկերությունների համար կխնայի 8 մլրդ եվրո տարեկան կտրվածքով:

- Կապված վերը նշված ռիսկի լիկվիդացման հետ՝ ընկերություններն իրենց ավելի ազատ կզգան հաշվարկները կատարելիս, ինչը կնպաստի շուկայի թափանցելիության աճին և մրցակցության սրմանը, որը յուրաքանչյուր առողջ տնտեսության շարժիչ ուժն է: Այսօրվա գլոբալ մրցակցության պայմաններում վերջինս բարենպաստ նախադրյալներ կստեղծի ցածր տոկոսադրույքի մակարդակի հաստատման, գների իջեցման և, իհարկե, աշխատատեղերի թվաքանակի մեծացման համար:
- Տնտեսական քաղաքականությունների փոխհամաձայնեցում:
- Ստեղծել ԱՄՆ-ին հակակշիռ ուժ՝ կապված համաշխարհային մասշտաբներով դոլարիզացիայի դեմ ուղղված պայքարի հետ, ինչպես նաև ԵՄ-ի քաղաքական դիրքերի ուժեղացումը համաշխարհային քաղաքական հարթակի վրա:

Հարկ է նշել, որ եվրոյի ներարկումը եվրոպական տնտեսություն մի քայլ է, որն ամփոփում է եվրոպական ինտեգրացիայի զարգացման մոտ 50 տարվա աշխատանքը: Միացյալ արժույթային տարածության հաստատումը նշանակում է էական փոփոխություններ մակրոտնտեսական մոտեցումներում և ոչ պակաս էական փոփոխություններ միկրոմակարդակում՝ բանկային համակարգի, ֆինանսական ընկերությունների, առևտրային կորպորացիաների գործունեության կտրվածքով: Որպեսզի ճիշտ պատկերացում ստանանք միացյալ արժույթի կիրառման մեխանիզմի արդյունավետության վերաբերյալ, պետք է խոսել այսպես կոչված «օպտիմալ արժույթային գոտու» ստեղծման մասին, որը ենթադրում է տնտեսական գործընթացների ունիֆիկացիա, ռեսուրսների ազատ տեղաշարժ և այլն: Ըստ էության այստեղ նկատի ունենք այն ունիֆիկացիան, որը բնորոշ է ԱՄՆ-ի առանձին նահանգների համար: Հենց այս պարագայում մենք կարող ենք խոսել արդյունավետ դրամավարկային քաղաքականության մասին, որն իրականացվում է եզակի կենտրոնական բանկի կողմից, ինչպես նաև միևնույն տնտեսական երևույթին բոլոր ռեգիոնների կողմից ադեկվատ ռեակցիայի ցուցաբերման մասին: Եվ եթե նույնիսկ ԱՄՆ-ի առանձին նահանգներում երբեմն միևնույն տնտեսական

երևույթին տալիս են ոչ համեմատական պատասխաններ, ինչ խոսք կարող է գնալ եվրոյի գոտու երկրների մասին:

Երկրների միջև եղած տարբերությունները ջրի երես բարձրացան դեռևս համակարգի ստեղծման նախնական փուլերում, երբ որոշվում էր սահմանել հավակնող երկրների «մուտքի չափանիշները»: Վերանայելով արժութային ինտեգրացիայի նախատիպերի համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաև հաշվի առնելով ԵՄ-ի համապատասխան ոլորտը կարգավորող հրահանգների և ակտերի ամբողջությունը՝ որպես համակարգ մուտք գործելու չափանիշների հիմք դիտարկվում են բյուջեի դեֆիցիտը, ներքին պարտքի մեծությունը, ինֆլյացիայի տեմպերը, տոկոսադրույթների մակարդակը, արժութային փոխարժեքի քաղաքականության ուղղությունը:

Սկզբնական շրջանում ենթադրվում էր, որ պլանավորված կամ փաստացի դեֆիցիտի հարաբերությունը ՀՆԱ-ին չպետք է գերազանցի 3%-ը՝ արտահայտված շուկայական գներով, սակայն հետագայում մտցվեցին որոշակի փոփոխություններ. քանի որ նման մակարդակի ապահովումը ցանկացած երկրի համար բավականին խրթին գործ է, ապա սկսեցին կիրառվել այսպես կոչված «գեղչային տարբերակներ», երբ թույլատրվում էին մասնակի շեղումներ.

- վերը նշված հարաբերակցության մակարդակը կրում էր անընդհատ բնույթ և երկար ժամանակի ընթացքում նվազում էր՝ շոշափելով ցանկալի ցուցանիշի մակարդակը,
- տվյալ ցուցանիշի գերազանցումը կրում էր ժամանակավոր բնույթ և բացառություն էր, քանի որ մնացյալ կարգավորվող ցուցանիշներն ապահովում էին պահանջված մակարդակը:

Ինչպես նաև սահմանվում էր մեկ այլ առանցքային ցուցանիշ՝ պետական պարտքի հարաբերակցությունը ՀՆԱ-ին, որը չպետք է գերազանցի 60%-ը: Դեֆիցիտի ցուցանիշին համանման այստեղ ևս կարող են տեղի ունենալ որոշակի շեղումներ. թույլատրվում է ցուցանիշի գերազանցում այն բացառությամբ, եթե հարաբերակցության մակարդակը երկարաժամկետ կտրվածքով նվազում է և բավարար տեմպերով մոտենում «բաղձալի սահմաններին»:

Ինչ վերաբերում է գների մակարդակին, ապա այստեղ կարևորվում է հարաբերական ինֆլյացիայի գաղափարը: Սրա էու-

թյունն այն է, որ անդամ-երկրների շարքերից առանձնացվում են մի քանի երկրներ, որոնք ունեն երկարաժամկետ կտրվածքով ինֆլյացիայի կայուն մակարդակ: Այդ մակարդակը կամ ցուցանիշը հաշվարկվում է վիճակագրական միջին թվաբանականի միջոցով, որը հնարավորություն է տալիս մի կողմից սահմանել ավելի կայուն մակարդակ, որը ժամանակի ընթացքում քիչ է փոփոխության ենթարկվում, իսկ մյուս կողմից մեղմել անդամակցության սույն պայմանը, քանի որ միության շրջանակներում ամենամվազ ինֆլյացիայի մակարդակը ֆիքսելով, որպես անդամակցության չափանիշ, կնշանակեր իդեալական պայմանների ապահովում: Այնուհետև անդամակցվող պետություններից պահանջում են ապահովել գների այնպիսի մակարդակ, որի պայմաններում ինֆլյացիայի հարաբերական ցուցանիշը առավելագույնս 1.5%-ով գերազանցի վերը նշված ինֆլյացիայի կայուն մակարդակը: Ընդ որում անդամակցության տարվա ինֆլյացիայի հարաբերական ցուցանիշը որոշվում է համեմատվող ինֆլյացիայի մակարդակի նախորդ տարվա ցուցանիշի հետ: Այսպես օրինակ, եթե Հայաստանի Հանրապետությունը ուզում է անդամակցել ԵՄ-ին 2005թ., ապա չափակցվող ինֆլյացիայի մակարդակը համարվում է 2004թ. ինֆլյացիան:

Տոկոսադրույքի մակարդակը հաշվարկվում է ինֆլյացիայի ցուցանիշին համանման: Այսինքն ևս առանձնացվում են հարաբերական կայուն տոկոսադրույքի մակարդակ ունեցող երկրներ, հաշվարկվում է դրանց միջին թվաբանականը: Անդամակցող երկրների տոկոսադրույքի մակարդակը չպետք է գերազանցի սույն ցուցանիշինը 2% տոկոսային կետով: Տոկոսադրույքի մակարդակը միության շրջանակներում հաշվարկվում է՝ հիմք ընդունելով պետական երկարաժամկետ պարտատոմսերը՝ հաշվի առնելով դրանց բնորոշման ազգային տարբերությունները:

Ամենամեղմ անդամակցության պայմանն առաջարկող ցուցանիշը արժույթի փոխարժեքի քաղաքականության հաստատումն է: Տվյալ ոլորտը կարգավորող դիրեկտիվում նշվում է, որ մասնակից պետություններն անդամակցության հայտ ներկայացնելուց առաջ երկու տարվա ընթացքում չպետք է որևէ միջոցառում իրականացնեն՝ կապված արժույթային փոխարժեքի տատանումների պահպանման հետ, որը պետք է բերեր դրանց չափելիությանը ԵԱՀ-ի շրջանակներում սահմանված փոխարժեքի հետ: Ինչպես նաև արգելվում էր նույն ժամանակահատվածում սեփական նախաձեռնու-

թյամբ կատարել ազգային արժույթի դեվալվացիա: Այսինքն, այլ կերպ ասած, արգելվում էր ստեղծել «արհեստական արժութային փոխարժեք»: Վերը նշված սահմանափակումները սահմանվում էին այն հիմքով, որ «բնական արժութային փոխարժեքը» արտացոլում էր տվյալ երկրի տնտեսության իրական պատկերը և իրական մրցունակությունը: Ահա թե ինչու շեշտը դրվեց նաև դեվալվացիայի արգելքի վրա, որն ինքնին նպաստում էր մրցունակության աճին:

Ադյուսակ 8-ում բերվում են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք բնութագրում են ԵՄ-ի երկրները 1995-1997թթ.: Ընդհանուր առմամբ պատկերը փոփոխական է, բայց առանձին ցուցանիշներով՝ օրինակ ինֆլյացիայի մակարդակով, գրեթե բոլոր երկրներն արդեն ունեին բավարար մակարդակ, իսկ որոնք էլ չունեին, արդեն 1997թ. շեմին պետք է ձեռք բերեին:

Խնդիրն ավելի է դժվարանում բյուջետային դեֆիցիտի և պետական պարտքի պարամետրերի դիտարկման ժամանակ: Հատկապես դեֆիցիտի հրատապ նվազեցումը կամ մարումը կարող էր հանգեցնել տնտեսության անկմանը, ինչը կնպաստեր գործազրկության խնդրի սրմանը: Իսկ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ զբաղվածության գծով համագործակցության դեկլարացիայի խախտում: Եվ բացի դրանից բյուջեի ծախսերի կամ եկամուտների այս կամ այն հողվածք չի կարող միանգամից փոփոխվել, քանի որ այն ամբողջովին կապված է ընդհանուր տնտեսական իրավիճակի հետ:

Ավելի վատ պատկեր է ստացվում պետական պարտքի խնդրի լուծման հետ, քանի որ դրա ամորտիզացիան և տոկոսային վճարումները ձգված են ժամանակի մեջ, իսկ վերջինիս արագացված մարումը կարող է բացասական ազդեցություն ունենալ բյուջեի վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք երկրներ չէին կարող կատարել առաջադրված պայմանները՝ Եվրոպական արժութային համակարգի կողմնակիցները չէին բացառում պայմանագրի պահանջներն ամբողջությամբ չկատարելու սկզբունքը՝ այդպիսով վտանգի տակ դնելով ծրագրի լիակատար իրականացումը: Դրա համար որոշվեց, որ ինչպես արժութային քաղաքականության դեպքում, այնպես էլ մնացյալ դեպքերում բոլոր չափանիշները կիրառվելու էին մեղմացված տարբերակով՝ շեշտը դնելով դիտարկվող ցուցանիշների դրականացման վրա:

## Եվրոպական երկրների որոշ մակրոտնտեսական ցուցանիշներ

Երկրներ	Ինֆլյացիայի տեմպեր			Երկարաժամկետ տոկոսադրույքի մակ.			Դեֆիցիտ / ԲՆԱ շուկայական գներով			Պետպարտք / ԲՆԱ		
	1995	1996	1997	1995	1996	1997	1995	1996	1997	1995	1996	1997
Բելգիա	1,4	1,8	2,0	7,5	6,5	6,0	-4,1	-3,3	-2,9	133,7	130,6	127,3
Դանիա	2,3	1,9	2,4	8,3	7,2	6,7	-1,6	-1,4	-0,3	71,9	70,2	69,0
Գերմանիա	1,5	1,2	2,0	6,9	6,2	5,9	-3,5	-4,0	-3,2	58,1	60,8	61,5
Հունաստան	9,0	7,9	7,5	17,3	14,8	13,8	-9,1	-7,9	-7,0	111,8	110,6	113,4
Իսպանիա	4,7	3,6	2,8	11,3	8,7	6,7	-6,6	-4,4	-3,0	65,7	67,8	68,0
Ֆրանսիա	1,7	2,1	2,0	7,5	6,3	5,9	-4,8	-4,0	-3,0	52,8	56,4	58,0
Իռլանդիա	2,4		2,4	8,3	7,3	6,7	-2,0	-1,6	-1,5	81,6	74,7	79,0
Իտալիա	5,4	4,0	2,5	12,2	9,4	7,4	-7,1	-6,6	-4,1	124,9	123,4	124,6
Լյուքսեմբուրգ	1,9	1,2	2,0	7,2	6,3	6,0	1,5	0,9	1,0	6,0	7,8	7,8
Նիդեռլանդներ	1,1	1,5	2,3	6,9	6,2	5,8	-4,0	-2,6	-2,0	79,7	78,7	76,2
Ավստրիա	2,0	1,8	1,9	7,1	6,3	6,0	-5,9	-4,3	-3,0	69,0	71,7	66,8
Պորտուգալիա	3,8	2,9	2,6	11,5	8,6	6,6	-5,1	-4,0	-3,0	71,7	71,1	70,0
Ֆինլանդիա	1,0	1,5	1,7	8,8	7,1	6,2	-5,2	-3,3	-1,5	59,2	61,3	64,5
Շվեդիա	2,9	0,8	1,7	10,2	8,0	6,9	-8,1	-3,9	-2,3	78,7	78,1	79,3
Մեծ Բրիտանիա	3,1	-	3,3	8,3	7,9	7,7	-5,8	-4,6	-3,9	54,1	56,2	57,2
Գնահատման մակարդակ	2,7	2,5	3,3	9,7	8,8	8,4	-3	-3	-3	60,0	60,0	60,0

Արդյունքում ստացվեց այն, ինչ սպասվում էր: Արդյունքային ցուցանիշներով երկրների մեծամասնությունը չէր համապատասխանում ԵԱՀ-ին ինտեգրվելու հիմնական պահանջներին: Դա ավելի լավ արտացոլվում է աղյուսակ 9-ում, որտեղ ցույց է տրված, որ այնուամենայնիվ 11 երկրների հաջողվեց մուտք գործել համակարգ:

**Աղյուսակ 9**

**1999թ. եվրոյի գոտու մեջ ընդգրկվելու նորմատիվների կատարման ցուցակ**

Երկրներ	Պետբյուջեի դեֆիցիտ (%ՀՆԱ)	Պետական պարտք (%ՀՆԱ)	Ինֆլյացիայի մակարդակ %	Երկարաժամկետ վարկերի գծով տոկոսադրույքի մակարդակ %
Ավստրիա	2,5	66,1	1,1	5,6
Բելգիա	2,1	122,2	1,4	5,7
Գերմանիա	2,7	61,3	1,4	5,6
Իռլանդիա	-0,9	66,3	1,2	6,2
Իսպանիա	2,6	68,8	1,8	6,3
Իտալիա	2,7	121,6	1,8	6,7
Լյուքսեմբուրգ	-1,7	6,7	1,4	5,6
Նիդեռլանդներ	1,4	72,1	1,8	5,5
Պորտուգալիա	2,5	62,0	1,8	6,2
Ֆինլանդիա	0,9	55,8	1,3	5,9
Ֆրանսիա	3,0	58,0	1,2	5,5

Մեծ խնդիրներ էր առաջացնում նաև արժուրային փոխարժեքի ֆիքսման առաջադրանքը: 1999թ. հունվարի 1-ին եվրոյի գոտի մտնող բոլոր երկրների արժույթները ֆիքսվեցին եվրոյի նկատմամբ, որը պետք է կարգավորվեր էքյուի գործնական շրջանակների համանման համակարգով: Ենթադրվում էր, որ եվրոն հարաբերակցվելու է էքյուի հետ 1:1 հարաբերությամբ, որը կլիներ առավել տրամաբանական, եթե եվրոյի զամբյուղը ձևավորող արժույթները լինեին էքյուի ժառանգները: Բայց քանի որ դա այդպես չէր և, օրինակ, եվրոյի զամբյուղից բացակայում էր այնպիսի ծանրակշիռ արժույթ, ինչպիսին անգլիական ֆունտ սթեռլինգն էր, եվրոյի հավասարեցումը էքյուին այնքան էլ տրամաբանական և հետևողական չէր: Որոշ արժույթների դուրսմղումը հաշվարկային

զամբյուղից պետք է անհրաժեշտ դարձնել մնացած արժույթների կշիռների վերանայումը, քանի որ դրանք կարող էին էքյուի նկատմամբ փոխարժեքային այլ հարաբերակցություն ունենալ: Դրա արդյունքում էլ եվրոյի իրական կշիռը պետք է տարբերվեր էքյուից, այնպես-ինչպես պետք է տարբերվեր նաև դրանց շուկայական անվանական արժեքը:

Այնուհետև պահանջվում էր որոշել, թե անդամ պետությունների ազգային արժույթների որ փոխարժեքները պետք է հիմք վերցնել դրանց ֆիքսման ժամանակ: «Անդամակցության ժամանակահատվածի տարեվերջի կամ ավարտային» փոխարժեքները հիմք ընդունելը կլիներ ոչ ճիշտ որոշման արդյունք, քանի որ արժույթային փոխարժեքի կարճաժամկետ տատանումները կհանգեցնեին արհեստական պատկերների ստեղծմանը: Նույնպիսի անտրամաբանական քայլ կլիներ նաև «ժամանակահատվածի միջին» փոխարժեքը էքյուի նկատմամբ որպես ֆիքսման հիմք ընդունելը, քանի որ էքյուի և եվրոյի կշռային տարբերությունները ևս կստեղծեին համակարգի կեղծ դիմագծեր: Այս ամենի արդյունքում ձևավորվեց մի բանաձև, որը ներառում է տվյալ երկրի տնտեսական իրավիճակը բնութագրող մի շարք ցուցանիշներ, արժույթի փոխարժեքը էքյուի նկատմամբ և որոշ այլ գործոններ:

## Աղյուսակ 10

### Եվրոյի փոխարժեքը ազգային արժույթների նկատմամբ

Արժույթ	Փոխարժեք
Ավստրիական շիլլինգ	13,76
Բելգիական ֆրանկ	40,34
Իռլանդական ֆունտ	2,20
Իսպանական պեսետա	5,95
Իտալական լիրա	6,56
Լյուքսեմբուրգյան ֆրանկ	1,96
Գերմանական մարկ	0,79
Հոլանդական գուլդեն	1936,27
Պորտուգալական էսկուդո	40,34
Ֆինլանդական մարկ	200,48
Ֆրանսիական ֆրանկ	166,39

Աղյուսակ 10-ում ներկայացվում է ազգային արժույթների հարաբերակցությունը եվրոյի նկատմամբ, որը տրամադրել է եվրոպական կենտրոնական բանկը 1999թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Նորաստեղծ համակարգի արդյունավետ գործունեության համար հիմնադրվում են Կենտրոնական բանկերի եվրոպական համակարգը (ԿԲԵՅ) և եվրոպական կենտրոնական բանկը (ԵԿԲ):

Ըստ ԿԲԵՅ և ԵԿԲ կանոնակարգերի՝ սահմանվում է, որ նորաստեղծ համակարգը ստանձնում է դրամավարկային և արժույթային կարգավորման ավանդական ֆունկցիաները, ինչպես նաև արժույթային վերահսկողության և բանկային համակարգի վերահսկողության ոչ ավանդական գործառույթները:

Դա նշանակում է, որ ձևավորվել է դրամավարկային և արժույթային քաղաքականություն իրականացնող նոր, բավականին կենտրոնացված մեխանիզմ, որի մեջ առանցքային դերակատարություն ունեն ԵԿԲ-ն: Դրա հետ մեկտեղ նշենք, որ որևիցե կոնկրետ քաղաքականության իրագործումը տեղի է ունենում ազգային կենտրոնական բանկերի նախագահությունների մասնակցությամբ: Յուրաքանչյուր երկրի հասանելիք ձայների քանակությունն ուղղակիորեն սահմանվում է բանկի կանոնադրական կապիտալում ունեցած իր մասնակցությամբ: Այն պարագայում, եթե ինչ-որ մի երկիր չի համաձայնվում ընդունվող որոշման հետ, նրա ձեռքում, իր ձայներից բացի, հակազդելու ոչ մի այլ գործիք չկա, և այդ դեպքում երկիրը ստիպված է լինում իր տնտեսական քաղաքականությունը հարմարեցնել ընդունված որոշմանը:

Ֆորմալ ձևով նշվում է, որ ԵԿԲ-ի հիմնական նպատակ է համարվում զների կայունության ապահովումը, որի իրականացման համար սկզբնական փուլերում դիտարկվում էին դրամավարկային քաղաքականության հետևյալ գործիքները.

- արժույթային փոխարժեքի վերահսկողություն,
- տոկոսադրույքի վերահսկողություն,
- անվանական եկամտի վերահսկողություն,
- դրամական զանգվածի վերահսկողություն,
- զների աճի տեմպերի վերահսկողություն:

Անդամ-երկրների հետագա բանակցությունների արդյունքում որոշվում է վերոնշյալներից պահպանել երկուսը՝ դրամական զանգվածի և զների աճի տեմպերի վերահսկողության գործիքները: Եթե պահպանվեր արժույթային փոխարժեքի վերահսկողու-

թյան գործիքը, ապա այդ պարագայում գների աճի տեմպերի գործիքի գործունեությունն արդյունավետորեն չէր իրականանա, ինչը կապված է հետևյալ հանգամանքների հետ.

- փոխարժեքի և գների փոփոխության միջև կա ժամանակային լագ,
- արժութային փոխարժեքի տատանումները կարող են կրել կարճաժամկետ, կոնյունկտուրային բնույթ,
- տվյալ տատանումները կարող են ունենալ ոչ ռեգիոնալ ծագում, ինչը վերջիններիս դարձնում է սակավ կանխատեսելի,
- արժութային փոխարժեքը առաջին հերթին ազդում է այն ապրանքների գների վրա, որոնք շրջանառվում են բացառապես ռեգիոնի տարածքներում,
- մի շարք դեպքերում արժութային փոխարժեքները չեն երաշխավորում գնային կայունություն:

ԵԿԲ-ին էր վերապահվում նաև դրամավարկային քաղաքականության որոշակի գործիքների կիրառման իրավունքը՝ բաց շուկայական գործառնությունները, պահուստավորումը և այլ այսպես կոչված «մշտական մեխանիզմները», որոնք ապահովում էին շուկայից ստացվող ազատ ֆինանսական ռեսուրսների շարժունակությունը և դրանց ստացումը «օվերնայթ» ռեժիմով:

Փաստորեն ստեղծված էր բավականին բազմապրոֆիլ համակարգ, որը թույլ է տալիս կանխարգելել լիկվիդայնության ճգնաժամը եվրոյի գոտում, ինչը յուրաքանչյուր նոր ֆինանսական լծակի կամ արժութային կարգավորման մեխանիզմի կիրառման արդյունքում դառնում է հնարավոր:

Նոր արժութային համակարգին անցումը իրականացվել է երեք փուլերով: Առաջին փուլը սկսվել է 1998թ. մայիսի 2-ից, երբ Եվրոպական խորհուրդը որոշում կայացրեց արժութային միության մեջ մտնող մասնակիցների թվաքանակի սահմանման գծով, որոնք, ինչպես նշեցինք, պետք է բավարարեին վերը թվարկված պայմաններին: Ինչպես ակնկալվում էր, որոշման հիմքում դրվել են 1997թ. ճշգրտված տնտեսական ցուցանիշները: 11 երկրներ համաձայնվեցին տնտեսության մեջ ներարկել նոր, եզակի արժույթ՝ Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա, Նիդեռլանդներ, Լյուքսեմբուրգ, Իռլանդիա, Պորտուգալիա, Իսպանիա, Ավստրիա և Ֆինլանդիա: Հունաստանն այդ ժամանակ չէր բավարարում սահմանված պահանջները: 1992թ. Դանիայում անցկացված հանրաքվեի

արդյունքներով բնակչությունը բացասական վերաբերմունք ցուցաբերեց արժութային միության անդամ դառնալու խնդրին: Մեծ Բրիտանիան համապատասխան տնտեսական և առաջին հերթին քաղաքական պատճառներով ևս ձեռնպահ է մնում միություն մուտք գործելուց:

Մեծ Բրիտանիան այդ ժամանակահատվածի ընթացքում գտնվում էր տնտեսական զարգացման և աճի ցիկլում. երկրի ներսում տոկոսադրույքի մակարդակը, եթե չհաշվենք Հունաստանին, ամենաբարձրն էր արևմտաեվրոպական տարածաշրջանում: Արժութային միության անդամ դառնալը կնշանակեր հրաժարվել նման զարգացումից, ինչը կառաջացներ սոցիալական լարվածություն, գործազրկություն և առաջարկի ինֆլյացիա: Վերլուծաբանների կարծիքով Մեծ Բրիտանիան մինչև 2002թ. պետք է մտներ միություն, բայց, ինչպես տեսնում ենք, դա այդպես չէ: Երկիրը դեռևս ֆունտ սթեռլինգի իր ամուր դիրքերը չի պատրաստվում զիջել եվրոյին: Շվեդիան ևս հրաժարվեց մուտք գործել միություն՝ պատճառաբանելով, որ իր հսկայական սոցապահովության համակարգով երկիրը ի վիճակի չի լինի ադեկվատ քայլեր կատարելու արժութային միության շրջանակներում մրցակցության բարձրացման ընթացքում:

Մասնակիցների ցուցակի ճշգրտումից հետո Բելգիայում որոշում է ընդունվում հիմնադրել Եվրոպական Կենտրոնական բանկը և 11 անդամ-երկրների համար ֆիքսել երկկողմանի փոխանակային փոխարժեքներ: Փոխանակային փոխարժեքների ֆիքսումը նախապես պլանավորված քայլ էր՝ 1999թ. հունվարի 1-ի դրությամբ սպեկուլյատիվ գործունեությունը բացառելու նպատակով: Այդ փոխարժեքները կիրառվելու են եվրոյի՝ որպես միացյալ արժույթի շրջանառության առաջին օրվանից, երբ ազգային արժույթները ետ չկանչվող կոնվերսիոն փոխարժեքների հիման վրա փոխանակվելու են եվրոյի հետ:

Երկրորդ փուլը սկսվել է 1999թ. հունվարի 1-ին: Բոլոր անդամ-երկրների համար սահմանվում է եվրոյի նկատմամբ ֆիքսված փոխանակային փոխարժեք՝ հավասար 1 էքյուի, որը պետք է դադարեր իր գործողությունը եվրոյի ներարկման առաջին օրվանից:

1999-2002թթ. եվրոն կիրառվում է բանկային գործառնություններում ազգային արժույթների հետ մեկտեղ: Բանկերն իրավունք ունեին գործարքներ կնքելու և ծառայություններ մատուցելու եվրո-

յով 1999թ. սկզբներից, իսկ 2002թ. արդեն բոլոր գործառնությունների վարումը եվրոյով դառնում է համապարտադիր:

Տեսականորեն, արժութային միությունը գործում է 1999թ., բայց եվրոդրամները և մետաղադրամները սկսել են շրջանառվել միայն երեք տարի անց: Այդ եռամյա ժամանակահատվածում եվրոն շրջանառվել է անկանխիկ փողի տեսքով, այն էլ կամային բնույթով: Չնայած սրան՝ դեռևս 1997թ. եվրոպական մի շարք ընկերություններ հայտարարեցին, որ 1999թ. հունվարի մեկից իրենց սեփական կամքով բոլոր անկանխիկ հաշիվները վերափոխելու են եվրոյի:

Երրորդ փուլը սկսվում է 2002թ. հունվարի 1-ին՝ եվրոդրամների և եվրոմետաղադրամների ներարկման հետ կապված: Դեռևս կես տարի եվրոյին մրցակից են լինում ազգային արժույթները, և միայն 2002թ. հուլիսի 1-ից դրանք դադարում են իրենց ֆիզիկական և իրավական գոյությունը, այսինքն՝ օրինական վճարամիջոց հանդիսանալ չեն կարող: Եվ միայն 2002թ. հունիսի 30-ին վերջին անգամ եվրոպացիներն իրենց հարազատ մարկերով, պետներով և գուլդեններով կարողացել են գնել զարեջուր և գետնանուշ:

Եմ-ի շրջանակներում ինտեգրացիոն գործընթացի ավելի բարձր մակարդակի ապահովումը, ԵՄ-ի արժութային համակարգի և մոնետար քաղաքականության արդյունավետության բարձրացումը արժութային միության դրական կողմերից են<sup>61</sup>: 15 Կենտրոնական բանկերի փոխարեն ընդամենը մեկի կիրառությունը կնպաստի վարկավորման, հաշվարկների, գնագոյացման, հարկային համակարգի կազմակերպման ոլորտներում ընդհանուր քաղաքականության ավելի հեշտ իրականացմանը: Պրակտիկան ցույց տվեց, որ այս ամենն աջակցեց ինֆլացիայի դեմ արդյունավետ պայքարի իրականացմանը, տոկոսադրույքի մակարդակի իջեցմանը և հարկային բեռի թեթևացմանը: Ունենալով ամբողջական վերահսկողություն ազգային արժույթի նկատմամբ՝ 1998-1999թթ. առանձին եվրոպական երկրներ, մրցունակության բարձրացման նպատակով, ձգտում էին դեվալվացիա կատարել և այդպիսով բացասաբար էին ազդում եվրոպական ընդհանուր շուկայի վրա:

Սեկ այլ առավելություններից է եվրոպական խորհրդի երկրների միջև առևտրային գործարքների արդյունավետության աճը: Այդ ամենը կլինի արդյունք այն երևույթի, որ ազգային արժույթ-

---

<sup>61</sup> 2009թ. հունվարի 1-ից Սլովակիան դարձավ եվրագոտի՝ 16-րդ ԵՄ երկիրը:

ների կոնվերտացիայի վրա կատարվող ծախսերը կվերանան, իսկ ֆինանսական միջոցների տրանսֆերտավորումը մեկ այլ երկիր կպահանջի ավելի կարճ ժամանակ: Դրանից կարելի է եզրակացել, որ առանձին ֆիրմաների կտրվածքով այս ամենը հնարավորություն կտա կրճատելու շրջանառու կապիտալի չափերը կամ էլ բարձրացնելու դրա շրջանառելիությունը: Բացի դրանից կրճատվում են արժութային հեջինգի ծախսերը, երբ ֆիրմաները գործարքի կնքման և իրականացման ժամանակ ստիպված են լինում ապահովագրվել արժույթի փոխարժեքի տատանումներից: Այսինքն՝ կնքելով երկարաժամկետ պայմանագիր՝ տնտեսավարող սուբյեկտը արդեն վստահ կլինի այն բանում, որ իր հետագա շահույթը չի կորչի արժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում:

Գործարքների կնքման ժամանակ անորոշությունների ոչնչացումը, ԵՄ-ի շրջանակներում միջերկրային առևտրի պարզեցումը, ձեռնարկչատիրական սպասումների բարձրացումը, ավելի արդյունավետ դրամական և ընդհանուր տնտեսական քաղաքականությունը պետք է հանգեցնեն երկարաժամկետ կտրվածքով ԵՄ-ի շրջանակներում տնտեսական աճի տեմպերի արագացմանը:

Եվրոյի ներդրման պատճառով առաջացած թերություններն են.

Եվրոյի վրա սպեկուլյատիվ հարձակումը, քանի որ եվրոյի ներարկումը կապված էր որոշակի բարդությունների հետ, հատկապես ԵԿԲ և ազգային կենտրոնական բանկերի հստակ կողորդման հետ, որի իրականացումը միացյալ արժույթին անցնելու պայմաններում մեծ կասկած էր առաջացնում արևմտյան մասնագետների մեջ, ապա հնարավոր էր համարվում եվրոյի վրա սպեկուլյատիվ հարձակման հնարավորությունը: Բացի այս հիմնական պատճառից, սպեկուլյացիայի առաջացման համար կային նաև այլ հիմքեր:

Եվրոյի փոխարժեքի իջեցման նպատակով եվրոյի սպեկուլյացիա՝ հաջորդական գնման պայմանով: Դա կապված է նրա հետ, որ եվրոն համարվում էր աշխարհի ամենահզոր արժույթներից մեկը: Նման փորձեր էին կատարվում նաև ԵՏՀ-ի երկրների պետական արժեթղթերի գնման հետ կապված:

Ենթադրվում էր նաև, որ համաեվրոպական մասշտաբով տեղի են ունենալու տնտեսական անկում և մասսայական գործազրկության առաջացում: Մրցակցային պայքարի հիմնական գործոն է դառնում աշխատուժի արժեքը: Միացյալ արժույթը հեշտ հա-

նադրելի է դարձնում տարբեր եվրոպական երկրների աշխատավարձերի դրույքները: Աշխատողները և արհմիությունները ճնշում են գործադրում աշխատուժի գինը մինչև առավելագույն մակարդակին հասցնելու համար: Եվ ենթադրվում էր, որ աշխատատուների միակ հնարավոր ելքը կլինի աշխատուժի ծավալների կրճատումը: Ինչպես տեսնում ենք, արևմտյան մասնագետների հոռետեսական կանխատեսումներն այս հարցի շուրջ չիրականացան: Եվրոյի մուտքը տնտեսություն հնարավոր դարձրեց միջֆիրմային ինտեգրացիայի խորացումը, ինչը նպաստեց աշխատուժի ազատ միգրացիային և ավելի օպտիմալ բաշխմանը եվրոպական տարածքով:

Եվրոյի կիրառությունն ավելի է հեշտացրել գների համեմատության հիմնադրույթը: Այն ավելի թափանցիկ է դարձնում տարբեր երկրների տնտեսությունները. իմանալով նույն զամբյուղ ապրանքների և ծառայությունների գները տարբեր երկրներում՝ ավելի է հեշտանում գտնել հարկային, մաքսային և այլ մարմինների աշխատանքներում գործող թերությունները, որոնք հետագայում տանում են գների հավասարեցման:

Բացի եվրոպական ձեռներեցներից, մեծ շահ ունեցան նաև եվրոբնակիչները, որոնք տարատիպ պահանջներով ազգային արժույթները փոխանակում էին օտարերկրյա արժույթներով: Միացյալ արժույթը բարենպաստ պայմաններ է ստեղծում տուրիզմի զարգացման համար: Եվ առհասարակ, եվրոն համարվեց համաշխարհային արժույթ, և դա հնարավորություն տվեց եվրոբնակիչներին նվազագույն ծախսումներով կատարել ճամփորդություններ, իսկ եվրոձեռներեցներին գործարքներ կնքել նվազագույն տրանսակցիոն ծախսումներով, ինչպես նաև թեթևացնում է բիզնեսի պլանավորման և ինվեստիցիաների կատարման խնդիրները:

Եվրոյի առաջացումը հնարավոր դարձրեց արժեթղթերի ընդհանուր շուկայի ստեղծումը, որը օկուպացնում է եվրոպական բոլոր երկրները: Էմիսիայի և գրանցման ծախքերը կտրուկ նվազեցին, ինչը տվյալ շուկայում առաջացրեց պայթյուն: Արժեթղթերի նկատմամբ պահանջարկը ամբողջ աշխարհում աճեց:

Բանկային համակարգի շրջանակներում եվրոն կարող է հանդես գալ որպես միջբանկային մրցակցության կատալիզատոր. փոփոխվում է նաև հենց բանկային մրցակցության բնույթը: Այդ ամենին նպաստում են նաև էլեկտրակապի կիրառությունը և ազ-

գային բանկային օրենսդրությունների ունիֆիկացիան: Մի խոսքով, ունենալով օրենսդրական և արժուքային հավասար պայմաններ՝ բանկերն արդեն սկսեցին մրցակցել նորանոր ֆինանսական գործիքներով և այլ ֆինանսատնտեսական մանրությամբ:

Լիկվիդացնելով արժուքային փոխարժեքների տատանումների ռիսկերը՝ բանկերն այդժամ ձեռնանուխ եղան ավելի մեծ ուշադրություն դարձնելուն վարկային ռիսկերին՝ հետևելով, թե որտեղ են ուղղորդվում այդ վարկերը, և ինչ նպատակներով են դրանք օգտագործվում:

Սպառողներն էլ իրենց հերթին սկսեցին վարկեր փնտրել իրենց համար ամենահարմար պայմաններով՝ արդեն ուշադրություն չդարձնելով այն հանգամանքին, թե որ երկրում է տվյալ բանկը տեղակայված: Եվ այդպիսով եվրոն դարձավ հզոր կատալիզատոր եվրոպական բանկային համակարգի մեջ կառուցվածքային փոփոխություններ կատարելիս:

Այս ամենով հանդերձ, ոչ ոք չի կարող դատապարտել կամ արդարացնել եվրոյի մուտքագրումը տնտեսություն, քանի որ այն ինտեգրացիոն գործընթացի հաջողական տրամաբանական քայլն էր, որն ինչպես նախատեսված էր, այդ իսկ գործընթացները, ինչպես նաև աշխարհի մասշտաբով տնտեսական տրանսֆորմացիաներ, բարձրացրեց ավելի բարձր մակարդակի վրա:

ԱՄՆ դոլարի այլընտրանքային տարբերակի առաջացումը փոխեց երրորդ երկրների ընդհանուր ֆինանսատնտեսական կոնյունկտուրան: Առաջ՝ արժուքային ռեժիմի ընտրության, պաշտոնական ռեզերվների կազմի, պետական կամ մասնավոր փոխառությունների արժույթների, ինչպես նաև միջազգային առևտրային գործարքների կնքման վերաբերյալ որոշումներ ընդունելիս, երրորդ երկրները ընտրություն էին կատարում կամ ԱՄՆ դոլարի, կամ էլ այլընտրանքային քիչ տարածված այլ ռեզերվային արժույթների միջև: Իհարկե, այս խաղում դոմինանտ մասնակիցը ԱՄՆ դոլարն էր: Այժմ երրորդ երկրները պետք է ավելի ուշադիր լինեն իրենց ֆինանսատնտեսական վարքագիծը նախագծելիս, ուշադիր հետևեն իրադրությանը, գնահատեն հնարավոր ռիսկերը և իրագործեն դրանց լիկվիդացման տարբերակները:

Եվրոյի միջազգային դերակատարությունն առաջնահերթ ի հայտ է գալիս այն պետություններում, որոնք սերտ տնտեսական, առևտրային և ֆինանսական կապեր են պահպանում ԵՄ-ի հետ:

Դրանց շարքում նշենք վերջերս ԵՄ-ի անդամ դարձած Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, Ռուսաստանը, ինչպես նաև ԳՅ-ն: Այսպես օրինակ՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, մինչ անդամակցությունը, իրենց ազգային արժույթները կապում էին գերմանական մարկի հետ, ուստի Եվրոյի ծագման պայմաններում նրանք ոչ մի այլընտրանքային տարբերակ չունեին: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, Լեհաստանի, Չեխիայի, Սլովակիայի և այլ պետությունների մասնավոր հատվածները Եվրոյի անմիջական թողարկումից հետո սկսեցին իրենց ֆինանսատնտեսական գործունեությունը ԵՄ-ի հետ իրականացնել միայն միացյալ արժույթով, որն այդ ժամանակ ավելի ճկուն էր և հեշտ էր հարմարվում նման զարգացող պետությունների տնտեսություններին: Միջազգային ասպարեզում Եվրոյի կիրառության նման միտումները կրում էին աստիճանական բնույթ, որն արդյունք էր Բրեթով-Վուդսյան կոնֆերանսից հետո դոլարի՝ համաշխարհային փողի ֆունկցիայի իներցիոն երկարաձգման: Եվրոյի լայնամասշտաբ օգտագործումը կրճատում է համապատասխան գործարքային և տեղեկատվական ծախսերը:

Նշենք, որ Եվրոյի միջազգային դերն արտահայտվում է չորս հիմնական ասպեկտներով:

- Առաջինը վերաբերում է կոմերցիոն գործարքներին: Ինչպես նշեցինք, Եվրոյի կիրառումը Եվրախորհրդի շրջանակներում իջեցնում է տրանսակցիոն և տեղեկատվական ծախսերը: Այն ընկերությունները, որոնք առևտուր են անում հիմնականում ԵՄ-ի երկրների հետ, շահագրգռված են, որ իրենց ներկայացված և իրենց կողմից վճարվելիք հաշիվներն արտահայտվեն միայն Եվրոյով: Եվրոպական երկրները շրջանցում են հավելյալ ծախսումները՝ կապված արժութային փոխարժեքներից առաջացած ծախսերի կամ դրանց ապահովագրման ծախսերի հետ, երբ առևտրային հարաբերությունների մեջ են մտնում երրորդ երկրների հետ:

Եվրոն կարելի է օգտագործել նաև ոչ ԵՄ երկրների շրջանակներում կնքվող գործարքների ժամանակ: 2000թ. տվյալներով գերմանական մարկը այն արժույթն էր, որն արտացոլվում էր աշխարհի համախառն արտահանման գործարքների մոտ 30%-ում: Եվ ԵԱԳ-ի հիմնական նպատակը Եվրոն այդ ցուցանիշին հասցնելն էր: Այդպես էլ եղավ:

ԵՄ ռեգուլատիվ մարմիններին հուզում էր նաև մեկ այլ հարց: Ի՞նչ կարևորություն կունենա եվրոն մասնավոր հատվածում՝ որպես միջազգային օպերացիաների ժամանակ կիրառվող հաշվարկային միավոր, վճարամիջոց և ակտիվների գնահատման չափանիշ: Միջազգային Հաշվարկների բանկի հետազոտության արդյունքների համաձայն՝ 2000թ. ԱՄՆ դոլարը սպասարկում էր համախառն արժույթային գործառնությունների 80%-ը: Համաշխարհային առևտրի մոտ 50%-ը արտահայտված էր դոլարային գներով: Դա էլ իր հերթին նպատակաուղղում է կորպորացիաներին իրենց ներքին հաշվեկշռային հաշվետվությունները վարել ԱՄՆ դոլարով: Բայց եվրոպա աշխարհամասում կիրառելի եվրոն աստիճանաբար մեծացրեց ԵՄ և երրորդ երկրների միջև առևտրի ծավալները, որոնք արդեն արտահայտվում էին եվրոյով: Դա էլ ունեցավ նույն էֆեկտը տվյալ երկրների թրեյդերների վրա՝ իրենց հաշվետվությունները եվրոյով վարելու գործում: ԵՄ երկրները պետք է ձգտեն եվրոյով արտահայտել օտարերկրյա ինվեստիցիաները և փոխատվությունները:

- Երկրորդ ասպեկտը վերաբերում է պետական պարտատոմսերի միջազգային շուկային: Արժույթային միության ստեղծման հետ մեկտեղ անդամ-երկրների պետական պարտատոմսերի ցանկացած էմիսիան իրականացվում էր եվրոյով:

Միաժամանակ եվրոպական ֆինանսական շուկաները, այդ թվում նաև պետական պարտատոմսերի շուկան, պահպանեցին որոշակի յուրահատուկ բնագծեր՝ կապված միջերկրային հարկային համակարգերի միջև եղած տարբերությունների, ինչպես նաև եզակի փոխառուի բացակայության հետ (ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում եզակի փոխառու է Ֆինանսների նախարարությունը): Այսպիսով, եկամտաբերությունների տարբերությունն արտացոլում էր, թե ինչպես է շուկան գնահատում պարտավորությունները չկատարելու ռիսկը:

Միջազգային արժեթղթերի պորտֆելներում մեծացել է նաև եվրոպական արժույթների տեսակարար կշիռը. 1981-1995թթ. կրկնապատկվել է՝ հասնելով 37%-ի: Եվրոակտիվների նկատմամբ աճող պահանջարկը կուղեկցվի համաշխարհային արժեթղթերի շուկայում եվրոյի դերի մեծացմամբ:

2003թ. տվյալներով պարտատոմսերի համաշխարհային շուկայում թողարկվող գործիքների 40-45%-ը արժևորվում է եվրոյով՝

դուրս մղելով ԱՄՆ դոլարը լիդեր դիրքերից: Ընդ որում, եվրոպարտատոմսերի գնանշումը կամ ինդեքսավորումը տարեկան կտրվածքով ավելի արագ էին աճում, քան դոլարային պարտատոմսերը: Պարտքային պարտավորությունների միջազգային շուկայում դոմինանտ դիրքի գրավումը բարենպաստ նախապայմաններ է ստեղծում համաշխարհային ֆինանսական համակարգի շրջանակներում եվրոյի դերի մեծացման, միաժամանակ դոլարի հակակշռի նվազեցման համար:

Հիմնական պատճառը, որով միջազգային արժեթղթեր թողարկողները մեծածավալ էմիսիայի դեպքերում գերադասում են դոլարը, այն է, որ արժույթի փոխանակման և տոկոսային ռիսկերի ծածկման դոլարային արժեքը նվազ է: Այնուամենայնիվ եվրոյի լիկվիդայնությունը և եվրոշուկաների տարողունակությունը կարող են կրճատել վերոհիշյալ ծախսերի մակարդակը՝ համադրելի դարձնելով դոլարային ծախսերի հետ: Այս ամենը նպաստեց եվրոյով պարտքային պարտավորությունների թողարկման աճին: Դա հատկապես հավանական է՝ հաշվի առնելով այն, որ զարգացման շրջանում գտնվող ասիական, Լատինական Ամերիկայի և Արևելյան Եվրոպայի երկրների արտաքին պարտքի արժութային կազմում եվրոպական արժույթների տեսակարար կշիռը ցածր էր:

- Երրորդ ասպեկտը կապված է ինվեստորների ակտիվների կառուցվածքի հետ: Եվրոպական արժույթներով արտահայտված ակտիվների վերանվանումը կամ վերահաշվարկը եվրոակտիվների կիանգեցնի նրան, որ տվյալ ակտիվների համաշխարհային պորտֆելի 1/3-ը կարտահայտվի եվրոյով: Բնականաբար ակներև է ֆինանսական գործիքների տվյալ շուկայում դոլարի և եվրոյի միջև գերիշխանության մրցակցությունը:

Վերջին 15 տարիների ընթացքում զգացվում է ակտիվների միջազգային պորտֆելի լայնամասշտաբ դիվերսիֆիկացիա՝ ոչ հոգուտ դոլարի: Եթե 1981թ. ակտիվների միջազգային պորտֆելում մասնավոր ինվեստորներին պատկանող դոլարով արտահայտված ակտիվների տեսակարար կշիռը 67% էր, իսկ եվրոպական արժույթներով արտահայտված ակտիվներինը՝ 13%, ապա 1995թ. տվյալ համամասնությունը կազմեց 40/37-ի: Այսօր երևում է դոլարային «ճգնաժամը»: Ինչպես տեսնում ենք ֆինանսատնտեսական վիճակագրությունից, եվրոպական կենտրոնական բանկի կողմից իրականացված կայունության հաստատման դրամավար-

կային և ֆիսկալ քաղաքականությունը նպաստեց եվրոշուկաների տարողունակության բարձրացմանը, եվրոյի լիկվիդայնության աճին, որը գրավիչ է դարձնում եվրոն՝ որպես ինվեստիցիոն ակտիվ:

• Ի վերջո, եվրոն պետք է ստանձնի ռեզերվային արժույթի ֆունկցիա, որը ԵԱԶ-ի հիմնադիրների, իսկ այնուհետև Դեւորի հիմնական նպատակներից մեկն էր: Պետական պահուստների դիվերսիֆիկացիան արտասահմանյան արժույթներով և դրանց անցումը եվրոյին պայմանավորված էր միջազգային արժույթային շուկաներում որպես միջամտության գործիք և միջազգային առևտրում որպես հաշվարկային միավոր եվրոյի կիրառության աճով: Եվրոյի օգտագործումը որպես պետական պահուստ հիմնականում կապված էր ասիական երկրների կենտրոնական բանկերի վարած քաղաքականության հետ, քանի որ դրանց է պատկանում աշխարհի օֆիցիալ պահուստների մոտ 40%-ը, որոնք հիմնականում արտահայտված էին ԱՄՆ դոլարով: Դա պայմանավորվում էր այն հանգամանքով, որ մինչև 1997թ. ասիական ճգնաժամը, թայվանդական ռուպին և այլ ասիական արժույթներն ամուր ամրակցված էին դոլարին և դա արդյունք էր նրա, որ գոյություն չունեին պատշաճ այլընտրանք: Այժմ պատկերը միանգամայն փոփոխվել է. ասիական երկրների կենտրոնական բանկերը, հատկապես վերջին տարվա ընթացքում, զգալի փոփոխություններ են անում իրենց պահուստներում եվրոյի օգտին, քանի որ եվրոն այսօր դիտարկվում է որպես ավելի կայուն արժույթ: Նման բանկերում եվրոյի կուտակման հիմնական նպատակը փոխանակային փոխարժեքների կանոնակարգումն է և ռիսկերի դիվերսիֆիկացիան: 2002թ. ԵՎԶ-ի հիմնական նպատակն էր այն, որ 2 տարվա ընթացքում՝ որպես ռեզերվային արժույթ, եվրոյի տեսակարար կշիռը կազմի ընդհանուրի մոտ 25-30%-ը:

Երրորդ երկրների ԿԲ-ները որքա՞ն արագ վերակողմնորոշեցին իրենց պետական պահուստները դեպի եվրոն: Այն երկրները, որոնք պահպանում էին ֆիքսված փոխարժեքների ռեժիմը, իրենց ազգային արժույթը կապում էին կամ դոլարի հետ, կամ էլ այն զամբյուղի հետ, որի մեջ դոլարն ուներ էական տեսակարար կշիռ: Սկզբնական շրջանում, ինչպես և ակնկալում էին արևմտաեվրոպական փորձագետները, այդ երկրները չկատարեցին զգալի փոփոխություններ: Բացի դրանից, հսկայական ստրատեգիական նշանակություն ունեին համաշխարհային առևտրի ուղղվածությունը

և կառուցվածքը: Լատինական Ամերիկայի և Ասիայի երկրների մեծամասնությունը ավելի մտերիմ, սերտ կապերի մեջ էր ԱՄՆ-ի հետ, քան Եվրոպայի: Ուստի այդ երկրները չէին պատրաստվում զարմացնել աշխարհին և դեռ երկար ժամանակ պահպանում են իրենց ազգային արժույթների մեծ մասը ԱՄՆ դուլարով՝ չնայած ռեզերվային դիվերսիֆիկացիա որոշ մակարդակով տեղի էր ունեցել: Դուլարի փոխարինումը եվրոյով բավականին ժամանակատար գործընթաց է, և այսօր էլ այդ պայքարը սրվում է: Աշխարհի մնացած երկրները ևս չհապաղեցին փոխանակել իրենց արժույթային ռեզերվները եվրոյով, քանի որ լինում են դեպքեր, երբ այդ փոխանակության ժամանակ արժեպես նվազում են դուլարով արտահայտված ակտիվները: ԵԱՀ-ի նախագահությանը հետաքրքրում էր նաև մեկ այլ հարց, թե եվրոն որքանով գրավիչ կլինի անընդհատ աճող ռեզերվներ ունեցող երկրների համար: Կասկած չկա որ որևիցե երկրի ազգային արժույթի՝ որպես ռեզերվային միավորի դերի բարձրացումը տեղի է ունենում միայն այն դեպքում, եթե թողարկող երկիրն ունի վճարային հաշվեկշռի ընդհանուր դեֆիցիտ: Այլ կերպ ասած, եթե տվյալ ռեզերվային արժույթի պահուստներն աճում են, ապա դրա նկատմամբ պետք է ներկայացվի ոչ միայն պահանջարկ, այլ նաև առաջարկ:

Եվրոպական շուկաների միասնականությունը երրորդ երկրների վրա իր ազդեցությունն արտահայտելու է կամ արդեն արտահայտում է առևտրային և ֆինանսական կապերի միջոցով: Եվրոյի գոտու մեջ ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկի մեծացումը կհանգեցնի տվյալ երկրներից արտահանման ծավալների մեծացմանը և բնականաբար արտադրության աճին: Միաժամանակ, արժույթային փոխարժեքի քաղաքականությունը, ֆինանսական շուկայի զարգացումը և կապիտալի միգրացիան ևս մեծ ազդեցություն են թողնում տվյալ երկրների տնտեսությունների վրա:

- Եվրոյի գոտում ցիկլային աճերի ուժեղացումը հանգեցնում է գործընկեր երկրների արտահանման ծավալների մեծացմանը: Ի լրումն դրան, նոր արժույթի թողարկումը նպաստեց եվրոպական աշխատուժի շուկայի հետագա զարգացմանը և ռեֆորմացմանը, որը բարձրացնում է արտադրության միջնաժամկետ մակարդակը՝ ուղեկցվելով Եվրոպայի ներմուծման պահանջների աճով:

- Մի շարք երկրներ, որոնք եվրոպական տարբեր արժույթների հետ կապում էին իրենց ազգային արժույթները, այժմ կա-

պակցում են եվրոյի նկատմամբ: Այս պարագայում եվրոյի և դոլարի կամ յենի հարաբերակցության խախտման ժամանակ կառաջանա ֆինանսական հավասարակշռության խախտում: Այն երկրները, որոնց արտաքին պարտքը արտահայտված է դոլարով (իսկ մենք գիտենք, որ այդպիսի երկրների թիվը մեծ է), շահում են, եթե իրենց ազգային արժույթները կապակցված են եվրոյին: Տվյալ երկրների համար նվազում են դոլարային պարտքի սպասարկման ծախսումները: Որոշ երկրներ ձեռնպահ են լինում իրենց արժույթը եվրոյի նկատմամբ ֆիքսելուց, քանի որ եվրոյի փոխարժեքի անկանխատեսելիության պայմաններում կարող է առաջանալ ճիշտ հակառակ պատկեր:

- Վերը նշված հանգամանքի մեղմացման համար երրորդ երկրները կարող են ճշգրտումներ մտցնել արժութային փոխարժեքի ռեժիմի մեջ, որպեսզի այն ավելի կոռեկտ արտահայտի երկրի առևտրային և ֆինանսական կապերը, կամ էլ ուղղակի փոխի արտաքին պարտքի կառավարման քաղաքականությունը: Այդ փոփոխության անհրաժեշտությունն ի հայտ կգա այն ժամանակ, երբ եվրոն սկսի լայնամասշտաբ կիրառվել պարտքային արժեթղթերի սպասարկման առևտրային և ֆինանսական շուկաների գործառնություններում: Տվյալ պարագայում եվրոյի նկատմամբ ֆիքսված արժույթներով երկրները նվազեցնում են իրենց դոլարային պարտավորությունների ծավալները:

ԵԱՀ-ի ստեղծումը, ի վերջո, հնարավորություն է տալիս զգալի չափերով կրճատել փոխառու միջոցների ներգրավման արժեքը:

- Եվրոպայում ավելի տարողունակ և ավելի լիկվիդային կապիտալի շուկաների առաջացումը իջեցրեց փոխառու միջոցների գինը ինչպես եվրոյի գոտու երկրների համար, այնպես էլ այն երկրների համար, որոնք եվրոյով արտահայտված ռեսուրսներ են ներգրավում:

- Այնպիսի կազմակերպությունների համար, ինչպիսիք են ապահովագրական ընկերությունները և կենսաթոշակային ֆոնդերը, ԵԱՀ-ն հնարավորություն է տալիս վերակողմնորոշել իրենց պորտֆելային և ուղղակի ներդրումների զգալի մասը: Եվրոգոտու այլ երկրներում ներդրումներն արդեն կորակավորվեն որպես ազգային արժույթով ներդրումներ, և դրա համար ինվեստորներն ի վիճակի են լինում շրջանցել օտարերկրյա արժույթով ներդրումների կատարման համար սահմանափակումները:

- Երրորդ երկրները կարող են գերշահույթ ապահովել նաև ի հաշիվ ուղղակի և պորտֆելային կապիտալի ներհոսքի, քանի որ Եվրոպայի տարածքում ակտիվների եկամտաբերության միջերկրային տարբերության վերացման պատճառով համաշխարհային ինվեստորները, դիվերսիֆիկացիայի նպատակով, սկսում են ներդրումներ կատարել հենց զարգացող երկրներում:

ԵԱՀ-ն ի վիճակի է նաև որոշակի ֆինանսական ռիսկեր առաջացնել զարգացող շուկաներում:

- ԵԱՀ-ի արդյունավետ աշխատանքը հանգեցնում է արտադրողականության և տնտեսական աճին, որը Եվրոպային ավելի գրավիչ է դարձնում գլոբալ ինվեստորների աչքերում: Դրա արդյունքում բնականաբար մեծանում է կապիտալի գինը զարգացող շուկաների համար:

- Եվրոպական ֆինանսական ինստիտուտների մրցունակության աճը և եվրոյի գոտու ֆինանսական շուկաների տարողունակության մեծացումը զարգացող շուկաներում գործող ֆիրմաներին դրդում են կապիտալ ներգրավել եվրոյի, այլ ոչ թե ազգային արժույթի տեսքով: Այդպիսով, եվրոշուկան սկսեց մրցակցել կապիտալի տեղական շուկաների հետ: Դա էլ իր հերթին դրդում է տեղական ֆինանսական կազմակերպություններին վերապրոֆիլավորվել և բարձրացնել մրցունակությունը:

Ինչևհից, նշենք, որ ՀՀ ԿԲ-ը ոչ մի ուղղակի կապ չունի եվրոպական արժույթային համակարգի հետ: Վերջիններս միայն առնչվում են ՀՀ-ում եվրոյի շրջանառության կարգավորման և արժույթային փոխարժեքի քաղաքականության առումներով: ՀՀ ԿԲ-ի կողմից առաջին լուրջ միջոցառումը ազգային պահուստների դիվերսիֆիկացումն էր հոգուտ եվրոյի, իսկ այնուհետև բանկային համակարգի կայունության ապահովման նպատակով եվրոյով արտահայտված բանկային գործառնությունների իրականացման խթանումն էր: ՀՀ-ում եվրոն այսօր ունի բավականին ծավալուն շրջանառություն, որն ապահովվում է ԵՄ-ի հետ մասնավոր հատվածի ունեցած կապերի միջոցով: Նկատելի է դառնում նաև ՀՀ տարբեր ապրանքային շուկաներում առաջարկվող ապրանքների գների՝ եվրոյով արտահայտված լինելը: Հազարավոր հայ ձեռներեցներ, կապված հայկական դրամի և դոլարի փոխարժեքի տատանումների հետ, վերջին ժամանակներս իրենց ցանկությունն են հայտնում եկամուտները ստանալ եվրոյով:

Նույնիսկ ՀՀ չձևավորված ֆոնդային բորսայում այսօր մշակվել արժուքային ֆյուչերսների երկու նախագիծ՝ ուղղված դոլարով և եվրոյով ժամկետային շուկաների կարգավորմանը: Այսինքն՝ ՀՀ ֆոնդային բորսան այնքան է զմահատում եվրոյի կիրառելիությունը Հայաստանում, որ նույնիսկ ուզում է զարգացնել դրա ժամկետային գործիքներով առևտուրը:

2004թ. դոլար-դրամ փոխանակային փոխարժեքի խախտման պարագայում տրավմատիկ հետևանքներ են ստացել ԵՄ-ի երկրների հետ առևտրային և ֆինանսական կապեր ունեցող կազմակերպությունները, քանի որ իրենց հաշվեկշիռներում եկամուտների մասը արտահայտվում էր դոլարով, իսկ պարտավորությունների մասը՝ եվրոյով: Ուստի տվյալ ձեռներեցները ստանում են «էժան փող» և վճարում «թանկ փող»: Ածանցյալ շուկայական գործիքների բացակայության պայմաններում ՀՀ գործարարները միայն կարող էին պահանջել իրենց եկամուտների վերանվանում կամ էլ ֆիքսում եվրոյի նկատմամբ:

Բացի դրանից, այս համատեքստում հարկ ենք համարում վերլուծել նաև ՀՀ արտաքին պարտքը<sup>62</sup>: Այսպես, ինչպես նկատում ենք զծանկար 16-ից, ՀՀ արտաքին պարտքը 2000-2008թթ. ընկած ժամանակահատվածում գրեթե կրկնապատկվել է՝ 2008թ. կազմելով ՀՆԱ-ի 13.2%-ը:


Ավելին, եթե հաշվի առնենք 2008թ. սկիզբ առած ֆինանսական ճգնաժամի հետևանքով ՀՀ կառավարության արտաքին պարտքի ավելացումն ավելի քան մեկ միլիարդ դոլարով և հաշվի առնենք ՀՆԱ-ի հավանական կրճատումը 2009թ.՝ կապված ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ, ապա արտաքին պարտքի բաժինը ՀՆԱ-ում զգալի կաճի: Ինչպես նկատում ենք զծանկար 16-ից, միայն 2009թ. ՀՀ արտաքին պարտքի մեծությունը գրեթե կրկնապատկվել է՝ կազմելով 2967 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 34.0%-ը<sup>63</sup>: Մեր կարծիքով, ՀՀ ֆինանսական համակարգի բարելավման, մասնավորապես արտաքին պարտքի հետագա ավելացումը զսպելու կամ կրճատելու համար ածանցյալ նախապայմաններ կարող են հանդիսանալ ներդրումային դաշտի բարելավումը և ՕՈՒՆ-ի ներհոսքի ավելացումը:

<sup>62</sup> Այս հատվածից սկսած՝ վերլուծությունը կատարել է Գ.Հայրապետյանը:

<sup>63</sup> Այստեղ հարկ է նշել, որ 2009թ. իրական ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է -14.4%:


**Գծանկար 16**

**ՀՀ արտաքին պարտքի դինամիկան 2000-2009թթ. (մլն դոլար)<sup>64</sup>**



**Գծանկար 17**

**ԱՄՆ դոլար և ՀՀ դրամ փոխարժեքի դինամիկան 2001-2008թթ. ընկած ժամանակահատվածում<sup>65</sup>**



Այսօր նման դոլարային բովանդակության պարտքեր ունեցող երկրներն ամբողջ աշխարհում փորձում են իրենց արժույթները

<sup>64</sup> Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, [www.mfe.am](http://www.mfe.am) :  
<sup>65</sup> Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, [www.mfe.am](http://www.mfe.am) :

Ֆիքսել համեմատաբար առավել կայուն արտարժույթի՝ եվրոյի նկատմամբ, քանի որ դոլարի փոխարժեքի տատանումների դեպքում պարտատուը վճարում է անհամամասնական անվանական գումարներ, որոնք չեն համապատասխանում դրանց իրական արժեքին: Սա հիմնականում կապված է 2004թ. դոլարի փոխարժեքի համաշխարհային տատանումների հետ, որոնցից ակներև էր դոլարի դիրքերի զիջումը եվրոյի, յենի և ֆունտ սթեռլինգի նկատմամբ (գծանկար 17):

Ինչպես նկատում ենք գծանկար 17-ից, 2004-2008թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ դրամը գրեթե երկու անգամ արժևորվել է ամերիկյան դոլարի նկատմամբ<sup>66</sup>: Այս հանգամանքը իհարկե առաջին հերթին մեր կարծիքով զգալի վնասել է արտահանմանը և առավել բարենպաստ պայմաններ է ստեղծել ներմուծման համար: Մյուս կողմից, եթե 2004-2007թթ. ընկած ժամանակաշրջանում դոլար-դրամ փոխարժեքի ամսական միջին մակարդակը հիմնականում նվազման միտում է ունեցել, ապա 2008թ. այն եղել է գրեթե հաստատուն՝ պայմանավորված կենտրոնական բանկի կողմից արտարժույթի շուկայում իրականացվող ինտերվենցիաներով: Ավելին, 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով պայմանավորված, արդեն 2009թ. մարտի 1-ին ՀՀ կենտրոնական բանկը հայտարարեց, որ իրենք կրկին վերադառնում են լողացող փոխարժեքի արժութային ռեժիմի (արտարժույթի շուկայում ինտերվենցիաների դադարեցում), որի արդյունքում ազգային դրամն ամերիկյան դոլարի նկատմամբ արժեզրկվեց շուրջ 23%-ով:

Մեկ այլ այլընտրանք այդ երկրների համար այն է, որ իրենք կարող են այսօր նոր երկարաժամկետ պարտքեր ընդունել եվրոյով և հները մարել դոլարով, որի գումարային տարբերությունն ազգային արժույթով կլինի դրական: Բացի այդ, Հայաստանի բանկային համակարգում մինչև օրս նախապատվությունը տրվում է ԱՄՆ դոլարին, որը շատ վառ արտահայտվում է բանկերի կողմից ավանդների ներգրավման գործընթացում: Այսպես, այլ հավասար պայմաններում, դոլարային ավանդների տոկոսադրույքը շատ ավելի բարձր է, քան եվրոյով ավանդներինը<sup>67</sup>: Հաշվի առնելով այն

<sup>66</sup> Այստեղ հարկ է նշել, որ դոլար-դրամ փոխարժեքը հաշվարկվել և ներկայացվել է՝ հիմք ընդունելով փոխարժեքի տարեկան միջին մակարդակը:

<sup>67</sup> Աղբյուր՝ <http://banks.am/am-deposits.html> ինտերնետային կայքն այցելվել է 12.06.2009թ.:

հանգամանքը, որ վերջին շրջանում (2009թ. առաջին եռամսյակից սկսած) ԱՄՆ կառավարությունն իր ֆինանսական միջոցների պակասուրդը լրացնելու համար ավելացրել է դոլարի էմիսիան, որը բերել է ԱՄՆ դոլարի արժեզրկմանը եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՊՀ երկրների հետ համեմատ, գնալով զարգանում են ՀՀ արտաքին տնտեսական հարաբերությունները ԵՄ երկրների հետ, ապա շատ ավելի նպատակահարմար կլիներ, որպեսզի ՀՀ-ում հավասարապես նախապատվությունը տրվեր ինչպես ԱՄՆ դոլարին, այնպես էլ եվրոյին:

Ամփոփելով կարող ենք նշել, որ ներկայացված Եվրոպական արժութային համակարգի ձևավորման ու զարգացման գործընթացը մեզ համար կարևոր է ՀՀ դրամի և եվրոյի հարաբերակցության կարգավորման, եվրոյի դերի բարձրացմամբ ՀՀ տարածաշրջանում, ՀՀ և ԵՄ տնտեսական կապերի հետագա բարելավման և գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերացման առումով:

## ԳԼՈՒԽ 6

### **ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

---

Հայաստանի՝ ԵՄ-ի տնտեսական համակարգի մեջ ինտեգրման կարևոր պայման կարող է հանդիսանալ կապիտալ հոսքերի խթանումը, ինչն առաջնային դեր կխաղա ընդհանրապես ՀՀ տնտեսության աշխուժացման համար, հատկապես օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ):

ՕՈՒՆ-ն ավելի մեծ ազդեցություն են ունեցել ԵՄ կոնկրետ տարածաշրջանների և երկրների տնտեսությունների ինտեգրման, տնտեսական զարգացման աճի վրա, քան տարածաշրջանային քաղաքականության հիմքով իրականացվող ֆինանսական օժանդակությունները: ՕՈՒՆ-երը բարենպաստ են տարածաշրջանների համար, քանզի դրանք կապիտալի ներհոսք են, նոու-հաու, ինչպես նաև լուծում են առկա զբաղվածության խնդիրները: Իսպանիայի, Պորտուգալիայի, Իռլանդիայի և Հունաստանի համար ՕՈՒՆ-ը ավելի շատ նշանակություն են ունեցել, քան տարածաշրջանային օգնությունները ԵՄ-ի կողմից, այն դեպքում, որ օրինակ Հունաստանը 2 անգամ ավելի շատ միջոցներ է ստացել կառուցվածքային ֆոնդերից, քան ՕՈՒՆ-ի շրջանակներում<sup>68</sup>: Ինչը փաստում է, որ ՕՈՒՆ-ի ներհոսքը բարերար ազդեցություն է թողնում տնտեսության իրական հատվածի վրա, բարձրացնում է բնակչության զբաղվածությունը և կենսամակարդակը, խթանում է տեղական արտադրության զարգացումը, արտադրական կապերի զարգացմամբ խթանում է տեղական արտադրանքի արտահանման ծավալները, նոր հնարավորություններ են ստեղծվում մարդկային կապիտալի զարգացման, ինչպես նաև նորարարական, արտադրական նոր տեխնոլոգիաների ներդրման համար:

---

<sup>68</sup> “Обзор и главные особенности общей политики ЕС” из доклада Общая политика ЕС и характер ее проведения, , стр. 23, [www.politekonom.ru](http://www.politekonom.ru) .

Աղյուսակ 11.

ԵՄ 25 երկրների ՕՈՒՆ-երի հոսքերը<sup>69</sup> (մլրդ եվրո)

	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Արտահոսքերը դեպի ԵՄ 25-ից դուրս երկրներ	306.1	133.9	135.7	136.4	186.1	202.2	419.9
ԵՄ 15 անդամ-երկրներից	305.3	133.7	134.0	134.7	182.0	196.9	380
ԵՄ 10 նոր անդամներից	0.9	0.2	1.8	1.7	4.1	5.3	9.5
ԵՄ 25-ի հիմնական գործընկեր պետություններ արտահոսող ՕՈՒՆ-ի մասնաբաժինը ընդհանուրի մեջ	53%	35.4%	66.6%	15.2%	54%	60%	53%
Ներհոսքերը ԵՄ 25-ից դուրս երկրներից	145.9	126.6	123.5	53.1	94.3	145.0	319.2
ԵՄ 15 անդամ-երկրներ	142.1	123.4	120.5	49.2	90.5	139.4	221.2
ԵՄ 10 նոր անդամներ	3.7	3.2	3.0	3.9	3.8	5.6	15.7
ԵՄ 25-ի հիմնական գործընկեր պետություններից ներհոսող ՕՈՒՆ-ի մասնաբաժինը ընդհանուրում	71%	66%	74%	63%	60%	48.3%	63%
Զուտ արտահանման հոսքեր (արտահոսքի և ներհոսքի տարբերությունը)	160.3	7.3	12.2	83.3	91.8	57.2	100.4
ԵՄ 15 անդամ-երկրներ	163.2	10.3	13.4	85.5	91.5	57.5	158.8
ԵՄ 10 նոր անդամներ	-2.9	-3.0	-1.2	-2.2	0.3	-0.3	-6.2

2006թ. ԵՄ 25 երկրների ՕՈՒՆ-ը դեպի ԵՄ 25-ից դուրս երկրներ (արտահոսքը) կազմել է 202 մլրդ եվրո, ինչը 9 %-ով ավելի է, քան 2005 թ. ցուցանիշը՝ 186 մլրդ եվրո, իսկ 2007թ. այն հասել էր 420 մլրդ եվրոյի: Չնայած 2006թ. այս ցուցանիշը 2002թ. և դրանից հետո գրանցված ամենաբարձրն է, այնուամենայնիվ 2001թ. գրանցված տվյալի (306 մլրդ եվրո), այն կրճատվել է մոտ 34%-ով: Եվ միայն 2007թ. հաղթահարվեց 2001թ. ցուցանիշը՝ մոտ 40%-ով: Կարևոր է նշել, որ եթե ԵՄ 15 երկրներից դուրս գտնվող երկրներ ՕՈՒՆ-երի արտահոսքի ծավալները նույնպես իրենց ամենաբարձր ցուցանիշը 2001-2006թթ. գրանցել էին 2001թ., ապա 2007թ. պատկերը փոխվեց, քանի որ 2001 թ. ցուցանիշը (305.3

<sup>69</sup> Merja Hult, Statistics in focus, economy and finance 115/2007, "Balance of payments" p 2.

մլրդ եվրո) հաղթահարվեց մոտ 25%-ով: Ինչ վերաբերում է ԵՄ 10 նորանդամ երկրներին, ապա պետք է ասել, որ վերջիններից 2001-2006թթ. ՕՈՒՆ-երի արտահոսքի ամենամեծ ցուցանիշը գրանցվել է 2006թ.՝ 5.3 մլրդ եվրո, որը 2001թ. ցուցանիշը (0.9 մլրդ եվրո) գերազանցել է մոտ 6 անգամ, իսկ 2007թ. կրկին աճ է գրանցվել մոտ 80%-ով (մոտ 10 մլրդ եվրո): Եվ չնայած այս ընթացքում նշված երկրների մասնաբաժինը ՕՈՒՆ-ի արտահոսքի ծավալներում 2001թ. գրանցված 0.3 %-ից հասել է 2.7%-ի (2006թ.), այնուհանդերձ, ինչպես ցույց են տալիս տվյալները, 2001-2007թթ. ԵՄ 15 երկրներին բաժին է ընկել ՕՈՒՆ-երի արտահոսքի միջինը՝ 95%-ը: Իհարկե ԵՄ 15 երկրների մեջ կան երկրներ, որոնք հանդես են գալիս որպես ՕՈՒՆ-երի առաջատար դոնորներ: Օրինակ՝ 2006թ. այդպիսիք էին Բելգիան, Գերմանիան, Իսպանիան, Ֆրանսիան, Լյուքսեմբուրգը և Մեծ Բրիտանիան: 2007թ. պատկերը գրեթե նույնն է, չնայած որոշ փոփոխություններ կատարվել են, մասնավորապես Բելգիան մոտ 5 անգամ կրճատել է ՕՈՒՆ-ի արտահանման ծավալները, Իսպանիան կրճատել է մոտ 3 անգամ, Ֆրանսիան՝ 2,5 անգամ, Իտալիան՝ 162 անգամ: Արդյունքում ամենամեծ ՕՈՒՆ-երի արտահոսքը գրանցվել է Մեծ Բրիտանիայի օգտին (121.2 մլրդ եվրո, նախորդ տարվա նկատմամբ աճել է 2 անգամ), այն դեպքում, որ 2006-ին ամենամեծ ցուցանիշն ուներ Ֆրանսիան (86,7 մլրդ եվրո):

ԵՄ 25 երկրներում կատարված ՕՈՒՆ-երի ծավալները ԵՄ 25-ից դուրս գտնվող երկրների կողմից 2006թ. կազմել է 145 մլրդ եվրո, որը 2005թ. ցուցանիշի նկատմամբ՝ 94.3 մլրդ եվրո, աճել է մոտ 54%-ով: Իսկ 2007թ. այն կազմել է մոտ 319.2 մլրդ եվրո՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով մոտ 2.5 անգամ: Ի դեպ, այստեղ ևս երևում է, որ 2001-2006թթ. ընթացքում 2001թ. գրանցվել է ՕՈՒՆ-երի ներհոսքի ամենամեծ ծավալը՝ 145.9 մլրդ եվրո, որն իհարկե շատ չնչին տարբերությամբ է 2006թ. ցուցանիշից, բայց եթե հաշվի առնենք, որ 2002-2004թթ. ընթացքում արտասահմանից ԵՄ-25 երկրներ ներհոսող ՕՈՒՆ-երի ծավալները զգալի անկում են ունեցել՝ 127 մլրդ եվրոյից հասնելով 53 մլրդ եվրոյի (մոտ 58%), ապա 2006թ. և հատկապես 2007թ. գրանցված առաջընթացն առավել ակնհայտ է դառնում: Ի դեպ դրսից եկող ՕՈՒՆ-երի հիմնական մասը 2006թ. ուղղվել է դեպի Լյուքսեմբուրգ, Բելգիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա և Իռլանդիա, Ֆրանսիա, Իտալիա:

Աղյուսակ 12

ԵՄ երկրների ՕՈՒՆ-երի արտահոսքը և ներհոսքը արտաքին աշխարհի հետ 2006թ.<sup>70</sup> և 2007թ.<sup>71</sup> (մլրդ եվրո)

	2006			2007		
	արտահոսք	ներհոսք	հաշվեմնացորդ	արտահոսք	ներհոսք	հաշվեմնացորդ
Բելգիա	49.9	57.0	-7.1	9,9	10,5	-0,6
Չեխիա	1.1	4.8	-3.7	0,3	0,8	0,5
Դանիա	6.5	5.6	0.9	7,0	2,7	4,3
Գերմանիա	63.3	34.2	29.1	51,7	1,4	50,3
Էստոնիա	0.8	1.3	-0.5	0,2	--	--
Իռլանդիա	17.6	10.2	7.4	6,2	20,9	-14,7
Ֆինլանդիա	-	-	-	2,5	0,2	2,3
Իսպանիա	71.5	16.0	55.5	25,2	3,0	22,2
Ֆրանսիա	86.7	58.0	28.7	34,7	23,4	11,3
Իտալիա	33.0	29.9	3.1	0,2	0,6	-0,4
Կիպրոս	0.6	1.2	-0.6	0,2	0,3	-0,1
Լատվիա	0.1	1.3	-1.2	0,1	0,3	-0,2
Լիտվա	0.2	1.4	-1.2	0,1	0,4	-0,3
Լյուքսեմբուրգ	65.0	77.3	-12.3	78,3	50,2	28,1
Ֆուրուգարիա	5.9	8.4	-2.5	6,6	11,2	-4,6
Մալթա	0.0	1.3	-1.3	--	0,2	--
Նիդերլանդներ	18.1	3.5	14.6	-6,4	5,2	-11,6
Սլովակիա	3.3	0.2	3.1	15,1	4,0	11,1
Լեհաստան	3.3	11.1	-7.8	1,1	1,9	-0,8
Պորտուգալիա	2.8	5.9	-3.1	1,7	1,3	0,4
Սլովենիա	0.6	0.3	0.3	0,8	0,2	0,6
Սլովակիա	0.3	3.3	-3.0	0,1	0,4	-0,3
Ֆինլանդիա	0.0	3.0	-3.0	0,7	0,8	-0,1
Շվեդիա	19.2	22.1	-2.9	32,0	10,0	22,0
Սեծ Բրիտանիա	63.6	110.9	-47.3	121,2	87,0	34,2
Բուլղարիա	0.1	4.1	-4.0	0,1	0,7	-0,6
Ռումինիա	0.0	9.2	-9.1	--	0,8	--

ՕՈՒՆ-երի ներհոսքի մեջ ևս 2007թ. ԵՄ 25 երկրները փոփոխություններ են ունեցել, օրինակ՝ Բելգիան և Իսպանիան այստեղ

<sup>70</sup> Merja Hult, Statistics in focus, economy and finance 115/2007, “Balance of payments” p. 3.

<sup>71</sup> Eurostat Press Office: EU 27 Foreign Direct Investment, 71/2008-19 May 2008, <http://ec.europa.eu/eurostat> .

ևս զգալի կրճատում են ունեցել, մոտ 5.5 անգամ, Գերմանիան իր ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ կրճատել է մոտ 25 անգամ, Իտալիան կրճատել է մոտ 50 անգամ, Ֆրանսիան՝ 2.5 անգամ: Չնայած Մեծ Բրիտանիան ևս 2007թ. այս ցուցանիշով անկում է ունեցել, այնուհանդերձ իր ՕՈՒՆ-երի ներգրաված 87 մլրդ եվրո տվյալով ԵՄ 25-ում զբաղեցրել է առաջին տեղը:

2001-2006թթ. ԵՄ 25 անդամ չհանդիսացող երկրներից ԵՄ նորանդամ 10 երկրներ ուղղված ՕՈՒՆ-երի բաժինը ընդհանուրում կազմել է ընդամենը 3.8%, իսկ 2005թ. եղել է ամենամեծ մասնաբաժինը՝ 4%, չնայած որ բացարձակ թվով լավագույն ցուցանիշը գրանցվել է 2006թ.՝ 5.6 մլրդ եվրո: 2007թ. այս ցուցանիշը դարձել է 15.7 մլրդ եվրո (գրեթե 3 անգամ ավելի, քան նախորդ տարի), որի արդյունքում այս երկրների մասնաբաժինը ընդհանուր ներհոսքի մեջ կազմել է արդեն մոտ 5%:

Ի տարբերություն ԵՄ 10 նորանդամ երկրների՝ ԵՄ 15 երկրները 2001թ. (142 մլրդ եվրո) հետո դրսից ՕՈՒՆ-երի ներգրավման ծավալներում անկում են ապրել, իսկ 2004թ. գրանցվել է ամենափոքր արդյունքը՝ 49.2 մլրդ եվրո: Եվ միայն 2006 և 2007թթ. է այս վիճակը մասամբ բարելավվել, և եթե 2006թ. այն մոտեցել է 2001թ. մակարդակին, ապա 2007թ., այս ցուցանիշն աճել էր մոտ 56%-ով:

Եթե դիտարկենք ԵՄ 25-ի ՕՈՒՆ-երի զուտ արտահանման հոսքերի տվյալները 2001-2007թթ. ընթացքում, ապա կնկատենք, որ 2001թ. ՕՈՒՆ-երի դրական հաշվեմնացորդը եղել է ամենամեծը՝ 160.3 մլրդ եվրո, իսկ 2002թ. այս ցուցանիշը կրճատվել է մոտ 21 անգամ (7.3 մլրդ եվրո), ինչը պայմանավորված էր ԵՄ 25-ից ՕՈՒՆ-երի արտահոսքի կտրուկ կրճատմամբ՝ մոտ 2.5 անգամ (306 մլրդ եվրոյից հասնելով 134 մլրդ եվրոյի): 2006թ. զուտ արտահանման հոսքերը ԵՄ 25 երկրների համար կազմել են 57 մլրդ եվրո, որը մոտ 38%-ով ավելի փոքր է, քան 2005թ. գրանցված ցուցանիշը, իսկ արդեն 2007թ. այն կազմեց մոտ 100 մլրդ, որը կրկնակի գերազանցում էր նախորդ տարվա ցուցանիշը: 2001-2007թթ. հոսքերը դրական արդյունք են ունեցել ԵՄ 15 երկրների համար, որոնք էլ հենց հանդիսացել են գլխավոր կապիտալ արտահանողները, իսկ ԵՄ նորանդամ 10 երկրները 2001-2007թթ. ընթացքում գերազանցապես ունեցել են բացասական հաշվեմնացորդ, բացառությամբ 2005թ., որի ընթացքում այն կազմել է 0.3 մլրդ եվրո, այն դեպքում, որ ԵՄ 15 երկրների դեպքում այս ցուցանիշը կազմել է 91.5 մլրդ եվրո: ԵՄ 15-ի շրջանակներում 2006թ. ամենա-

մեծ զուտ արտահանման հոսքերն ունեցել է Իսպանիան (56 մլրդ եվրո), որին հետևում են Գերմանիան և Ֆրանսիան (28-29 մլրդ եվրո), 2007-ին՝ Գերմանիան (50.3 մլրդ եվրո), Մեծ Բրիտանիան (34.2 մլրդ եվրո) և այլն: 2006թ. ամենամեծ զուտ ներհոսք ունեցող երկրներն են եղել Մեծ Բրիտանիան (-47 մլրդ եվրո), Լյուքսեմբուրգը (-12 մլրդ եվրո), Լեհաստանը (-8 մլրդ եվրո) և Բելգիան (-7 մլրդ եվրո), իսկ 2007թ.՝ Իռլանդիան (-14,7 մլրդ եվրո), Նիդեռլանդները (-11,6 մլրդ եվրո) և Ավստրիան (-11,1 մլրդ եվրո) (տես աղյուսակ 12):

ԵՄ 25 երկրների ՕՌԻՆ-երի արտաքին հոսքերը ուսումնասիրելիս կարևոր է նաև պարզել, թե հատկապես որ երկրներն են ԵՄ 25-ի հիմնական գործընկերը, այսինքն անհրաժեշտ է պատկերացում ունենալ 2001-2007թթ. ՕՌԻՆ-երի հոսքերի աշխարհագրական կառուցվածքի մասին: Ինչպես տեսնում ենք 2001-2007թթ. ընթացքում հիմնական գործընկեր երկրները, որոնք զգալի մասնաբաժին ունեն ԵՄ 25-ի ՕՌԻՆ-երի հոսքերում, վեցն են՝ ԱՄՆ, Շվեյցարիա, ճապոնիա, Կանադա, Ռուսաստան և Չինաստան: Մասնավորապես 2001թ. ԱՄՆ-ի, Կանադայի, ճապոնիայի և Շվեյցարիայի մասնաբաժինը ԵՄ 25-ի ՕՌԻՆ-երի արտահոսքում և ներհոսքում կազմել է համապատասխանաբար 53% և 71%: 2002-2007թթ. ընթացքում վերը նշված 6 երկրների մասնաբաժինը ԵՄ 25-ից ՕՌԻՆ-երի արտահոսքի ընդհանուր ծավալում կազմել է 47%, իսկ ներհոսքի մեջ միջին ցուցանիշը եղել է 62%: Այդ ընթացքում ամենամեծ ցուցանիշը գրանցվել է 2001թ. ԵՄ-ից ԱՄՆ ՕՌԻՆ-ի արտահոսքի դեպքում, որը կազմել է 158,7 մլրդ եվրո, կամ ընդհանուր արտահոսքի մոտ 52%-ը, 2006թ. այս երկրի մասնաբաժինը ՕՌԻՆ-ի արտահոսքում արդեն կրկնակի կրճատվել է՝ դառնալով 71,2 մլրդ եվրո կամ ընդհանուրի 35%-ը: ԵՄ-25 երկրներ ՕՌԻՆ-երի ներհոսքի ծավալներում ևս ամենամեծ մասնաբաժինը 2001-2006թթ. ընթացքում պատկանել է ԱՄՆ-ին, իսկ 2001թ. գրանցվել է ամենաբարձր ցուցանիշը՝ 79,6 մլրդ եվրո, կամ ընդհանուրի մոտ 55%-ը, իսկ 2007թ. այս ցուցանիշը աճել է մինչև 144.5 մլրդ եվրո՝ գերազանցելով 2001թ. ցուցանիշը մոտ 2 անգամ (ընդհանուրի մոտ 45%-ը): 2006թ. այս ցուցանիշը կազմել է 47,7 մլրդ եվրո կամ ընդհանուրի 33%-ը:

Եվրամիության և մնացած աշխարհի միջև ՕՌԻՆ-երի հոսքերի որակական կողմի բնութագրիչ կարող են հանդիսանալ այդ հոսքերի և պաշարների ճյուղային ուղղվածության ցուցանիշները և տվյալները:

Նշենք, որ ԵՄ ՕՈՒՆ-երի պաշարների բաշխվածությունը ըստ տնտեսության առանձին ոլորտների մնացել է հիմնականում անփոփոխ և բավականին համանման էր և՛ արտահանման, և՛ ներմուծման՝ պաշարներում: Ներդրումների առյուծի բաժինը ընկնում է ծառայություններին, որին հետևում է արտադրությունը:

Մեր կողմից արված վերլուծությունը ցույց է տալիս ԵՄ և արտաքին աշխարհի ինտեգրվածության և կապիտալ հոսքերի ակտիվության մակարդակը: Միաժամանակ ԵՄ ներսում երկրների միջև ՕՈՒՆ-երի ակտիվությունը և բաշխվածությունը ինտեգրվածության կարևոր ցուցանիշներից են, որոնք նաև տվյալ ինտեգրման խմբավորման միասնական տնտեսական քաղաքականության և զարգացման մակարդակն են արտացոլում: Այսինքն՝ որքան աճեն ներտարածաշրջանային ներդրումային հոսքերը, այնքան ավելի կհզորանա և տնտեսապես կմիաձուլվի տվյալ միության անդամ-երկրների կողմից ստեղծված միասնական տնտեսական համակարգը, որն իր հերթին արդյունավետ մրցակցային պայմաններ կստեղծի ինչպես տվյալ միության, այնպես էլ առանձին անդամ-երկրների համար:

### Աղյուսակ 13.

#### ՕՈՒՆ-երի հոսքերը ԵՄ 25 երկրների միջև և դրանց բաշխվածությունը

	2001	2002	2003	2004	2005	2006
<b>ԵՄ 25 երկրների ներսում ներդրումային հոսքերը</b> <sup>72</sup>	365.5	361.1	247.0	187.0	339.4	396.2
	100%	100%	100%	100%	100%	100%
<b>ԵՄ 15 երկրներից դեպի 10 նորանդամ երկրներ</b>	17.8	13.0	7.9	14.2	22.1	45.8
	4.9%	3.6%	3.2%	7.6%	6.5%	11.5%
<b>10 նորանդամ երկրներից դեպի ԵՄ 15 երկրներ</b>	1.1	1.3	0.7	4.3	8.3	-0.4
	0.3%	0.4%	0.3%	2.3%	2.4%	-
<b>ԵՄ 15 անդամների միջև</b>	346.2	345.8	237.4	173.0	307.8	355.3
	94.7%	95.7%	96.0%	92.5%	90.7%	89.7%
<b>10 նորանդամ երկրների միջև</b>	0.4	0.9	0.6	1.5	1.2	-
	0.1%	0.25%	0.2%	0.8%	0.3%	-

<sup>72</sup> 2001-ից 2005թթ. տվյալները վերցված են Merja Hult, Statistics in focus, economy and finance 21/2006, "Balance of payments" էջ 2, 2006-ինը՝ Merja Hult, Statistics in focus, economy and finance 115/2007, "Balance of payments" էջ 2:

Դիտարկելով վիճակագրական տվյալները (տե՛ս աղյուսակ 13)՝ կարող ենք ասել, որ ներդրումային հոսքերը ԵՄ 25-ի ներսում 2001 և 2002թթ. հետո կտրուկ նվազել են մինչև 2004թ-ը, իսկ արդեն 2005թ. իրավիճակը բավականաչափ բարելավվել է՝ հասնելով մինչև 339.4 մլրդ եվրոյի (2004թ. նկատմամբ աճել է մոտ 81%-ով): 2006թ. կրկին աճ է գրանցվել, և ներտարածաշրջանային ՕՌՆ-երի ծավալը հասել է 396.2 մլրդ եվրոյի: Ի դեպ, 2006թ. ԵՄ 25 երկրների ներսում ՕՌՆ-երի հոսքերը եղել են ամենաշատը, և նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է մոտ 17%:

ԵՄ 25 երկրների միջև ՕՌՆ-երի մակարդակը գնահատելու համար կարող ենք դիտել, թե կոնկրետ տարվա ընթացքում ԵՄ 25 երկրների միջև գրանցված ՕՌՆ-երի հոսքերը և ԵՄ 25 երկրների և արտաքին աշխարհի միջև ՕՌՆ-երի հոսքերը ինչպիսի ծավալներ են ունեցել, և ինչպիսին է վերջիններիս հարաբերակցությունը: Այսպես, եթե 2001թ. ԵՄ 25-ի և արտաքին աշխարհի միջև ՕՌՆ-երի հոսքը կազմել է 452 մլրդ եվրո, ապա ԵՄ 25 երկրների միջև այն կազմել է 365.5 մլրդ եվրո կամ 2001-ի 81%-ը: 2002թ. ԵՄ 25 երկրների միջև ՕՌՆ-երի հոսքերն արդեն կազմել են արտաքին աշխարհի հետ ունեցած ներդրումային հոսքերի 139%-ը, 2003թ.՝ 95%-ը, 2004թ.՝ 99%-ը, 2005թ.՝ 122%-ը, 2006թ.՝ 114%-ը: 2007թ. համար հաշվարկները կատարվել են ԵՄ 27 երկրների շրջանակներում, որի արդյունքում ստացել ենք հետևյալը՝ ԵՄ 27 երկրների ներքին ՕՌՆ հոսքերը (510.6 մլրդ եվրո) գերազանցել են արտաքին աշխարհի հետ ունեցած ՕՌՆ հոսքերը (370.0 մլրդ եվրո) մոտ 38%-ով:

ԵՄ 25-ի ներսում ՕՌՆ-երի հոսքերն ուսումնասիրելիս կարևոր է նշել, թե այդ հոսքերում ինչպիսի բաշխվածություն կա՝ ըստ հոսքերի ուղղությունների. ԵՄ 15 երկրների միջև, ԵՄ 15-ից դեպի ԵՄ 10 երկրներ, ԵՄ 10-ից ԵՄ 15 երկրներ և վերջապես ԵՄ 10 երկրների միջև: Այսինքն այն փաստը, որ ՕՌՆ-երի հոսքերի ակտիվացումը ներտարածաշրջանային երկրների միջև տարբեր կերպ է ընթացել, կապված է այն բանի հետ, թե հատկապես տարածաշրջանի որ երկրների խմբերի միջև են տեղի ունեցել կապիտալ հոսքերը, ինչը դիտարժան և շատ կարևոր է ընդհանուր ԵՄ 25-ի ներդրումային ակտիվությունն ուսումնասիրելու առումով: 2001-2006թթ. ընթացքում ԵՄ 25-ի ներտարածաշրջանային ՕՌՆ-երի հոսքերի ամենամեծ բաժինը՝ մոտ 93%-ը ընկել է ԵՄ 15 երկրների միջև ՕՌՆ-երի

հոսքերին: 2006թ. այս երկրների միջև ՕՈՒՆ-երի ծավալը եղել է ամենաբարձրը՝ 355.3 մլրդ եվրո, իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2004թ.՝ 173 մլրդ եվրո: Այս նույն ժամանակահատվածում ԵՄ 25-ի ներքին ՕՈՒՆ-երի հոսքերում իրենց մասնաբաժնի մեծությամբ երկրորդ տեղը (6.2%) պատկանում է ԵՄ 15-ից ԵՄ 10 երկրներ ուղղված ներդրումային հոսքերին, որոնք 2006թ. արդեն դարձել էին 45.8 մլրդ եվրո՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 2 անգամ: Իր մասնաբաժնով հաջորդը գալիս են ԵՄ 10-ից ԵՄ 15 երկրներ ուղղված ՕՈՒՆ հոսքերը, որոնք կազմում են ընդհանուրի մոտ 1%-ը, իսկ 2005թ. գրանցվել է ամենաբարձր ցուցանիշը՝ 2.4% (8.3 մլրդ եվրո): Ամենավերջին տեղն իր մասնաբաժնով պատկանում է ԵՄ 10 երկրների միջև ՕՈՒՆ-երի հոսքերին, որոնք 2001-2006թթ. ընթացքում կազմել են մոտ 5 մլրդ եվրո կամ ընդհանուրի մոտ 0.4%-ը:

2007թ. համար մենք կարող ենք նշել նաև թե հին և նոր անդամ-երկրներն ինչպիսի մասնաբաժին են ունեցել ԵՄ 27-ի ներքին ՕՈՒՆ-երի արտահոսքի և ներհոսքի ծավալներում: Նախ խոսենք ԵՄ 15 երկրների մասին, այսպես, 2007թ. ԵՄ 27 երկրներ ամենամեծ ՕՈՒՆ-երն են իրականացրել Ֆրանսիան (124.6 մլրդ եվրո, կամ ընդհանուր արտահոսքի մոտ 23%-ը), Գերմանիան (70.6 մլրդ եվրո, կամ ընդհանուր արտահոսքի մոտ 13%-ը), Իտալիան (63.9 մլրդ եվրո կամ ընդհանուր արտահոսքի մոտ 12%-ը), Իսպանիան (62.2 մլրդ եվրո կամ ընդհանուր արտահոսքի մոտ 11%-ը), Լյուքսեմբուրգը (54.6 մլրդ եվրո կամ ընդհանուր արտահոսքի մոտ 9.9%-ը), Մեծ Բրիտանիան (44.2 մլրդ եվրո կամ ընդհանուր արտահոսքի մոտ 8%-ը), իսկ մնացած երկրների ցուցանիշը չի գերազանցել 30 մլրդ եվրոն: ԵՄ 27-ի ներքին ՕՈՒՆ-երի ծավալներում ԵՄ 15 երկրներից հիմնական ընդունողներ են հանդիսացել Ֆրանսիան (86.1 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 18%-ը), Նիդեռլանդները (67.4 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 14%-ը), Մեծ Բրիտանիան (48.7 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 10%-ը), Լյուքսեմբուրգը (36.6 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 7.8%-ը), Իսպանիան (36.1 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 7.7%-ը), Գերմանիան (35.8 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 7.6%-ը), իսկ մնացած երկրների ցուցանիշները չեն գերազանցել 30 մլրդ եվրոն: Այսինքն՝ ԵՄ 15 երկրների ընդհանուր միջինացված բաժնեմասը ԵՄ 27-ի ներքին

ՕՈՒՆ-երի արտահոսքում և ներհոսքում մոտավորապես կազմել է համապատասխանաբար 93% և 84 %:

Ինչ վերաբերում է ԵՄ 27 ներքին ՕՈՒՆ-երի արտահոսքի ծավալներում ԵՄ 12 երկրների մասնակցության աստիճանին, ապա այն չափազանց փոքր բաժին է զբաղեցնում, որից 80%-ը բաժին է ընկնում Յունգարիային: Միայն Յունգարիան (19.2 մլրդ եվրո, կամ ընդհանուր արտահոսքի մոտ 3.5%-ը) և Լեհաստանն (1.3 մլրդ եվրո կամ ընդհանուր արտահոսքի մոտ 0.2%-ը) են կարողացել անցնել 1 մլրդ եվրոյի սահմանը: Ներքին ՕՈՒՆ-երի ներհոսքի ընդհանուր ծավալներում ԵՄ 12 երկրների բաժինը փոքր-ինչ բարելավված է: Այսպես, 2007թ. ԵՄ 12 երկրներից առաջատար ընդունող երկրներն են Յունգարիան (15.6 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 3.4%-ը), Լեհաստանը (10.9 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 2.3%-ը), Ռումինիան (6.5 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 1.4%-ը), Չեխիան (5.9 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 1.2%-ը), Բուլղարիան (5.4 մլրդ եվրո կամ ընդհանուր ներհոսքի մոտ 1.1%-ը), իսկ մնացած երկրների ցուցանիշը չի գերազանցել 2 մլրդ եվրոն: Այսինքն, ԵՄ 12 երկրների ընդհանուր միջինացված բաժնեմասը ԵՄ 27-ի ներքին ՕՈՒՆ-երի արտահոսքում և ներհոսքում կազմել է համապատասխանաբար 7% և մոտ 16 %:

Իհարկե, ԿԱԵ-ի երկրների միջև կան տարբերություններ ՕՈՒՆ-երի ներգրավման ծավալների առումով, բայց ընդհանուր հատկանիշներից է այն, որ Եվրամիության դերը բավականին մեծ է պորտֆելային, ինչպես նաև ՕՈՒՆ-երի ներգրավման գործընթացներում: 1997թ. ԿԱԵ-ի 7 երկրներում (առանց Ռումինիայի, Բուլղարիայի և Յունգարիայի) ԵՄ-ի կողմից իրականացված պորտֆելային, ինչպես նաև ՕՈՒՆ-ի ծավալները կազմել են 18.4 մլրդ եվրո՝ այդպիսի ներդրումների ներգրավման ընդհանուր ծավալների մոտ 66%-ը, իսկ արդեն 2000թ. այն կազմել է 59 մլրդ եվրո կամ ընդհանուր գումարի մոտ 80%-ը<sup>73</sup>:

ԿԱԵ-ի երկրներ ԵՄ-ից ներգրաված ՕՈՒՆ-երի տարբեր ծավալներից բացի, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ներդրումներն իրականացվել են հիմնականում տնտեսության տարբեր հատվածներում: ԿԱԵ-ի երկրներում նույնպես ներդրումներն իրականացվել են հիմնականում արդյունաբերության ճյուղե-

<sup>73</sup> “Расширение и углубление европейской интеграции” МЭМО, 2004, N7, стр. 26.

րում: Այնուամենայնիվ ԿԱԵ երկրներում (հատկապես 5 առավել զարգացած) այն մեծապես կապված էր հետարդյունաբերական ճյուղերում ՕՈՒՆ-ի ներգրավման հետ՝ հատկապես ԵՄ երկրներից, որոնք կառուցված էին արտադրության կառուցվածքային նոր մոդելի վրա, այսինքն՝ արագ զարգանում էին հիմնականում վերամշակող արդյունաբերության ճյուղերը (տրանսպորտային մեքենաշինություն, էլեկտրոտեխնիկա, օպտիկական սարքաշինություն, ինչպես նաև փայտամշակում, ռետինե և պլաստմասսայե սարքավորումների արտադրություն, քիմիական արդյունաբերություն): Այս էր պատճառը, որ ընդհանուր առմամբ ԿԱԵ-ի երկրներում վերամշակող արդյունաբերության գծով արտադրությունն աճել էր զգալիորեն ավելի արագ, քան ԵՄ երկրներում, իսկ ԿԱԵ-ի առավել զարգացած երկրներում արդյունաբերությունը նույնիսկ կարողացավ մասնավորապես վերականգնել իր նախկին դիրքերը, որը բարեփոխումների, սեփականաշնորհման ակտիվ և արդյունավետ միջոցառումների արդյունքն էր, որոնց զուգահեռ հետևում էր ՕՈՒՆ-ի ներգրավումը: ԶԳ-ն արդյունաբերության ոլորտում ՕՈՒՆ-երի ներգրավման ճյուղային ոլորտներով ավելի մոտ է Բուլղարիային և Ռումինիային: Օրինակ, Բուլղարիայում զարգացում է ապրել հիմնականում մետաղամշակման, վառելիքային և ծխախոտային արդյունաբերությունը, որի հետ կապված 90-ական թթ. սկսած՝ Բուլղարիայի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում լուրջ փոփոխություններ տեղի չեն ունեցել, իսկ արտահանման գծով մեծացել է ցածր մշակվածության և բարձրորակ աշխատուժ չպահանջող ապրանքների բաժինը՝ հունք, վառելիք, էլեկտրաէներգիա, կիսաֆաբրիկատներ, մետաղներ և այլն, Ռումինիայում ևս արտահանման մեջ մեծ ծավալ են կազմել տեքստիլի, գործվածքների, մետաղածուլական, նավթային արդյունաբերության ճյուղերը:

ԵՄ 12 նորանդամ երկրների փորձի կիրառումը ԶԳ-ի համար ենթադրում է մի շարք միջոցառումների իրականացում և համապատասխան քաղաքականության որդեգրում: Հատկանշական է, որ այդ երկրներում իրականացվող տնտեսական և քաղաքական 37 վերափոխումներից 30-ը, որոնք կարգավորող բնույթի էին, նպատակ ունեին աջակցել ՕՈՒՆ-երի իրականացմանը: Այս միջոցառումները վերոնշյալ երկրներում ներառում են սեփականաշնորհման և ազատականացման գործընթացները, հարկերի իջեցումը, մարքեթինգային գործունեության կատարելագործումը: Ազատականացման


գործընթացը դեռևս շարունակվում է, որը հիմնականում ուղղված է օտարերկրյա ներդրողներին ներդրումային արտոնությունների և նոր հնարավորությունների տրամադրմանը: Լատվիայի ու Մալթայի կառավարությունները, օրինակ, վաճառեցին պետական սեփականության մի մասը, Ալվակիայի նոր կառավարությունը դադարեցրեց հետագա սեփականաշնորհման գործընթացը: Տեղի ունեցան նաև հետագա ազատականացումը և պաշտպանված արտադրությունների բացումը: Օրինակ, Եվրոպական Պառլամենտը երաշխավորեց ԵՄ-ի Ծառայությունների Դիրեկտիվը, որը, ինչպես սպասվում է, պետք է խթանի ՕՈՒՆ-երի ներգրավումը ծառայությունների ոլորտ: Ավստրիայում մի նոր օրենք ընդունվեց, որը թույլ է տալիս օտարերկրյա ավելի շատ ներդրողներ ներգրավել և միաձուլել կազմակերպությունները: Եվ չնայած այդ առումով ՕՈՒՆ-երի ներգրավման նախկին քանակական սահմանափակումները հանվել են, սակայն ներդրումներն արտադրության ոլորտում պահանջում են կառավարության համաձայնությունը:

Անդրադառնալով ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ-ի ներհոսքին՝ կարող ենք փաստել, որ ՕՈՒՆ-ի զգալի աճ սկսել է գրանցվել՝ սկսած 2006թ. (տե՛ս գծանկար 18)<sup>74</sup>: 2008թ. ՕՈՒՆ-ի ծավալը, 2005թ. մակարդակի հետ համեմատած, աճել է գրեթե չորս անգամ՝ 2008թ. կազմելով 925.3 մլն դոլար: Սակայն 2009թ. ՕՈՒՆ-ի ծավալի զգալի անկում է նկատվել, որը հավանաբար կապված է գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ: Այսպես, 2009թ. ՕՈՒՆ-ի ծավալը, համեմատած 2008թ. հետ, կրճատվել է 24.3%-ով: Այստեղ հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ 2008-2009թթ. ընկած ժամանակահատվածում համաշխարհային տնտեսության մեջ նկատվել է ՕՈՒՆ-ի ծավալի զգալի կրճատում<sup>75</sup>: Մյուս կողմից, կարող ենք փաստել, որ հանրապետություն ներհոսող ՕՈՒՆ-ի աշխարհագրական կառուցվածքում ԵՄ երկրների դերն այնքան էլ մեծ չէ (գծանկար 19):


<sup>74</sup> Այս հատվածից սկսած՝ վերլուծությունը կատարել է Գ.Հայրապետյանը:

<sup>75</sup> UNCTAD/PRESS/PR/2009/001.rev1.

Գծանկար 18  
 ՕՌԲ-ի դինամիկան 2000-2008թթ. (մլն դոլար)<sup>76</sup>



Գծանկար 19.  
 ՕՌԲ-ի ներհոսքը, ըստ հիմնական երկրների, 2006թ. (մլն դոլար)<sup>77</sup>



<sup>76</sup> Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, [www.mfe.am](http://www.mfe.am) :

<sup>77</sup> Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008:

Հանրապետություն ներհոսող ՕՈՒՆ-ի աշխարհագրական կառուցվածքի վերաբերյալ ավելի մանրամասն պատկերացում կազմելու համար դիտարկենք մաքուր պաշարները 2007թ. վերջին: Այսպես, մաքուր պաշարներով առաջին տեղում է Ռուսաստանը (ավելի քան 1 մլրդ դոլար), երկրորդ տեղում՝ Գերմանիան (184.9 մլն դոլար), երրորդ տեղում՝ Ֆրանսիան (182 մլն դոլար), չորրորդ տեղում՝ ԱՄՆ-ը (180 մլն դոլար) և վերջապես հինգերորդ տեղում է Կանադան (125.6 մլն դոլար)<sup>78</sup>: Այսինքն, եթե դիտարկենք առաջին հնգյակին, ապա ՕՈՒՆ-ի ծավալով ԵՄ երկրներից այդտեղ առանձնանում են միայն Գերմանիան և Ֆրանսիան: Մեր կարծիքով ԵՄ երկրներից ՕՈՒՆ-ի հոսքերի ավելացումը կխթանի մրցակցությունը և զգալի աշխուժություն կնտցնի ՀՀ տնտեսության մեջ՝ ապահովելով ավելի տարբերակված տնտեսություն: Այս ենթատեքստում 2008թ. ԵՄ կողմից նախաձեռնված նոր Արևելյան գործընկերության ծրագիրը բավական խոստումնալից նախապայմաններ է ստեղծում ԵՄ երկրներից ՕՈՒՆ-ի ծավալի ավելացման համար:

Մյուս կողմից, արտաքին կոնֆլիկտի գործոնով պայմանավորված, բարձր ռիսկայնությունն իր ազդեցությունն է ունենում ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ-ի հոսքի վրա ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների մակարդակում<sup>79</sup>: Օտարերկրյա ներդրողներն ունեն բազմաթիվ այլընտրանքային հնարավորություններ՝ ներդնելու իրենց միջոցներն այլ երկրներում, քանի որ նրանց ներդրումային որոշումները հիմնականում պայմանավորված են հարաբերական ռիսկայնության և այլընտրանքային հնարավորությունների գնահատումով: Մյուս կողմից մի շարք տեղական ներդրողներ, մասնավորապես նրանք, ովքեր տիրապետում են հարաբերականորեն խոշոր կապիտալ միջոցների, նույնպես հնարավորություն ունեն ներդնելու արտասահմանյան ակտիվներում: Կան մի շարք հետազոտություններ, որոնցում ցույց է տրվում, որ ՕՈՒՆ-ի հոսքը դեպի Հայաստան զգալի փոքր է, քան կարող էր իրականում լինել, և դրա

---

<sup>78</sup> Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008:

<sup>79</sup> 1999-2006թթ. ընկած ժամանակաշրջանում Հայաստանը դասվել է աշխարհի 10 ամենառիսկային (արտաքին կոնֆլիկտ) երկրների շարքում՝ միջին առումով գրավելով 8-րդ տեղը (աղբյուր՝ International Country Risk Guide Indicators, <http://www.countryrisk.com/>):

հիմնական պատճառներից մեկը բարձր ռիսկայնությունն է<sup>80</sup>:

Չնայած 2007թ. զարգացող երկրների համար ՕՈՒՆ-ի տեսանկյունից համարվում էր ռեկորդային տարի, արդեն 2008թ. սկսած՝ ՕՈՒՆ-ի հոսքերը դեպի զարգացող երկրներ զգալի կրճատվեցին՝ պայմանավորված գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամով: Այս համատեքստում ՕՈՒՆ-ի հոսքերը դեպի Հայաստան միանշանակ կկրճատվեն, սակայն մեր կարծիքով ՕՈՒՆ-ի կրճատման բացասական հետևանքները կարելի է առավելագույնս մեղմել, եթե հանրապետություն ներգրավվող ՕՈՒՆ-ի աղբյուրների աշխարհագրական կառուցվածքը ընդլայնվի: Այս դեպքում, եթե առանձին տարածաշրջաններ որոշակի խնդիրներ ունենան (օրինակ՝ 1998թ. Ասիական ֆինանսական ճգնաժամը կամ ներկայիս գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը), ապա մյուս տարածաշրջաններից կշարունակվի ՕՈՒՆ-ի հոսքը: ՀՀ տնտեսության համար, մեր կարծիքով, շատ կարևոր է ընդլայնել ՕՈՒՆ-ի ներգրավումը ԵՄ երկրներից, քանի որ վերջին տասնամյակում համաշխարհային տնտեսության մեջ ԵՄ համարվում է ամենադինամիկ զարգացող տարածաշրջաններից մեկը: Ավելին, Գերմանիայի և Ֆրանսիայի կառավարություններն արդեն պաշտոնապես հայտարարել են, որ հաղթահարել են գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները, և նրանց տնտեսություններն արդեն դեպի վերականգնում են գնում:

Ընդհանուր առմամբ համաշխարհային տնտեսության մեջ ՕՈՒՆ հոսքերը հիմնականում ուղղվում են դեպի այն երկրներ և տարածաշրջաններ, որտեղ կապիտալից ստացվող հատույցը առավելագույնն է՝ հաշվի առնելով հարաբերական աշխատավարձի մակարդակը, տեղական շուկայի տարողունակությունը, քաղաքական ռիսկը և այլ գործոններ, որոնք ազդում են կամ կարող են ազդել կապիտալի սպասվող հատույցի վրա: Այստեղ հարկ է նշել, որ այս ամբողջ գործընթացի վրա իր ազդեցությունն է թողնում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, և այլ հավասար պայմաններում տեղական շուկայի տարողունակությունը կարևոր գործոն է դառնում ՕՈՒՆ-ի ներգրավման համար: Սակայն հնարավոր է, որ այս գործոնի կարևորությունը մեղմանա, եթե դա փոխհա-

---

<sup>80</sup> Brada, Josef, Ali M. Kutan, and Taner M. Yigit (2005). "The Effects of Transition and Political Instability on Foreign Direct Investment in ECE Emerging Markets".

տուցվի արտահանման հարաբերական փոքր ծախսերով: Հարկ է նշել, որ Հայաստանի ներքին շուկան բավական փոքր է, իսկ արտահանման ծախսերը զգալի բարձր են Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանի առկայության հետևանքով: Այս ենթատեսքստում կարող ենք նշել, որ վերջին շրջանում ՀՀ և Թուրքիայի միջև քաղաքական հարաբերությունների զարգացման փորձերը կարող են լուրջ հիմք հանդիսանալ երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման համար: Մեր կարծիքով, Հայաստանի և Թուրքիայի միջև կարգավորված քաղաքական և տնտեսական հարաբերությունների հաստատումը կարող է հետագայում հիմք հանդիսանալ Հայաստանի և Ադրբեջանի միջև քաղաքական և տնտեսական հարաբերությունների զարգացման համար՝ դրանով իսկ բացառելով բարձր ռիսկայնության (արտաքին կոնֆլիկտ) առկայությունը ՀՀ տնտեսության համար:

Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու ՀՀ ջանքերը պետք է ընդգրկեն նաև ԵՄ ներդրումային միջավայրին սերտաճման և եվրոպական կապիտալի ներգրավման համար խթանող նախապայմանների ստեղծումը, որը, ինչպես տեսնում ենք, նոր անդամակցած երկրների ունեցած հաջողությունների և ձեռքբերումների գլխավոր հիմնաքարերից մեկն է եղել:

## ԿԵՐԶԱԲԱՆ

Ժամանակակից արևմտաեվրոպական տնտեսական ինտեգրման առաջին քայլերն արվել են 1951թ., երբ Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Բելգիան, Նիդեռլանդները, Լյուքսեմբուրգը Փարիզում ստորագրեցին Աժիի և պողպատի Եվրոպական միության համաձայնագիրը: Իսկ 1992թ. Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ էին արդեն 12 երկիր, որոնք, կնքելով Մասստրիխտի պայմանագիրը, ազդարարեցին Եվրոպական ինտեգրացիայի ժամանակակից փուլը:

1990-ական թթ. սկզբներին Եվրամիության ու Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների միջև կնքվեցին առևտրի և համագործակցության համաձայնագրեր, որոնց շնորհիվ 2004թ. կայացավ Եվրամիության ամենամեծ ընդլայնումը՝ անդամ պետությունների թիվը 15-ից հասցնելով 25-ի, իսկ 2007թ.՝ 27-ի. ԵՄ անդամ դարձան նաև Ռումինիան և Բուլղարիան:

Տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրների արդյունավետ ինտեգրացիայի համար անհրաժեշտ էր, որ այդ երկրներն ունենան փոխլրացման բավարար մակարդակ: Ուստի կարևոր էր ուսումնասիրել, թե ԿԱԵ երկրների փոխադարձ արտահանման ծավալները մինչև ԵՄ անդամակցելը և անդամակցությունից հետո ինչպիսի փոփոխություններ են կրել:

Կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ մինչև ԵՄ անդամ դառնալը ԿԱԵ երկրներն, ընդհանուր առմամբ, չունեին աշխատանքի միջազգային բաժանման և համեմատական առավելությունների վրա հիմնված փոխլրացնող առևտրային հոսքեր, սակայն անդամակցությունից հետո 10 երկրներից յուրաքանչյուրի համախառն արտահանման ծավալները ցուցաբերել են աճի միտում:

Փոխադարձ առևտրի ծավալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ԿԱԵ երկրները, ԵՄ անդամակցությունից հետո մի քանի անգամ ավելացնելով իրենց փոխադարձ արտահանման ծավալները, կարողացել են ձեռք բերել փոխլրացման բավարար մակարդակ, որպեսզի դրանց տնտեսություններն արդեն հնարավոր

լինի համարել ինտեգրված: Միևնույն ժամանակ, արտահանման ապրանքային կառուցվածքի վերլուծությունից պարզ է դառնում, որ արտահանման մեջ փոքր ծավալ են կազմում միանման ապրանքների հակադարձ հոսքերը, ինչը դրական է ազդում առևտրի ծավալների վրա և թույլ է տալիս առևտրային հարաբերությունները կառուցել՝ հենվելով համեմատական առավելությունների սկզբունքի վրա:

Հետազոտությունից երևում է, որ Հայաստանը և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրները աչքի չեն ընկնում կազմակերպված ու փոխլրացման բավարար մակարդակ ունեցող արտաքին առևտրային հարաբերություններով: Դա կարելի է բացատրել նախ նրանով, որ ԿԱԵ երկրների մեծ մասը, ՀՀ-ին համանման, նախկին սոցիալիստական համակարգի երկրներ են, որոնք մինչ այժմ չունեն արտաքին առևտրի կազմակերպված հոսքեր և երկրորդ, ԿԱԵ երկրներն ունեն արտաքին առևտրի այնպիսի գործընկերներ, ինչպիսին Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրներն են, որոնց հետ առևտուրն ազատ է: Ուստի ներմուծման ենթակա բոլոր հնարավոր ապրանքներն այս երկրները կնախընտրեն ներմուծել հենց Արևմտյան Եվրոպայից, իսկ ՀՀ-ն արտահանման իր թույլ ներուժով կարող է ծառայել միայն որպես իրացման շուկա: Արտաքին առևտրի ծավալների և կառուցվածքի մանրակրկիտ ուսումնասիրությունից անմիջապես պարզ է դառնում, որ ՀՀ և ԿԱԵ երկրները կարծես «փնտրտուքի» մեջ են: Մի շարք ապրանքներ, որոնք արտահանվել են 2006թ. (օրինակ՝ «Ձկներ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Կաշի և կաշվե հումք» ապրանքախմբերը) վերջին տարիներին դադարել են արտահանվել: Կամ հակառակը, առանձին երկրներից տվյալ ապրանքի ներմուծում չի եղել, իսկ հետագայում հասել է մեծ չափերի, օրինակ, «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքախումբը: Սա խոսում է այն մասին, որ երկրները դեռ չունեն կազմակերպված առևտրային հոսքեր, դեռ չեն բացահայտվել համեմատական առավելություններով օժտված այն ճյուղերը, որոնց շուրջ առևտուրը կարող է լինել կայուն և բերել բավարար արդյունքներ:

Արտաքին առևտրին վերաբերող հարցերում (ներառյալ ԱՀԿ կարգավորումները) ԵՄ, գործում է որպես մեկ միասնական դերակատար: Այսինքն, առևտրային համաձայնագրերում միակ իրավասու մարմինը Եվրոպական հանձնաժողովն է, որը բանակցում և

ներկայացնում է եվրոպական շահերը ԵՄ 27 անդամ-երկրների անունից:

Կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ ԵՄ ապրանքների համաշխարհային առաջատար արտահանող և ներմուծող է: Բացի այդ ԵՄ երկրների արտաքին առևտրի զգալի մասը բաժին է ընկնում ԵՄ երկրների ներքին առևտրին (ԵՄ երկրների փոխադարձ առևտուր): ԵՄ ներքին շուկան եվրոպական երկրների տնտեսություններն էլ ավելի է կապում իրար, և անդամ-երկրների միջև առևտուրը զգալի տեմպերով աճում է: Անընդհատ ընդլայնվող ԵՄ ներքին շուկան խոշոր գործարարությանը հնարավորություն է տալիս: Միևնույն ժամանակ փոքր ու միջին գործարարության համար նոր արտահանման շուկաներ են ի հայտ գալիս, որոնք նախկինում «անհասանելի» էին ծախսերի առումով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած ՀՀ-ԵՄ արտաքին առևտրային կապերը մինչև միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամը ունեին անշեղ աճի միտում, սակայն ներմուծման ծավալները մշտապես գերազանցել են արտահանման ծավալներին, այսինքն՝ ՀՀ առևտրային հաշվեկշիռը ԵՄ հետ ունեցել է բացասական սալդո: ՀՀ-ԵՄ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքն ունի կենտրոնացման բարձր աստիճան, ուստի անհրաժեշտ է առևտրատնտեսական հարաբերությունները խորացնել ԵՄ անդամ բոլոր երկրների հետ: Միաժամանակ ՀՀ-ԵՄ առևտրի ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ցույց տվեց, որ այն ունի անկազմակերպ, իրավիճակային բնույթ, ուստի կարևորում ենք եվրասիատեգրման հարցերով զբաղվող բարձրագույն գերատեսչության ստեղծումը, որը կդառնա ինտեգրացիոն գործընթացները համակարգող մարմին և իրավասու կլինի արտաքին առևտրային հարաբերությունները կառուցել փոխլրացման, մասնագիտացման խորացման հիմքի վրա: Վերլուծելով ՀՀ և ԵՄ արտաքին առևտրի կառուցվածքը և ծավալները՝ գտնում ենք, որ առևտրային հարաբերությունների զարգացման համար կարևոր դեր կարող է խաղալ ռազմավարական առևտրային քաղաքականության իրականացումը: Մեր երկրի համար դրա նպատակը պետք է լինի տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների զարգացումը, որը պահանջում է չափավոր լրավճարների տրամադրման միջոցով գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման աջակցում: Քանի որ ՀՀ-ԵՄ արտաքին առևտրի

խթանման հիմնական խոչընդոտներից է տրանսպորտային գործոնը, ուստի առաջարկում ենք թանկարժեք ապրանքատեսակների արտահանման խթանում, որոնց արտահանման տնտեսական արդյունավետությունը պայմանավորված է գործարքների արժեքում տրանսպորտային փոքր ծախսումներով: Ներկա ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում դա միանգամայն արդարացված է:

ԵՄ հետ ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեն առևտրատնտեսական հարաբերությունների խորացումը ԵՄ անդամ, ինչպես նաև ԵՄ կառույցների հետ, ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ ընդհանուր օրենսդրությանը, հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի մոտեցումը եվրոպական չափանիշներին: Հայաստան-Եվրամիություն առևտրային հարաբերությունների խթանման համար պետք է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- պետական ակտիվ քաղաքականության իրականացում, որն ուղղված կլինի Հայաստանի և հայ արտադրողի ճանաչմանը Եվրամիության շուկայում,
- պետական քաղաքականություն՝ ուղղված արտադրանքի որակի բարձրացմանը՝ համապատասխանեցնելով այն միջազգային ստանդարտներին և ԵՄ շուկայի պահանջներին,
- մաքսային և հարկային համակարգերում բարեփոխումների իրականացում,
- ներդրումների ներգրավմանն ուղղված խթանման քաղաքականության իրականացում,
- ԵՄ շուկայի մասին տեղեկատվության մատչելիության բարձրացում,
- առևտրային խոչընդոտների մեղմացում,
- բեռնափոխադրման ոլորտում մրցակցության առկայություն:

Կատարված հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանից ԵՄ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում մետաղները, որոնք հիմնականում արտահանվում են Գերմանիա և Նիդեռլանդներ: Հայաստանից ԵՄ արտահանվում են նաև թանկարժեք քարեր, որոնք ներմուծվում են, վերամշակվում և վերարտահանվում ԵՄ (մասնավորապես Բելգիա): ԵՄ-ից Հայաստան ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել մեքենաները և սարքավորումները, փոխադրամիջոցները, իսկ Հայաստանը ԵՄ-ից ներմուծում է նաև թանկարժեք քարեր, քիմիական ապրանքներ,

սննդամթերք, տեքստիլ իրեր և այլն: ԵՄ հիմնական գործընկերերկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում զգալի կենտրոնացում է նկատվում Բելգիայի և Նիդեռլանդների հետ արտաքին առևտրում, Բելգիայի հետ՝ բացառապես թանկարժեք քարերի գծով, իսկ Նիդեռլանդների հետ՝ հատկապես մետաղների գծով: Գերմանիայի, Իտալիայի, Հունաստանի և Ֆրանսիայի հետ արտաքին առևտրում նկատվում է հարաբերականորեն որոշակի տարբերակվածություն (հիմնականում ներմուծման գծով): Չնայած նրան, որ ՀՀ և ԵՄ միջև հարաբերությունները գնալով զարգանում են, ՀՀ և ԵՄ միջև իրականացվող արտաքին առևտուրը չի զարգանում իր հնարավոր արդյունավետությամբ: Մասնավորապես, ԵՄ հետ արտաքին առևտրի արտահանման կառուցվածքում գրեթե բացակայում են պատրաստի սպառողական ապրանքները (բացառությամբ Իտալիայի հետ արտաքին առևտրի): Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել այն փաստով, որ հայկական սպառողական ապրանքները ենթարկվում են գնային և որակական բարձր մրցակցության ԵՄ երկրների շուկաներում: Այս սահմանափակումը կարելի է հետագայում բացառել համատեղ ձեռնարկությունների ստեղծման և ԵՄ երկրներից օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ: ԵՄ երկրների ձեռնարկատերերի հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծումը և օտարերկրյա ներդրումների ավելացումը թույլ կտան Հայաստանին հաղթահարել առկա տեխնոլոգիական բարդությունները և արտադրել մրցունակ արտադրանք:

Կարևոր նշանակություն ունեն ԵՄ երկրների դեսպանատներում առևտրի գծով ներկայացուցիչների առկայությունը և նրանց գործի ակտիվացումը, ինչպես նաև ցուցահանդեսների և գործարար ֆորումների կազմակերպումը: Հայ գործարարները տեղեկատվության լուրջ պակաս են զգում ԵՄ շուկայի վերաբերյալ: Այդ գործում կարևոր է էլեկտրոնային տվյալների բազայի ձևավորումը, ինչը հնարավորություն կտա ստանալ ճշգրիտ կոնկրետ տեղեկություններ ԵՄ շուկայի մասին, այնտեղ գործող ստանդարտների, որակի նկատմամբ պահանջների, արտոնությունների և այլնի վերաբերյալ: Արտահանման խրախուսման գործում շատ կարևոր է ստեղծել հատուկ մասնագիտացված արտահանմանն աջակցող մասնագիտացված մարմին, որի գործունեության ոլորտում առանձնակի տեղ պետք է զբաղեցնեն արտաքին առևտրային հարցերը ԵՄ

երկրների հետ: ԵՄ երկրների հետ Հայաստանի առևտրատնտեսական կապերի զարգացման գործում կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև համատեղ և փոխադարձ մարքեթինգային հետազոտությունների իրականացումը, արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպումը, ՀՀ և ԵՄ երկրների գործարարների պարբերաբար հանդիպումները, համապատասխան անհրաժեշտ տեղեկատվության փոխադարձ տրամադրումը և այլն: Կարևոր ենք համարում նաև հետազոտել ԵՄ և Հայաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման համալիր միջոցառումների հարցերը՝ առևտրային, ֆինանսատնտեսական, հարկային, մաքսային և այլ բնագավառներում հնարավոր արտոնությունների տեսանկյունից, ինչը իր հերթին կարող է նպաստել ՀՀ տնտեսության մեջ ԵՄ-ից ներդրումների ավելացմանը, դրանց ներգրավման և օգտագործման հիմնահարցերի բարելավմանը: Ավելին, հաշվի առնելով ԵՄ-ում առկա առաջընթացը ռեսուրսախնայող, գիտատար, տեխնոլոգիատար արտադրությունների զարգացման բնագավառներում, տեղայնացնել այդ փորձը ՀՀ տարածքում, ինչը վերջին հաշվով կնպաստի տնտեսական ինտեգրացիայի խորացմանը ԵՄ հետ:

Չնայած այն հանգամանքին, որ վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ տնտեսության արտաքին ապրանքաշրջանառության հարաբերակցությունը ՀՆԱ-ին թեև նվազել է, սակայն կազմել է զգալի մեծություն՝ 2007թ. 52.8%, ինչը ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսությունը բավական ինտեգրված է համաշխարհային տնտեսությանը: 2000-2008թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՀ արտաքին պարտքը գրեթե կրկնապատկվել է, սակայն 2008թ. կազմել է ՀՆԱ-ի ընդամենը 13.2%-ը: Ավելին, եթե հաշվի առնենք 2008թ. սկիզբ առած ֆինանսական ճգնաժամի հետևանքով ՀՀ կառավարության արտաքին պարտքի ավելացումը և ՀՆԱ-ի հավանական կրճատումը 2009թ.՝ կապված ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ, ապա արտաքին պարտքի բաժինը ՀՆԱ-ում զգալի կաճի: ՀՀ ֆինանսական համակարգի բարելավման, մասնավորապես արտաքին պարտքի հետագա ավելացումը զսպելու կամ կրճատելու համար, որպես ածանցյալ նախապայմաններ կարող են հանդիսանալ ներդրումային դաշտի բարելավումը և ՕՈՒՆ-ի ներհոսքի ավելացումը: Իհարկե, արտաքին պարտքի բարձր մակարդակը բացասական երևույթ է, սակայն ՀՀ-ն իր արտաքին պարտքի մեծությամբ

դասվում է ցածր արտաքին պարտքի մեծություն ունեցող երկրների թվին: Հարցն այն է, որ կառավարությունը ֆինանսատնտեսական ճգնաժամի դեմ պայքարելու համար ստիպված պետք է ավելացնել իր արտաքին պարտքը: Միաժամանակ, պետք է մշակվի հստակ գործողությունների ծրագիր, և վեր հանվեն այն հիմնական ոլորտները, որոնք այդ լրացուցիչ միջոցների կարիքն ունեն: Ընդ որում, այդ ոլորտներին աջակցություն պետք է ցուցաբերվի առանց խախտելու մրցակցության սկզբունքները՝ ոլորտի միայն որոշ ձեռնարկությունների լրավճարներ տրամադրելով, ինչը վերջիններիս շուկայում արտոնյալ կարգավիճակ է շնորհում:

Անդրադառնալով ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ-ի ներհուսքին՝ կարող ենք փաստել, որ ՕՈՒՆ-ի զգալի աճ սկսել է գրանցվել սկսած 2006թ.: 2008թ. ՕՈՒՆ-ի ծավալը 2005թ. մակարդակի հետ համեմատած աճել է գրեթե չորս անգամ՝ 2008թ. կազմելով 925.3 մլն ԱՄՆ դոլար: Մյուս կողմից, պարզվել է, որ հանրապետություն ներհուսող ՕՈՒՆ-ի աշխարհագրական կառուցվածքում ԵՄ երկրների դերն այնքան էլ մեծ չէ: ՕՈՒՆ-ի պաշարներով առաջին տեղում է Ռուսաստանը (ավելի քան 1 մլրդ դոլար), երկրորդ տեղում՝ Գերմանիան (184.9 մլն դոլար), երրորդ տեղում՝ Ֆրանսիան (182 մլն դոլար), չորրորդ տեղում՝ ԱՄՆ-ը (180 մլն դոլար) և վերջապես հինգերորդ տեղում է Կանադան (125.6 մլն դոլար): Այսինքն, եթե դիտարկենք առաջին հնգյակին, ապա ՕՈՒՆ-ի ծավալով ԵՄ երկրներից այդտեղ առանձնանում են միայն Գերմանիան և Ֆրանսիան: Մինչդեռ, ԵՄ երկրներից ՕՈՒՆ-ի հոսքերի ավելացումը կիսբանի մրցակցությունը և զգալի աշխուժություն կմտցնի ՀՀ տնտեսության մեջ՝ ապահովելով ավելի տարբերակված տնտեսություն: Այս ենթատեքստում 2008թ. ԵՄ կողմից նախաձեռնված նոր Արևելյան գործընկերության ծրագիրը բավական խոստումնալից նախապայմաններ է ստեղծում ԵՄ երկրներից ՕՈՒՆ-ի ծավալի ավելացման համար:

Տարբեր գործոններով պայմանավորված բարձր ռիսկայնությունն իր ազդեցությունն է թողնում ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ-ի հոսքի վրա ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների մակարդակում: Այսպես, 1999-2006թթ. ընկած ժամանակաշրջանում Հայաստանը դասվել է աշխարհի 10 ամենառիսկային երկրների շարքում՝ գրավելով 8-րդ տեղը: Այստեղ հարկ է նշել, որ այլ հավասար պայմաններում տեղական շուկայի տարողունակությունը

կարևոր գործոն է ՕՈՒՆ-ի ներգրավման համար: Սակայն հնարավոր է, որ այս գործոնի կարևորությունը մեղմանա, եթե դա փոխհատուցվի արտահանման հարաբերական փոքր ծախսերով: Հարկ է նշել, որ Հայաստանի ներքին շուկան բավական փոքր է, իսկ արտահանման ծախսերը զգալի բարձր են մասնավորապես թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանի առկայության հետևանքով: Այս ենթատեսքստում կարող ենք նշել, որ վերջին շրջանում ՀՀ և թուրքիայի միջև քաղաքական հարաբերությունների զարգացման փորձերը կարող են լուրջ հիմք հանդիսանալ երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման համար: Հայաստանի և թուրքիայի միջև կարգավորված քաղաքական և տնտեսական հարաբերությունների հաստատումը կարող է հետագայում հիմք հանդիսանալ Հայաստանի և Ադրբեջանի միջև քաղաքական և տնտեսական հարաբերությունների զարգացման համար՝ դրանով իսկ բացառելով բարձր ռիսկայնության առկայությունը ՀՀ տնտեսության համար:

Հայաստանի բանկային համակարգում մինչև օրս նախապատվությունը տրվում է ԱՄՆ դոլարին, որը շատ վառ արտահայտվում է բանկերի կողմից ավանդների ներգրավման գործընթացում: Այսպես, այլ հավասար պայմաններում դոլարային ավանդների տոկոսադրույքը շատ ավելի բարձր է, քան եվրոյով ավանդներինը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին շրջանում (2009թ. առաջին եռամսյակից սկսած) ԱՄՆ կառավարությունն իր ֆինանսական միջոցների պակասուրդը լրացնելու համար ավելացրել է դոլարի էմիսիան, որը բերել է ԱՄՆ դոլարի արժեզրկմանը եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՊՀ երկրների հետ համեմատած, գնալով զարգանում են ՀՀ արտաքին տնտեսական հարաբերությունները եՄ երկրների հետ, ապա շատ ավելի նպատակահարմար կլիներ, որպեսզի ՀՀ-ում հավասարապես նախապատվությունը տրվեր ինչպես ԱՄՆ դոլարին, այնպես էլ եվրոյին: Ավելին, նպատակահարմար և արդյունավետ կլիներ, եթե ՀՀ-ում ազատ լողացող արժուրթային ռեժիմի փոխարեն կիրառվեր որոշակի սահմաններում տատանվող ազատ լողացող արժուրթային ռեժիմ, ինչը զգալի կնվազեցներ տնտեսության մեջ անորոշության մակարդակը: Մյուս կողմից, ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում շատ ավելի նպատակահարմար կլիներ, եթե հակաինֆլյացիոն (խիստ/զսպող)

դրամավարկային քաղաքականությունից անցում կատարվեր դեպի «խթանիչ» դրամավարկային քաղաքականություն: Այս դեպքում ինֆլյացիայի դեմ պայքարը հետին պլան է մղվում, և առաջնային խնդիր են դառնում տնտեսական աճի խթանումը և վարկային ռեսուրսներից օգտվելու հնարավորության ընդլայնումը:

Եվրոյի միջազգային դերակատարությունն առաջնահերթ ի հայտ է գալիս այն պետություններում, որոնք լայն տնտեսական, առևտրային և ֆինանսական կապեր ունեն ԵՄ հետ: Դրանց շարքում նշենք վերջերս ԵՄ անդամ դարձած Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, Ռուսաստանը, ինչպես նաև ՀՀ-ն: Այսպես, օրինակ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, մինչ անդամակցելը, իրենց ազգային արժույթները կապում էին գերմանական մարկի հետ, ուստի եվրոյի ծագման պայմաններում նրանք ոչ մի այլընտրանքային տարբերակ չունեին: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, Լեհաստանի, Չեխիայի, Սլովակիայի և այլ պետությունների մասնավոր հատվածները եվրոյի անմիջական թողարկումից հետո սկսեցին իրենց ֆինանսատնտեսական գործունեությունը ԵՄ հետ իրականացնել միայն միացյալ արժույթով, որն այդ ժամանակ ավելի ճկուն էր և հեշտ էր հարմարվում նման զարգացող պետությունների տնտեսություններին: Միջազգային ասպարեզում եվրոյի կիրառության նման միտումները կրում էին աստիճանական բնույթ, որն արդյունք էր Բրեթոն-Վուդսյան կոնֆերանսից հետո դոլարի՝ համաշխարհային փողի ֆունկցիայի իներցիոն երկարաձգման: Կանխիկ եվրոյի լայնամասշտաբ օգտագործումը կրճատում է համապատասխան գործարքային և տեղեկատվական ծախսերը:

Եվրոյի օգտագործումը, որպես պետական պահուստ, հիմնականում կապված էր ասիական երկրների կենտրոնական բանկերի վարած քաղաքականության հետ, քանի որ դրանց է պատկանում աշխարհի պաշտոնական ռեզերվների զգալի մասը, որոնք հիմնականում արտահայտված էին ԱՄՆ դոլարով: Դա պայմանավորվում էր նրանով, որ մինչև 1997թ. ասիական ճգնաժամը, ասիական արժույթներն ամրակցված էին դոլարին, որի պատճառն էլ պատշաճ այլընտրանքի բացակայությունն էր: Այժմ պատկերը միանգամայն փոխվել է. ասիական երկրների կենտրոնական բանկերը, հատկապես վերջին տարվա ընթացքում, զգալի փոփոխություններ են անում իրենց պահուստներում եվրոյի օգտին, քանի որ եվրոն այսօր դի-

տարկվում է որպես ավելի կայուն արժույթ: Նման բանկերում եվրոյի կուտակման հիմնական նպատակը փոխանակային փոխարժեքների կանոնակարգումն է և ռիսկերի դիվերսիֆիկացիան:

ՀՀ ԿԲ-ը ուղղակի կապ չունի եվրոպական արժութային համակարգի հետ: Վերջիններս միայն առնչվում են ՀՀ-ում եվրոյի շրջանառության կարգավորման և արժութային փոխարժեքի քաղաքականության առումներով: ՀՀ ԿԲ-ի կողմից առաջին լուրջ միջոցառումը ազգային պահուստների դիվերսիֆիկացումն էր հոգուտ եվրոյի, իսկ այնուհետև բանկային համակարգի կայունության ապահովման նպատակով եվրոյով արտահայտված բանկային գործառնությունների իրականացման խթանումն էր: ՀՀ-ում եվրոն այսօր ունի բավականին ծավալուն շրջանառություն, որն ապահովվում է ԵՄ-ի հետ առևտրի և մասնավոր հատվածի ունեցած կապերի միջոցով: Նկատելի է դառնում նաև ՀՀ տարբեր ապրանքային շուկաներում առաջարկվող ապրանքների գների եվրոյով արտահայտված լինելը: Հազարավոր հայ ձեռներեցներ, կապված հայկական դրամի և դոլարի փոխարժեքի տատանումների հետ, վերջին ժամանակներս իրենց ցանկությունն են հայտնում եկամուտները ստանալ եվրոյով:

Ինչպես ցույց տվեց կատարված հետազոտությունը, օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) ավելի մեծ ազդեցություն են ունեցել ԵՄ կոնկրետ տարածաշրջանների և երկրների տնտեսությունների ինտեգրման, տնտեսական զարգացման աճի վրա, քան տարածաշրջանային քաղաքականության հիմքով իրականացվող ֆինանսական օժանդակությունները: Իսպանիայի, Պորտուգալիայի, Իռլանդիայի և Հունաստանի համար ՕՈՒՆ-ը ավելի մեծ նշանակություն է ունեցել, քան տարածաշրջանային օգնությունները ԵՄ-ի կողմից, այն դեպքում, որ, օրինակ, Հունաստանը ավելի շատ միջոցներ է ստացել կառուցվածքային հիմնադրամներից, քան ՕՈՒՆ-ի շրջանակներում:

ՀՀ և ԵՄ երկրների տնտեսական համակարգի մեջ ինտեգրման կարևոր պայման են կապիտալ հոսքերը, դրանց խթանումը և առկա վիճակի վերլուծությունը: Ընդհանրապես համաշխարհային տնտեսության շրջանակներում ԵՄ-ը ՕՈՒՆ-երի դոնոր է և ռեցիպիենտ տարածաշրջան: Բացի այդ շատ կարևոր են ԵՄ հին անդամ երկրներից դեպի նոր անդամ երկրներ իրականացվող ՕՈՒՆ-երի հոսքերը: Տվյալ գործընթացի ուսումնասիրությունը ուսա-

նելի է ՀՀ-ի համար ԵՄ երկրներից իրականացվող ներդրումների հոսքերի կարգավորման տեսանկյունից:

ՀՀ-ում 2008թ. դեկտեմբերից մինչև 2009թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի ծավալները 315949 մլն ՀՀ դրամից հասան 229423 մլն ՀՀ դրամի, այսինքն՝ փոփոխությունը կազմեց 86526 մլն ՀՀ դրամ: Այս տվյալներից ակնհայտ է դառնում, որ շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի ծավալները նվազում են ամսեամիս աճող տեմպերով, ինչը նպաստում է նաև ամբողջական պահանջարկի կրճատմանը: Այսինքն՝ ՀՀ-ում արագացող տեմպերով կրճատվում է ամբողջական պահանջարկը, և ճգնաժամի հետագա խորացումից խուսափելու համար անհրաժեշտ է նախ և առաջ լուծում տալ հենց այս խնդրին: Ամբողջական պահանջարկի աճին կարելի է նպաստել հիմնականում պետական ծախսերի ավելացման միջոցով: Դրա համար միջազգային կազմակերպությունների և պետությունների (այդ թվում Եվրոպական) կողմից ճգնաժամի հաղթահարման նպատակով տրամադրված վարկերի նկատմամբ պետք է սահմանել խիստ հսկողություն: Անհրաժեշտ է շարունակել վերաֆինանսավորման տոկոսադրույքի հետագա կրճատումը: Բացի այդ նպատակահարմար է պարտադիր պահուստային նորման կրճատել, ինչը հնարավորություն կտա բանկերին ունենալ ավելի մեծ դրամական միջոցներ և մեծացնել վարկավորման ծավալները:

Պետական ծախսերի աճը նախ և առաջ, հավանաբար, նպատակահարմար է իրականացնել նպաստների և թոշակների որոշակի բարձրացման տեսքով, ինչը պետք է լինի որպես հետևանք նվազագույն սպառողական զամբյուղի վերանայման, քանզի մեր շուկայում նկատվում է ինչպես սպառողական զամբյուղում մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ու ծառայությունների, այնպես էլ հանրային ծառայությունների գների աճ: Ճգնաժամից զգալիորեն տուժած հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներին տրված ՀՀ կառավարության աջակցությունն արդեն իսկ գնահատելի է: Նմանատիպ միջոցառումներ անհրաժեշտ է իրականացնել նաև տնտեսության մյուս ոլորտներում, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Ինչ վերաբերում է հարկերին, ապա նպատակահարմար ենք համարում փոքր և միջին ձեռնարկությունների համար և հատկապես նրանց նկատմամբ, որոնք ունեն արտահանողական ներուժ (մասնավորապես եվրո-

պական շուկայի տեսանկյունից), սահմանել արտոնյալ հարկեր: Բացի այդ բնակչության գնողունակ պահանջարկն ապահովելու նպատակով անհրաժեշտ է որոշ չափով կրճատել անձնական եկամտահարկը՝ բարձրացնելով չհարկվող եկամտի շեմը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ օգնություն պետք է ցուցաբերել միայն այն բանկերին և կազմակերպություններին, որոնք ունեն ժամանակավոր դժվարություններ, բայց միևնույն ժամանակ մնում են վճարունակ: Այսինքն, հնարավոր է, որ այժմ այդ կազմակերպությունները շահույթներ չեն ստանում, սակայն կարող են հետագայում մարել վարկերը: Այդ փորձը վկայում է, որ առանց որևէ չափանիշի և հաշվեկշռի վիճակին ուշադրություն դարձնելու օգնություն տրամադրելը չի արագացնում և չի հեշտացնում ճգնաժամից դուրս գալու գործընթացը: Հակառակը, այսպիսի քաղաքականությունը մեծացնում է կորուստները ընթացիկ ճգնաժամից և բարձրացնում է ապագայում նոր ճգնաժամի առաջացման հավանականությունը, քանի որ այն խանգարում է առկա ռիսկերի ճիշտ գնահատմանը և հետևաբար առկա ռիսկերի պայմաններում տնտեսական գործունեության ճիշտ վարմանը: Բացի այդ տրամադրվող օգնությունը պետք է բաժանվի պետության և տվյալ կազմակերպության սեփականատերերի միջև, քանի որ երբ պետությունն իր վրա է վերցնում կազմակերպությունը ճգնաժամից դուրս բերելու ամբողջ բեռը, տեղի է ունենում հարկատուների միջոցների չարդարացված փոխանցում կազմակերպության սեփականատերերին: Տրամադրվող օգնությունը պետք է ուղղված լինի նաև առևտրատնտեսական կապերի հետագա զարգացմանը, հատկապես հիմնական գործընկերների առումով, օրինակ, ԵՄ երկրների հետ:

Անդրադառնալով ՀՀ ԵՄ անդամակցության խնդրին, մեր կարծիքով, եթե Հայաստանի Հանրապետության տարեկան միջին աճի տեմպերը պահպանեն իրենց երկնիշ բնույթը, ապա համախառն ազգային արտադրանքի 1 շնչին ընկնող ցուցանիշով Հայաստանը կարող է հասնել ԵՄ միջին մակարդակին, իսկ դա նշանակում է, որ հեռանկարում Հայաստանը կարող է հավակնել ԵՄ անդամակցությանը: Միաժամանակ գերխնդիր է մնում Հայաստանում թողարկվող ապրանքների մրցունակության բարձրացումը միջազգային շուկայում, արտահանվող ապրանքների դիվերսիֆիկացիան: Բացի այդ հանրապետության համար կարևոր նշանակություն ունեն ֆինանսական համակարգի հետագա բարեփոխում-

ները, որոնք հնարավորություն կտան արտասահմանից եկող կա-  
յուն և մեծածավալ տրանսֆերտները վերափոխել ներդրումների:  
Տնտեսական աճի հիմնական գործոնը պետք է դառնա արտաքին  
շուկան, քանի որ ներքին շուկան խիստ սահմանափակ է: Նշենք,  
որ ԵՄ քաղաքականությունը Կովկասում ունի տարածաշրջանային  
բնույթ. այսինքն՝ ԵՄ-ն ցանկանում է իր կազմում տեսնել արդեն  
տնտեսապես ինտեգրված Կովկաս, և այն, որ Հայաստանը իր  
տնտեսական զարգացմամբ էապես տարբերվում է: Ըստ էության  
ԵՄ անդամակցումը մի կողմից ՀՀ համար կբացի հսկայական  
եվրոպական շուկան, մյուս կողմից անպաշտպան կարող է մնալ ՀՀ  
շուկան, որը ստիպված կլինի դիմակայել հզոր եվրոպական ֆիր-  
մաների մրցակցությանը: Այս պարագայում ՀՀ տնտեսական օգուտ-  
ները և վնասները մեծապես պայմանավորված կլինեն ՀՀ տնտե-  
սության հետագա զարգացման տեմպերից և եվրոպական շուկա-  
յում մինչև անդամակցումը արդեն որոշ ապրանքների գծով մրցակ-  
ցային առավելության առկայությունից: Այս ամենը հնարավոր է  
միայն ՀՀ տնտեսական ներուժի ճիշտ գնահատման և մրցակցային  
առավելություններ ունեցող ճյուղերի զարգացման շնորհիվ:

Ամփոփելով մշենք ՀՀ-ի անդամակցությամբ պայմանավոր-  
ված կխթանվեն հետագա ներդրումները, ինչը հնարավորություն  
կտա մեծապես ընդլայնել ներքին շուկան, իսկ սա իր հերթին պայ-  
մաններ կստեղծի արտահանման աճի համար: Հայաստանը կարող  
է գրավիչ դարձնել նաև որպես Եվրամիության անդամ պետություն-  
ների ընկերությունների համար կապալառու հիմունքներով աշխա-  
տող տնտեսություն: Ընդ որում ներդրումները բնապահպանության  
բարելավման, տրանսպորտային կապերի բարեկարգման և գյու-  
